Բարի

ՍՍՀՄ ԳԱ
9368
Digitised by

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— * * * . . . . . Նոյայր Ադալեան

2.— * * * . . . . . Վկայութիւններ

3.— Ն. ԱԴԱԼԵԱՆ . . . . . Կապոյտ Երգնկա

14.— Կ. ՇԱՀԻՆԵԱՆ . . . . . Տարագրութիւն

17.— Մ. ԻՇԽԱՆ . . . . . Մշակոյթի պահակներ

23.— Պ. ՀԵՐԵԱՆ . . . . . Բառը...

30.— Ց. ՕՇԱԿԱՆ . . . . . Սահակ Պարգեւեան

47.— * * * . . . . . Ցուսատու ձեռնարկ

49.— * * * . . . . . Հաստատումներ

52.— Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . . . . Մայրենի լեզու, գրականութիւն, ուսուցիչ

55.— * * * . . . . . Վկայութիւններ

56.— Կ. ՄԵՀԵԱՆ . . . . . Օնդիկէն մինչեւ Վազգէն

59.— ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ . . . . . Նամակներ

70.— Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . Զէկ Լոնդոն

74.— Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ . . . Ամմանֆի արուեստը եւ Տիկին Շ. Ցովակիմեան

75.— Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ . . . . Զարեհ Մուքաֆեանի *«Նկարչութեան դասական դպրոցները եւ արդի նկարչութիւնը»*

77.— * * * . . . . . Մշակութային լուրեր

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻՒ 5 ՄԱՅԻՍ 1983 ՊԷՅՐՈՒԹ

Վաթսունական թուականներուն հայրենի գրական մամուլը եւ ապա հրատարակչատուները ողողած դէմքերէն է Նորայր Ազալեան, նոյն տարիներուն տապարէգին մէջ մուտք գործած շուրջ երեք տասնեակ անուններուն մէջ սակաւ ընտրեալներէն մէկը, որ ստորագրած իր առաջին պատմուածքներով խիստ ուշադրութիւն գրաւեց եւ, «Նոր ամառ» (1965) վիպակէն ետք, հաւակնիկ քանի մը ուրիշներու հետ՝ դարձաւ միւս հոլովուող անուն մը՝ չրջանը ընդգրկող տեսական թէ վիճաբանական բնոյթի գրութիւններուն երկայնքին։

Արդակին ատրիթեր՝ Նորայր Ազալեան խիստ նուազ քննադատութեան մարդը եւ անտարակոյս կը դանուի քննադատներու վերջին սերունդին ամէնէ՛ն քանքարաւոր ներկայացուցիչներուն շարքին՝ իր ամբարած մշակոյթով, լուսնով ու յանդգնութեամբ։ Ընդունելի է իր մօտ մասնաւորաբար մնայուն արժէքներու խորքային ու սնամէան զաղտնիքները բացայայտելու բեղուն ապագայը, որ նոյն առեն հէնքը եղաւ գրական նոր երեւոյթները կշռելու իր չափանիշը։ Հետաքրքրական պիտի ըլլար առանձնացնել իր գաւառանքներէն մէկը, շատ որոմ՝ «Այն գրականութիւնը, որը աշխարհագրական սահմաններ չի ճանչնար՝ երբեմ չի կարող խանգարել աշխարհագրական սահմանները»։

Մեր եւ օտար գրականութեանց գլուխ-գործոցներով իր ճշմարտութիւնը հաստատած այս դաւանանքին կենսատու լուսնը զգալի է մանաւանդ իր՝ Նորայր Ազալեանի ստեղծագործական էջերուն մէջ, որոնք, նոյնի բանիւ, հետաքրքրութեամբ ընկալուեցան թէ՛ հայ ընթերցողներուն եւ թէ այլոց կողմէ, թարգմանուեցան ռուսերէնի եւ արժանացան քննադատներու խանդավառ ընդունելութեան։

Նոր հպարտութիւն մը կ'ապրի այսօր մեր ժողովուրդը, — հայրենիքի վերանորոգ եղերքին ասթած թերկրանքը, ու անհանգչելի մորմոք մը, կարօտը բռնագրաւուած եղերքին, բայց աչքով տեսնուածին ու փակ աչքով պատկերուածին խաչաձեւ յուզումները։ Նորայր Ազալեանի վերջին չրջանի լաւագոյն ստեղծումներուն շաղախը կու գայ երկու այդ բեւեռներուն ակունքներէն։

Նորայր Ազալեան ծնած է Երիմ, 1936ին։ Աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղին հայկական բաժինը եւ հեղինակ է ութ հատորներու։

Իր ուրոգրիներուն արտայայտութիւններէն քաղուած քանի մը վկայութիւններու հետ, յանկարծող էջերուն կը ներկայացնենք պատմուածք մը «Մենախօսութեան ժամերգ» անուն անոր վերջին գործէն, որ արժանացաւ Դ. Դեմիրճեանի անուան մրցանակին։

digitised by A.R.A.R.@

Նորայր Ադալյանը ձգտում է պարզ, համառոտ, լայնաշունչ, նախնական խօսքի, ուր քառակուսակումները, բազմաթիւ մակդիրների միաժամանակեայ կիրառումը, համանման վիճակների ու արտայայտութիւնների սեւական թուարկումը չեն խախտում խօսքի կազմակերպման ներդաշնակութիւնը, քանի որ այս բոլոր ստորոգիչները միակ նպատակն է հետապնդում, ձգտել վերջաւորեալ ճշմարտութեան, պատել երեւոյթը։ ...Ցառեաթ այդ յաջողում է հեղինակին, որովհետեւ նրան անծանօթ չէ բառի ատաղձագործը, որի շնորհիւ նա այդպիսի դէպքերում ճշգրտութիւնից բխեցնում է նաեւ յոյզը, այն անհրաժեշտ տարրը, առանց որի խօսքը կը զրկուէր իր դեղարուեստական հմայքից։

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

(«Սովետական գրականութիւն», 1965, թիւ 12)

Ն. Ադալեանը փորձել է ստեղծել ժամանակակից հերոսի սմբողիկան կիրպարը, միեւնոյն ժամանակ, նպատակ տրձակի ժանրի հնարաւորութիւնների ընդլայնմանը մեղմանում։ Ոգեշնչել պէտք է հեղինակին նման հմարձակ ձեռնարկի համար, որովհետեւ հայ արձակի մէջ, ի տարբերութիւն պոեզիայի, ընչին քայլաութիւնները չհաշուած, զգացում է ոճերի եւ ձեւերի միապաղաղութիւն, մինչդեռ էքսպերիմենտի խիզախութիւնը որքան թարմ օդ եւ նոր հորիզոններ կարող է բերել մեր արձակին, մանաւանդ՝ որ ինքը կեանքն է պահանջում բազմազան մտեցումներ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

(«Գարուն» 1973, թիւ 5)

Արժէքաւորն այն է, որ Ադալեանը չշաւիղում է ժամանակակից կոնկրետ երեւոյթներ, այն, ինչը շրջապատում է մեզ, ստեղծում մեր կեանքի ֆոնը։ Սրճարաններ, զօրանոցներ, գրասայլեր, լաբորատորիաներ, եւայլն։ Այս ատօրեայի նկատմամբ տարածութիւն ստանալու համար հեղինակը իր հերոսին տեղափոխում է զօրանոց, ստժամանակ կարում նրա կապերը եւ հնարաւորութիւն տալիս վերամատնել իր ոչ հեռաւոր անցեալը։ Այս կոնկրետացումը, իրականութեան յոյսնարերումը մեր երիտասարդական արձակի տարին արժանիքն է, նրա բնորոշ կողմը։

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

(«Գարուն», 1972, թիւ 11)

Ն. Ադալեանը, ի հակադրութիւն Զ. Խալափեանի եւ Վ. Գեւորգեանի, չի թափանցում կեանքի ծակոտիների մէջ, նա հաչտ ու խաղաղ տարամագրութեամբ ներկայացնում է իրավիճակը այնպէս՝ ինչպէս կայ, նրա մօտ գրեթէ վերանում է անհաշտութեան եւ բանավիճելու կիրքը։ Բայց այս ամէնը մեծ մասամբ արտաքուստ, որովհետեւ նա կայուն, որոշակի լուծումներ չի ուզում որոնել եւ ամէն ինչ թողնում է ընթերցողի սեփական կռահումներին։ Նա ներկայացնում է վիճակը եւ ընթերցողին ու հերոսներին թողնում մենութեան մէջ, ուր նրանք պէտք է հեղինակից անկախ ինքն մի ներքին երկխօսութիւն։

ԴԱՒԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

(«Գարուն», 1973, թիւ 2)

Ն. Ադալեանի «Ցնոնդաատաքեան ժամանակը» մտքեր է արթնացնում, հարկադրում զբաղուել ու մտահոգուել քննադատութեան դժուարին գիտութեան ճակատագրով։ Թող որ մի չարք դէպքերում վիճայարոյց եւ մասամբ նաեւ անընդունելի, բայց ողնի մտահոգութեամբ համակուած նրա սեւակէտներն ու առաջադրութիւնները հնարաւորութիւն են տալիս հասկնալ ու ըմբռնել կարեւոր այն տեսաշարժները, որ այսօր տեղի են ունենում գրական քննադատութեան մէջ, եւ, ելնելի, որոշում գրականագիտութեան վաղուայ օրը։

ԿԱՐԼԻԷ ԴԱՆԻԷԼԵԱՆ

(«Սովետական գրականութիւն», 1978, թիւ 7)

digitised by A.R.A.R.@

Ն. ԱԴԱԼԵԱՆ

ԿԱՊՈՅՏ ԵՐԶՆԿԱ

Նա վաղուց էր սկսել այդ աշխատանքը եւ ուր որ է աւարտելու էր։ Ճաշատեղանին փռուած մեծ, ոսկեայ թղթի վրայ գծագրուած էր մի ամբողջ քաղաք։ Շատ տներ միայնակեան էին, տափակ տանիքներով, երբեմն՝ հող ու կաւ։ Բակերը իրարից բաժանուած էին ցանկապատերով, դրանք էլ էին անշուք, միայն հատուկենտ տներ էին նուրբ ու գեղեցիկ պատպարուած։ Այդ քառակուսիները, ոլոր-մոլոր գծերն ու շրջանակները ձեւաւորում էին նեղ, ծուռումուռ փողոցներ եւ բաւականին ընդարձակ մի հրապարակ։ Ցանիքների վերեւ ոլոցիկ բարդիներն էին եւ եկեղեցիների խաչակիր գմբէթները։ Քաղաքը հին էր, ասես պեղումներից աչքը բացած, եւ թւում էր հեռաւոր, երանելի տարածութիւն ժամանակի յաւերժութեան մէջ։..

Մերուներն ճարտարապետ կամ նկարիչ չէր, հացթուխ էր նա եւ ծերութեան պատճառով արդէն քանի տարի թոդել էր արհեստը, բայց կարողացել էր ապաւորիչ պատկեր ստեղծել, իւրաքանչիւր գիծը շնչում էր, կարծես խօսում, քեզ հաղորդելով սրտամօտ, անբացատրելի ինչ-որ բան։

— Քիչ մնաց, վայը, միւս օրը կ'աւարտեմ,— ասաց ծերունին, յետոյ արտասանեց բառեր, որ քաղաքի պատկերը ստեղծելու ամբողջ ընթացքում կրկնում էր։ — Ոսկեգոծ շրջանակի մէջ եմ դնելու, կախելու եմ ննջարանի մեր անկիւնում՝ մահճակալի վերեւը, որ քնած ժամանակ էլ տեսնեմ։

— Փակ աչքո՞վ... — ինչպէս միշտ՝ հարցրեց կինը, փոքրամարմին, ձիւնի պէս ճերմակ ու փխրուն մի պառաւ, բայց դա աւելի առարկութիւն էր, քան հարց։

— Երզնկան փակ աչքով էլ կարելի է տեսնել, կոյր աչքով էլ։ Երզնկան տեսնելու համար աչք բնաւ պէտք չէ։

Նա քթի սապատին նստած ակնոցի տակից խէթ-խէթ նայեց կնոջը, յետոյ փոքրիկ դանակի ծայրով թիթեղէ ամանից վերցրեց մանրագեղ խաչը, որ շոքոլատի թղթից էր ձեւել, զգուշօրէն սոսինձ քսեց ու դրեց եկեղեցիներից մէկի գմբէթին։ Բոլոր խաչերը արծաթեայ էին եւ իսկական արծաթի նման պսպղում էին լուսամուտից սեղանին ընկնող արեւի շողերում։

Պառաւը բրդեայ թելից գուլպայ էր գործում Հեռաւոր Արեւելքում զինուորական ծառայութեան մէջ գտնուող թոռան համար։ Գլուխն ու աչքերը խոնարհուել էին չիզերին, բայց միտքը թափառում էր ամուսնու նկարած քաղաքի փողոցներում։ Նրա հոգում կար վաղուց՝ դեռեւս քաղաքի առաջին հիմնադիր գծերը քաշելու ժամանակից, բուն դրած մի զգացմունք, որ այժմ լուռ ու համր երգում էր լաց լինելով։

digitised by A.R.A.R.@

— Նարեկեան վարժարանի եռեւում դանուող այս տունը ո՞ւմն էր։ Աղջիկը փչաոեն կոր, յիշո՞ւմ ես, որի անուշահոտութիւնը տարածւում էր ամբողջ Թաղում։ Զարմայր Սանդիկեանինը չէ՞ր,— հարցրեց Ծերունին։

— Սանդիկեանը կենտրոնական վարժարանի եռեւն էր ապրում,— ասաց պառաւն առանց գլուխը բարձրացնելու,— Սուրբ Երրորդութիւն եկեղեցու մօտ։ Փչաոի ծառը Թուարանութեան ուսուցիչ Տէր Մեսրոպ քահանայ Թորոսեանինն էր։

Մերունին գունաւոր մատիտների տուփից հանեց կապոյտը եւ Տէր Մեսրոպի կակիկ ցանկապատուած տան առջեւ նկարեց երեք ճիւղ. դա փչաոենին էր, որի ծաղիկների բոյրը նա մինչեւ հիմա էլ զգում էր իր ներսում։

Նա դանդաղ, մոլորուածի պէս պտըտուեց Նարեկեան վարժարանի շուրջը եւ երրանցքներով, կարճ ճանապարհով հասաւ Գանթարիս չարչուսի՝ նը-պարեզէնի շուկայ, որ գտնուում էր հայ եւ Թուրք Թաղերի միջեւ։

— Լեբլեբիջիները ահա այստեղ էին նստում,— մտքում յիշեց Ծերունին, բայց յուշն ստացուեց բարձրաձայն։ — Երէ՞ք մարդ էին, Թէ չորս... ամէն մէկը իր լեբլեբին էր գովում, ինչ աքանչելի լեբլեբի էր, փչրւում-հալւում էր բերանիդ մէջ, մնում էր մեղմ, Թեթեւ շաքարահամը։

— Նրանք հինգն էին, երեք հայ եւ երկու յոյն,— ասաց պառաւը։ — Ամենաքաջգրահամ լեբլեբին մօրուքաւոր յոյներինն էր, նա միշտ նրանից էի առնում։ Մօրուքաւոր յոյնը գործածում էր փոքրիկ, կլոր, սեւ ապակիներով ակնոց, կարելի էր կարծել՝ կոյր է, բայց նա կոյր չէր։ Նա ուրախ, բարի մի մարդ էր եւ շատ էր սիրում երեխաներին։ Երբ երեխայ էր առջեւը, նա լեբլեբին միշտ ծանր-ծանր էր կշռում։

Մերունին գարմացած շրջուեց կնոջ կողմը. ինչպէ՞ս նա կարողացաւ լսել իր մտքի զգացմունքը։

Հիմա Ծերունու գլխում այդ յուշը փաղորդեան լոյսի պէս թարմ էր ու պայծառ։ Ամէն կէսօրի նա ուսելիք էր տանում հօրը՝ Կարապետ աղային, որ փոստատան էր ժամի հրապարակում։ Տաղիաւոր Թուչիինակի կապոցը ձեռքին, արտեզ ջրալի ճաշից բացի լինում էր սոխ եւ պանիր, առանց որոնց հայրը չէր կարողանում հացի նստել. նա անցնում էր Սարգիս էֆէնդիենց ծառաչատ փողոցով, Սուրբ Փրկիչ եկեղեցու մօտ ջուր խմում սառնորակ աղբիւրից, ապա մտնելով ձախակողմեան նեղ, ոլորապտոյտ փողոցը՝ քար նետում բակերից մէկում չզթայուած շան վրայ (ինչպէ՞ս էր անունը) եւ, առանց կանգնելու, գագաթած շան հաչոցը ականջներում, վազում-վազում մինչեւ փոի պուռը։ Հայրը խաղաղ ու յոգնաբեկ ճուչում էր՝ աթոռակին նստած, յանախակի կում անելով սառը կժից, իսկ ինքը նայում էր նրան ու երազում շուտ մեծանալ, հօր պէս բեղ-մօրուք կապել եւ փոստատան դառնալ։ Կարապետ աղան, ճաշն աւարտելով, երբեմն մի պղնձադրամ էր տալիս տղային, գրկում, բարձրացնում վերեւ, պտչպչում ճակատը, աչքերը, քիթը, յետոյ բաց թողնում ազատակի նման. «Թռիր արտիդ ուղածն առ»։ Մանելով շուկայ, նրա մանկական հոգին երջանկանում էր ախորժահամ հոտերից, վառուուն գոյներից, աչխոյժ, խնդուն ձայներից, որոնք նրան կանչում էին իրենց մօտ։ Բայց նա մօտենում էր յոյներին, որը սեւ ակնոց ունէր եւ երկար մօրուք։ «Մեր լեբլեբին գնիր,— ասում, ծիծաղում էին հայերը,— այս ի՞նչ ազգագաւութիւն է»։ Այնուամենայնիւ, նա լեբլեբին յոյներից էր առնում, որովհետեւ (Ծերունու կրծքից երանութեան մի հաւաչ էլաւ) նրանը կախարդանքի պէս էր, ոնց որ լեբլեբի չլինէր, այլ ուրիշ բան, զգուշօրէն պիտի դնէիր լեղուիդ վրայ, աչքդ փակէիր ու մնայիր նրա քաղցր բուրմունքի հետ։

Մերունու շուարուն հայեացքը սեղանին ինչ-որ բան էր որոնում։ Ահա փոքր ու մեծ մկրատները, դանակը, ռեակինը, սիգարէթի տուփը, մատիտ-

digitised by A.R.A.R.@

ները, մոխրամանը, լուցկին, խոշորացույցը, ահա եւ տարբեր ձեւի ու չափի քանոնները, կարկինը, Թոռան նամակը, որ առաւօտեան էին ստացել, ձեռքի ժամացոյցը՝ մաշուած կաշեփոկով։ Նա հասկացաւ, որ փնտռում է կապոյտ մատիտը։ Աչքերը դեղերում էին սեղանին ու Երզնկայի վրայ։ Մատիտը իր ալ ձեռքին էր։

Նա կռացաւ Թղթին եւ սկսեց կապոյտ կէտերով ծածկել իրենց մէջ փուռ ու այդտեղից չուկայ ընկած հրապարակը։ Չէր շտապում, դնում էր կէտ կէտի հետեւից, աշխատելով դրանց միջեւ հաւասար հեռաւորութիւն պահպանել։ Ասես կապոյտ գոյգ էր փռում իր սրտի ոտքերի տակ։ Մատները Թեթեւակի դողում էին։ Դա միայն ծերութիւնից չէր։ Նրա մատներից կաթում էր այդ վայրերի հանդէպ արթնացած սիրոյ յուզմունքը։

Լուսամուտի հետեւում ամառ էր։ Երգում էր դեղձենու ճիւղը։ Թռում էր՝ ամառ է հագել ամբողջ աշխարհը։ Ամառ էր նաեւ Երզնկայում։

— Սուրբ Փրկիչ եկեղեցու բակի ջրի պէս ջուր··· — եւ ծերունին մի ախ քաշեց, որի մէջ Ե՛ւ երջանկութիւն կար, Ե՛ւ հիացմունք, եւ նոյնի՛սկ պապակ սրտի դոհացում։

Պառաւը տեղում անբաւական շարժուեց, ճռճռացնելով հին ու խարխուլ աթոռը։

Ծերունին շրջուեց եւ տեսաւ չիլերին խոնարհուած կնոջ դժգոհ-դժգոհ դէմքը։ Պառաւը երբեք չէր կարողանում իր տրամադրութիւնը թաքցրնել։ Այդպիսի ժամանակ նրա դէմքն ասես թթւում էր, կնճիռներն աւելի ընդգծելով։

— Ի՞նչ··· — հարցրեց ծերունին։

— Բան էլ չէ,— ասաց պառաւը։

— Սուրբ Փրկչի ջուրը Երզնկայի ամենատաւն ջուրն էր,— քիչ բարկացող, հաստատամտօրէն խօսեց ծերունին։ Բայց, տխուհանդերձ, աւելացրեց։ — Այդպէս չէ՞։

Պառաւը պատասխան չտուեց։ Նրա դատակների նեարդային շարժումներից ծերունին ենթադրեց, որ, երեւի, իր մէջ ինչ-որ բան սխալ է։ Եւ չիմանալով՝ ինչն է սխալ, ինչու է սխալ, ինքն էլ նեարդայնացաւ։

Նա դարձեալ խոնարհուեց սեղանին, հայեացքն այս ու այն կողմ սահեցնելով դուռ Սուրբ Փրկիչ եկեղեցու ջուրը եւ, այն է, ուզում էր ջրի բոլորաշուրջը կապոյտ օղակ քաշել, երբ լսեց կնոջ ձայնը, որը կարծես հեռուներից էր գալիս՝ սար ու հովիտներից անդին գտնուող իրենց ծննդավայրից, եւ արձագանգում իր առջեւ, Թղթին փռուած քաղաքի փողոցներում։

— Երզնկայի ատանորակ ջուրը, Փաւստոս, ամենուին էլ Սուրբ Փրկիչ եկեղեցու բակում չէր, Ի՞նչ է պատահել քո յիշողութեանը։

— Սուրբ Փրկիչի բակում էր,— գոռաց ծերունին, բայց յուզմունքի աւելիքը ձայնն այնպէս էր խեղդել, որ այն հազիւ լսուեց։ Նրան թուաց, թէ թանկ ու հարազատ ինչ-որ բան է կորցնում, որ շատ աւելին է, քան ջուրը, քան հողը, որից այն բխում է, եւ, վախի՞ց, թէ՞ դժբախտութիւնից, թուլացաւ։

— Ճիշդ է, Փրկչի ջուրն էլ էր պաղ,— ասաց պառաւն առանց դրծն ընդհատելու,— բայց Երզնկայում մի ջուր կար, որը ամենապաղն էր··· Մամիկոնեան եղբայրների պարտէզը յիշո՞ւմ ես··· Եօթը եղբայր էին··· Իրենց պարտէզում միքիչ մատ՝ նրանք երկու ժամ կառուցին թուրքի դէմ եւ բոլորն էլ սպանուեցին։

Ծերունու դլխում չտեղաց մի կայծ՝ լուսաւորելով անցեալը։

— Մամիկոնեանների պարտէզի ջրհորում Երզնկայի ամենապաղ ջուրն էր,— շարունակեց պառաւը վիրաւորուած ձայնով։ — Առում էին՝ այդ ջուրը Սեպուհ լեռան ձիւներից է, բայց դա ճիշդ չէ։ Սեպուհը, է՛, չատ-չատ

digitised by A.R.A.R.@

հեռու էր, նրա ձիւները ինչպէ՞ս կը հասնէին Մամիկոնեանների պարտէզը։ Ես միշտ մտածել եմ, որ նրանց ջուրը գալիս էր մեր ծննդավայրի խորքից, ամենախորքերից, որտեղ ջուրը անուշ է եւ ատոյգի նման պաղ։

— Մամիկոնեանները բարի ու զեղեցիկ մարդիկ էին,— յիշեց Ծերունին։ — Ամէն անցորդ ազատ ելումուտ ունէր նրանց պարտէզը։ Նրանց ջուրը սիրահարի այրուող սիրտն էր հովացնում, սփոփում նոյնիսկ դժբախտ հոգիները։ Մանաւանդ ու հարեւան, որոնք իրենց ջրհորն ունէին, ջուրը բերում էին Մամիկոնեանների պարտէզից, երբ ասենը պատուաւոր հիւր էր լինում։ «Մամիկոնեան է»,— կաւէ կամ պղնձեայ գաւաթը դատարկելով, երջանիկ հոգոց էր հանում հիւրը։ «Հարիւր»,— հաստատում էր տանտէրը՝ զէմքին գոհունակ մի ժպիտ։ Ծերունին չատ զարմացաւ, թէ ինչպէս է կինն իմացել, որ Մամիկոնեանների ջուրը գալիս է երկրի խորքերից։

— Ի՞նչն էին Մամիկոնեան եօթը եղբայրները պաշտպանում,— լսուեց Ծերունու ձայնը։

— Մի՞թէ պարզ ու հասկանալի չէ,— լսուեց պառաւի ձայնը։

— Ուրի՞շ··· — նեղսրտեց Ծերունին։

— Նաեւ հողը,— ասաց պառաւը։

— Պարտէզը,— ասաց Ծերունին,— նրանց պարտէզում՝ հսկայ մի ընկուզենի կար, խնձորի ծառեր։

— Երզնկան,— ասաց պառաւը։ — Նրանք պաշտպանում էին իրենց քաղցր ծննդավայրը, որտեղ նաեւ իրենց ծնողները, իրենց պապերն էին ծընուել։ Նրանք Երզնկան պաշտպանում էին դեռ աշխարհ չեկած իրենց զաւակների համար։

— Երզնկայի երկինքը,— ասաց Ծերունին։

— Նրանք պաշտպանում էին ուրիշ բան,— նեղսրտեց պառաւն ամուսնու խօսքի վրայ։

— Ուրի՞շ··· — նեղսրտեց Ծերունին։

— Երկիրը,— ասաց պառաւը,— ջուրը, երկինքը, պարտէզը՝ խնձորի ծառերով, Երզնկան, հողը··· այս բոլորը Երկիր է։

Ծերունին ինքն իրեն բարձրաձայն խօսելով դուրս ելաւ Սուրբ Փրկիչ եկեղեցու բակից, անցաւ երկար մի փողոցով, որտեղ Ներսէս Հայրապետի զիշերօթիկ դպրոցն էր, եւ արդէն մօտենում էր Սրբուն բաղնիքին, երբ պառաւը նրան, կարծես թեւը բռնելով, կանգնեցրեց։ Առանց աչքերը գուլպայից բարձրացնելու, որի վրայ հետզհետէ երկարում էր, նա ասաց, որ Մամիկոնեանների պարտէզը այդ կողմում չէ, այլ մոմավաճառի կրպակի եւ լարախաղաց Ղազարոսի տան միջեւ, երկրաչարժից առաջացած ընդարձակ ու խոր փոսի մօտ։ Ծերունին այդ փոսը լաւ էր յիշում։ Այնտեղ անձրեւաջրերը լճակ էին գոյացրել, որը ձմեռ ժամանակ սառցակալում էր, իսկ մնացած ամիսներին դարշահոտ տարածում ամբողջ թաղամասում։ Կեղտագոյն, տղմոտ ջրում վխտում էին գորտերն ու որդերը։ Որքան շատ մոծակ կար, եւ ինչպէս էին կծոտում, սաեռ միսդ պոկում էին ու ազ ցանում վէրքի վրայ։ Դա նաեւ անտէր շների ու կատուների գերեզմանոց էր, որոնց դիեերը նեխուում էին ամրան չոգ օդից, լցւում որդերով եւ կեր դառնում ճանճերին։ Ծերունին չրջուեց, ոլոր-մոլոր ճանապարհներով դանդաղ եռ եկաւ ու կանգնեց փոսի գլխաւորեւը։ Նրա աչքերը տեսան այն, ինչ թղթի վրայ չկար։ Ներքեւում սիրելի լճակն էր։ Նրան թուաց, թէ լսում է գորտերի կռկռոցը, առնում ջրի, սատկած կենդանիների նեխահոտը։ (Նա քթով արագ-արագ, դողդոջուն ներշնչեց օդը, որպէսզի այդ հոտերը աւելի լաւ զգայ)։ Նրան նոյնիսկ թուաց, թէ մոծակներն ու ճանճերը կծոտում են իրեն, պատճառելով մարմաջի պէս քաղցրը ու երանելի ցաւ։ Կարօտը, յուզմունքը, որ լճակն էր առաջացրել նրա հո-

digitised by A.R.A.R.@

դում, այժմ նստել էր աչքերին եւ կաթում էր արցունքի տեսքով։

Նա գծագրեց Մամիկոնեան եղբայրների պարտէզը, ջրհորը, լճակը՝ փոսի յատակին, եւ այդ ամէնն ստացուեց կապոյտ։

— Էհ, Երզնկան էլ եկաւ մեր տուն,— երջանկօրէն ասաց Ծերունին, — հիմա որ մեռնենք, այլեւս հոգ չէ։

— Ինչո՞ւ մեռնենք,— առարկեց պառաւը, նրա հայեացքում չփոթմունք կար, երջանիկ մի շող ու երկիւղ։

— Հապա Երզնկայում մեռնելը երջանկութիւն չէ՞։

— Երզնկայում ապրելը աւելի մեծ երջանկութիւն է։

Ծերունուն այնքան էլ դուր չեկաւ, որ կինը տեղի-անտեղի միջամտում է իր մտքի ընթացքին, առարկում իրեն։ Նա Երզնկան աւելի լաւ է պատկերացնում, քան ինքը։ Ինչպէս կ'ուզենար նրա տեղը լինել՝ ունենալ նրա յիշողութիւնը, նրա աչքերը, նրա զգայողութիւնը։ Նա զգաց, որ նախանձում է կնոջը, եւ ամաչեց, ապա շարացաւ ու քրտնեց։

— Կնիկ,— Ծերունու ձայնի մէջ նեարդայնութիւն կար եւ չփոթմունք, — արեւը չուռ եկաւ, ճաշը պէր։

Թէեւ արեւը երկնքի գագաթնակէտին չէր հասել, եւ ճաշին դեռ մէկերկու ժամ կար, բայց պառաւն իսկոյն ցած դրեց շիւղերը եւ, հողաթափերը յատակին քստքստացնելով, շտապեց խոհանոց։ Աւելի քան յիսուն տարի այդպէս էր եղել. պատահում էր՝ նա հակառակում էր ամուսնուն, նոյնիսկ կրուում հետը, բայց կային մի քանի բաներ, որոնք նա միշտ կատարում էր լռելեայն եւ խոնարհութեամբ, ամուսնու կէս խօսքն էլ բաւական էր, մինչեւ անդամ՝ աչքի թարթումը։ Իր լուսահոգի Փամբուխ մայրն էլ էր այդպէս։ Նա երկար-բարակ կը վիճէր իր լուսահոգի հօր՝ Գառնիկ աղայի հետ, սուրճը սա՞ռը ջրով ըմպելն է ախորժելի, թէ՞ առանց ջրի, (նա սուրճը ջրով խմելու կողմն էր), բայց, օրինակ, հիւրին օշարակ մատուցելու, ճաշ ուտելու ամուսնու ցանկութիւնը կատարում էր անմիջապէս՝ իբրեւ Աստծու եւ բնութեան կողմից թելադրուած մի պարտականութիւն։

Ամառը նրանք բակում էին նստում հացի՝ կանաչ տանիք կապած խաղողենիների ստուերում։

Պառաւը սեղանին դրեց պոմիդորի եւ վարունգի սալաթը, որ համեմուած էր սոխով ու հոտաւէտ կանաչիներով, կտրատեց բամպոկի պէս փափուկ ու ապիտակ բոքոնը, որի կարմրատակած մաշիը դանակի տակ խշրտաց, յետոյ կաթսայիկով բերեց Թանապուրը, որը դեռ երէկ էր եփել։ Թանապուրի ախորժ գոլորշի էր բարձրանում, երբ պառաւը փայտէ շերեփով այն լցնում էր խոր ափսէների մէջ։

— Ինչո՞ւ ես տաքցրել,— ասաց Ծերունին։

— Երէկ դու Թանապուրը տաք ուզեցիր։

— Այսօր երէ՞կ է,— մեղմօրէն, բայց կշտամբանքով հարցրեց Ծերունին։

Պառաւը չչնչաց «Հայր մեր»ը եւ «Ճաշակեցուցէ»ը։ Այս անդամ Ծերունին նրան ճայնակից չեղաւ։

Նրանք ուտում էին լուռ եւ գանդաղ։ Տանիքի քիւին կանգնել էր ճընճղուկը եւ դայլայլում էր։ Ծերունին չէր նայում կնոջը, որ ուղիղ իր դիմացն էր նստած։ Խաղողենիների մէջ բզզում էր մեղուն։

Ծերունին տեղում անհանգիստ շարժուեց, յետոյ, նոյն թթուած արտայայտութիւնը դէմքին, ասաց.

— Զափից աւելի ես լցրել, ուզում ես պայթե՞մ։

Նա գդալը թողեց կէսաւտ ափսէի մէջ եւ առանց սալաթին ձեռք տալու տաքի եկաւ։

digitised by A.R.A.R.@

Գառաւը զարմացած էր։ Նա, լաւ յիշում է, կերակուրը ափսէներում քիչ լցրեց, մոռնելով, որ արուը դեռ երկար ճանապարհ է անցնելու եւ իրենք մէկ-երկու անգամ էլ հաց կ'ուտեն։ Նայելով նախ ամուսնու ափսէին, յետոյ՝ իր, նրա մտքով, այնուամենայնիւ, ունցաւ, որ, գուցէ, խնայէս, կերակուրը լցրել է սովորականից աւելի։ Այդպէս մտածելով, նրան նոյնիսկ թուաց, որ ինքն էլ է արդէն կուշտ, եւ իր ափսէն, որի մէջ դեռ բաւականին թանապուր կար, զգուշօրէն հրեց սեղանի մէջտեղը, թէեւ թանապուրը շատ համեղ էր։

Բակի անկիւնում փոքրիկ ջրաւազան կար՝ աղբրակով։ Մերունին բացեց ծորակը եւ, կռանալով, մի ափ ջուր խմեց։ Ինչ որ Մամիկոնեանների ջուրը լինի,— մտքում ասաց Ծերունին՝ սառնութիւնից կուչ տալով լեզուն։ Յետոյ նա ջուր դրեց հաւերի առջեւ, որոնք չորս կողմից իսկոյն շրջապատեցին ալիւմինէ թասը։ Հաւերը կոտրում էին իրենց ծարաւը, նայելով արեւով շաղուած երկնքին։

Գառաւը հաւաքեց սեղանը եւ մտաւ տուն։ Մերունին ննջարանում, մահճակալին անդորը պառկած ծխում էր, նայելով դիմացի դատարկ պատին։ Գառաւը հասկացաւ, որ սիգարէթի ծխի միջից նա պատին տեսնում է Երզնկան, եւ դարձեալ, ինչպէս մի քանի ժամ առաջ, դժգոհութիւնն ու բողոքը շարժուեցին իր մէջ՝ հոգու ցաւ առաջացնելով։

Գառաւը նորից ձեռքն առաւ չիւզերը, յարմարօրէն տեղաւորուեց աթոռին եւ գլուխը կախ գործում էր։ Մէկ էլ տեսաւ ամուսնուն, որը, սեղանին հասցած, փորձում էր ինչ-որ բան նկարել։ Նա չփոթուեց. ե՞րբ եւ ինչպէ՞ս էր Ծերունին նեռս մտել հիւրասենեակ։

Մերունին կարկինով մի հոծ շրջագիծ քաշեց Սուրբ Սարգիս եւ Սուրբ Երրորդութեան եկեղեցիների միջեւ, ցանկանալով ժամի հրապարակը դարձնել նկատելի ու արտայայտիչ։ Սա հայ երեխաների կենտրոնական խաղատեղին էր, զինուորներն այստեղ էին մարզանքներ անում, այստեղից էր քաղաքի նախիրը գնում դաշտ՝ ճանապարհի փոշին ու հողերը խառնելով օդին։ Փոշիների միջից լսւում էին նրա բառաչները, եւ դա ականջին այնքան դուրեկան էր։ Ինչո՞ւ միայն ականջին,— հարցրեց Ծերունին մտքում՝ ինքն իր դէմ ըմբոստանալով,— հապա սրտին դուրեկան չէ՞ր։ Եւ նա մտովի թաւալուեց Երզնկայի փողոցների հողի, փոշիների մէջ՝ ինչպէս երազի քաղցր անկողնում, սրտում ու ականջներում կովերի բառաչն ու ոչխարների, դառների մայիւնը։

Գարնանն ու աշնանը՝ անձրեւների ժամանակ, հողը վերածւում էր կըպչուն ցեխի, եւ փողոցներում անցուդարձը դժուարանում էր։ Ցաճախ անասունները չորս ոտքով թաղւում էին ցեխի մէջ եւ չէին կարողանում առաջ գընալ։ Ինչքան է պատահել, ինքը ոտաբոպիկ մտել է ցեխերը, որ իրենց եզանը, կոտոշներից բռնած կամ քամակից հրելով, հանի դուրս։ «Հո՛... եզը՛...»։ Մերունուն թուաց, թէ կարմիր ճակատով այն անմեղ կենդանուն հիմա էլ է քաշում-հրում... եւ նա աչքերի խորքում ժպտաց։ Այդ վայրկեանին ինչ-որ բան ցաւեցրեց նրա յիշողութիւնը, ցաւը նախ լոյս տուեց գլխում, յետոյ դանդաղ ներծծուեց մարմնի մէջ։ Մի անգամ, ինչքան ժամանակներ են անցել այն օրից, ինքը դատարկ բանի համար (եզը նատել էր ճանապարհի մէջտեղն ու չէր ուզում վեր կենալ) ծեծեց նրան, դէ՛, եզ է, ճանապարհին էլ կը նատի, ցեխի մէջ էլ, ծեծելս ո՞րն է՝ ճիպոտով դաղեց մէջքը, ճիշդ է, լաւ դաղեց, բայց հօ չէր ուզում...։ Հիմա թախիծ կար Ծերունու աչքերի անկիւններում։ Տեսնես չա՞տ կսկծաց մէջքը,— հոգու խորքերում հարցրեց նա եւ, պատասխան չստանալով, գլուխը մեղմօրէն քսեց կենդանու կարմիր, մազմզոտ ճակատին, գրկեց վիզը, նրան այդպէս թուաց, եւ անձայն, սխուր-սրխուր նրանից ներողութիւն խնդրեց։

digitised by A.R.A.R.@

Պառաւը բարձրացրեց հայեացքը եւ, ամուսնու թիկունքին նայելով, ղժաց, որ նա ուրախ չէ: Նա հայեացքը դարձեալ խոնարհեց չիւղերին, որոնք տրդէն դուլպայի վզակոտին էին դործում, եւ սիրտը անքաց թոյլ ու յոգնած ձայնով:

Ծերունին դանդաղ քայլեց իրենց փողոցի ցեխերի միջով, մօտեցաւ ցածրիկ դռնակով տանը, որը մօտաւորապէս երեք ամիս առաջ էր նկարել, եւ ճկիկը կամացուկ խփեց: Դուռը բացող չեղաւ: Լռուեց երաժշտութեան պէս ախորժալուր ձոռոց, երբ նա դուռը նոյնքան մեղմիկ եւս էր անում: Նա ամէն օր այդպէս ներս էր մտնում իրենց տուն, նստում մէկ ոտք բարձրութեամբ սեղանի մօտ, յիշում հարազատների դէմքերը, որոնք վազուց դարձել էին կարօտամաշ հիքիաթի նկարներ, երդիկից երկար նայում դուրս, մինչեւ աչքերը կը խժթժային, եւ արտոյտները, ոսկեդոյն փետրիկներ շաղ տալով, կը թռչէին կապոյտ, թափանցիկ երկնքում... Իսկ յետոյ նա կանգնում էր, հայեացքը եւ մտաներն զգուլորէն դիպցնում տան իրերին: Ահա թարեքը՝ պատի մէջ դտնուող ընդարձակ մի խորշ: Վերեւի դարակներում մանր ամաններն են, ափսէները, գդալները ու բաժակները, իսկ ստորին մասում, որ աւելի լայն է, պղնձեայ եւ կաւէ խոշոր ամաններն են տեղաւորուած, որոնցում հալած կարագ կայ, դմակի իւղ, դաւրմա, բլղուր եւ աղջրի մէջ դրուած պանիր: Ծերունին, պանրի ագը համտես անելով, ուսը զոռոմալից քսելով սենեակի պատերին, հլաւ բակ՝ սրտում ինքն իրեն փակուող դրան ձայնը:

Բակի եւ տան պատկերներում ոչ մի պակասութիւն չկար, Ծերունին այդ ամիսներին իր օջախն այնքան էր ներս ու դուրս արել, որ յիշողութեան մէջ պահպանուող բոլոր հարազատ կէտերը, ստուերներն ու գծերը տրդէն կերպաւորուել էին: Այնուամենայնիւ, նա առաւ մատիտը (դա կապոյտն էր) եւ վերամարմնաւորեց այն քարը, որի վրայ հօրենական պապը նստում էր, յենուած ձեռնափայտին եւ Երվնկայի ու գաւառի հին-հին ժամանակներից խորհրդաւոր պատմութիւններ անում, որոնք էլ իրեն պատմել էին իր նախահայրերը:

Ծերունին այդ պատմութիւններից մէկը յիշեց: (Այն հնագոյն ժամանակներում քաղաքը շրջապատուած էր կուսական անտառներով, որտեղ շատ կենդանիներ ու թռչուններ կային: Ամենանշանաւորը ոսկէ ձին էր, որին ոչ ոք չէր տեսել, բայց որից բոլոր մարդիկ պատկառում էին եւ մեծարում ոգեղէն խօսքերով): Բակից ելնելով փողոց, Ծերունին ամէն ինչ մոռացաւ:

Դէմը Սուրբ Երրորդութիւնն էր՝ բարդիներից էլ բարձր դանգակատներով, նախշազարդ կամարներով: Ծերունին յիշեց, որ ամենաբարձր զանգակատան գլխին ամէն գարնան իջնում էր արագիլը: Այնքան գեղատեսիլ էր արագիլի թռիչքը քաղաքի վրայ: Երբ արագիլը գալիս էր, մարդիկ դառնում էին աւելի բարեսիրտ, նրանք սկսում էին սիրել իրար, եւ այդ սիրուց երեխաներ էին ծնւում:

Հանդստեան եւ տօն օրերին եկեղեցիներում վաղ առաւօտից սկսւում էր ժամերգութիւնը: Իրենք գնում էին Սուրբ Երրորդութիւն, որտեղ ժամերգութիւնը գլխաւորում էր Տէր Վահանը՝ միջին տարիքի, գեղեցիկ աչքունքով, բարձրահասակ մի քահանայ: Տէր Վահանի ձայնն այնքան դուրալի էր, որ թւում էր՝ ոչ թէ նա է տաղերգում՝ այլ քո սիրտը: Հասակաւոր ժողովուրդը ծնկաչոք էր աղօթում՝ գետինը համբուրելու ասելիքն մարմինը ծռելով առաջ ու դարձեալ ուղղելով: «Զօրքիդ մեռնիմ, Սուրբ»,— այս խօսքով էին նրանք դիմում սրբերին՝ հաւատացած, որ իրենց ցանկութիւնները վաղ թէ ուշ կատարուելու են:

Զատիկ էր. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: «Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի»: Եկեղեցու զանգակատան վրայ կանգնած էր արագիլը: Ներսը

digitised by A.R.A.R.@

կիսամութ էր, ժամերգութիւն, «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», խրնիկի, վառուող մոմերի բոյր եւ բուրվառի ծուխ։ Խորանանման ճեղքից ներս ընկնող լուսափնջի մէջ ինքը մէկ էլ տեսաւ մի չքնաղ դէմք՝ նշակերպ աչքերով, որ առկայծում էին սեւաթոյր, աղեղնաձեւ յօնքերի տակ, եւ ասես բողբոջից նոր ծագած ծաղկաթերթէ չրթներով։ Մի՞թէ նկար է,— հարցրեց իր ալեկոծ սիրտը։ Ոչ, դա ժամագործ Ներսէսի միջնեկ աղջիկն էր, եւ նա նկար չէր, այլ կենդանի էակ, որ այդ պահին խօսում էր Աստծոյ հետ՝ աշխարհը մոռացած։ Նա իր մանկութեան խաղընկերուհին էր՝ Աշխէնը, դարունը նրան յանկարծ ծաղկեցրել էր, ինչպէս՝ ծառ ու թուփ,— Ծերունին չրջուեց պառաւի կողմը,— ահա յիսուն տարուց աւելի է նա իր կինն է եւ այժմ դուլպայ է գործում հեռու երկրում զինուորութիւն անող իրենց թոռան համար։

— Զվերջացրի՞ր,— զուարթ հարցրեց Ծերունին։ — Շուտ վերջացրու, իրար հետ խօսք խօսենք, մեր լեզուն չմոռանանք։

— Այս աշխատանքը ճամբայի նման է, ծայրը չի երեւում,— ասաց պառաւը։ — Վրէժի ընկերների համար էլ եմ գործելու։ Նրանք էլ թոռներ են։

Ծերունու գլխում յանկարծ ծնուեց մի միտք.

— Եթէ այն ժամանակ մեր Վրէժը լինէր, նրա ընկերները լինէին, հիմա երգնկան կ'ապրէր։

Պառաւը վստահաբար ասաց.

— Երգնկան ապրում է։

Ծերունին շատ չփոթուեց, որովհեւեւ նրա աչքերի մէջ Երգնկան ե՛ւ ապրում էր, ե՛ւ չէր ապրում, դա անսովոր մի գոյութիւն էր. նա մէկ երեւում էր մօտիկ ու կենդանի, մէկ էլ՝ հեռանում, կորչում մշուշների մէջ, դառնալով հոգու մորմոք։ Եւ մրմռում էր՝ ինչպէս ողբերգը։

Ծերունու հայեացքի առջեւ դարձեալ արտգիլն էր, Սուրբ Երրորդութիւնը՝ երկինք պարզած իր խաչերով, եւ մի լուսահրաշ դէմք, որ սիրոյ ու ծաղկումի անկեղծ գոյներով արտրուած նկարի էր նման։

— Այստեղ խաչերը փայլում են,— դժգոհ ասաց Ծերունին՝ մէկ աջից, մէկ ձախից դիտելով քաղաքը։ — Ցիշո՞ւմ ես, մեր խաչերը չէին փայլում, նրանք երկաթակուռ էին, թրծուած, մեր խաչերը մշտնջենական հայեացքով էին նայում մեզ։

— Թող փայլեն,— նրան հանդարտեցրեց պառաւը,— թող փայլեն, որ աւելի լաւ երեւան։

Ծերունին եկեղեցու շուրջը կէտեր էր դնում, գծեր քաշում, որոնք կարծես մոլորուած ոտնահետքեր լինէին, ինչ էլ անում էր՝ ստացւում էր երկնքի պէս կապոյտ ու թափանցիկ։

— Այսօր ի՞նչ է, Ուրբա՞թ,— հարցրեց Ծերունին եւ ինքն էլ պատասխանեց։ — Երէկ Հինգշաբթի էր, իսկ այսօր Ուրբաթ է, վաղը Շաբաթ։ Եթէ վաղը չվերջացնեմ, Կիրակի իրիկուն ամէն բան արդէն աւարտուած կը լինի։ Կը դնեմ ապակու տակ, ոսկեգոյն շրջանակի մէջ, որշուած է, կախելու եմ ննջարանի պատին, մահճակալի վերեւը։ Մեր մարդիկ շատ ժամանակ անկողնում են լինում։ — Նրա դէմքին գծագրուեց երջանիկ մի ժպիտ։ — Մեր փողոցը, շուկան, Սուրբ Երրորդութիւնը, Մամիկոնեանների այգին, մեր տունը միշտ կը լինեն աչքիս առաջ։

Պառաւը հասկացաւ, որ հասել է վերջին ժամը, այլեւս լռել չի կարելի եւ, գլուխը բարձրացնելով, վճռականօրէն ասաց.

— Ննջարանը Երգնկայի տեղը չէ։

digitised by A.R.A.R.@

Մերունին ցնցուեց, կարծես ծանր ու անսպասելի դժբախտութեան լուր էր առել։

— Երգնկան կախելու ենք այստեղ՝ հիւրասենեակում, որ եկող-գնացողը տեսնի,— ասաց պառաւը։

— Ոչ մի դէպքում։

— Երգնկայի տեղը ահա այս է,— պառաւը ցոյց տուեց ամենալուսաւոր պատը։ — Ննջարանը փակ անկիւն է, իսկ այստեղ բոլորը կը տեսնեն նրան։

— Թող ոչ ոք էլ չտեսնի։

— Ինչո՞ւ։

— Աւելի լաւ, թող չտեսնեն։

— Վարդանոյշը չտեսնի՞։

— Երգնկան իմն է, իմը,— ասաց Ծերունին՝ խոշոր, ծանր ափով ծեծելով կուրծքը։

— Երգնկան իմն էլ է։

— Թող քոնն էլ լինի։ Երկուսինս է։

— Վարդանոյշինն էլ է։

— Նա վանեցի է, ի՞նչ գործ ունի Երգնկայում։

— Հեթումինն էլ է։

— Հեթումը բիթլիսցի է։

— Ռոբերտը չտեսնի՞,— հարցրեց պառաւը, բայց դա հարցում չէր, այլ պահանջ, թելադրանք, հրաման։

— Ռոբերտը Երեւանում է ծնուել, մեծացել, նրանը Երեւանն է, Երեւանը տալիս եմ Ռոբերտին, ինչքան ուզում է նայի, ուտի, կշտանայ։

— Մարիամի մասին ի՞նչ կ'ասես։

— Մարիամը, ճիշդ է, Երգնկացի է։ Նրա հայրը Տրապիզոնի կողմերից էր եկել մեր քաղաքը, իսկ մայրը պոլսեցի էր, հարուստ գորգավաճառների ընտանիքից,— հանգիստ ու մտազբաղ խօսեց Ծերունին, յետոյ միանգամից դարձեալ նեարդայնացաւ։ — Թող Մարիամն էլ իր Երգնկան նկարի, ես նրան պարտակա՞ն եմ։

— Հապա Բարթուղիմէոսը...

— Բարթուղը մնիկ մշեցի է։

— Ցեւոյ ինչ, որ մշեցի է, թող նրա աչքն էլ Երգնկայով ուրախանայ։

— Երգնկան իմն է, հասկացիր, միայն իմը, միայն իմը։

— Երգնկան բոլորինն է, միայն քոնը չէ, բոլորինն է։

— Անամօթ կնիկ,— գոռաց Ծերունին։

Պառաւն այլայլուեց։ Իրենց ամուսնութեան յիսունվեց տարիների ընթացքում այդպիսի վիրաւորանք նա չէր կրել։ Շիւղերը, գուլպան, որ արդէն պատրաստ էր, թելի կծիկները գոգնոցով կապոց անելով, նա ոտքի ելաւ եւ լուռ ու դանդաղ դուրս գնաց։

Մերունին չփոթուած նայեց նրա հետեւից, չիմանալով ինչ անել։

Մայրամուտի շողերը կպչում էին լուսամուտի ապակիներին եւ, փըշրուելով, թափւում սեղանի վրայ, որտեղ Երգնկան կապոյտ մշուշների մէջ էր։

Նրանք մի սովորութիւն ունէին. ամառ ժամանակ, երեկոները նստում էին չեմքի աստիճաններին եւ դիտում իրենց փողոցի շարժումները։

Պառաւը ջուր շաղ տուեց տան առջեւը (իր կնոջական պարտականութիւնն է), որ զով լինի, եւ քարէ աստիճանին, կողք-կողքի դրեց տափակ, բայց փափուկ երկու բարձ, որոնք այդ նպատակով էր կարել մի քանի տարի առաջ։

digitised by A.R.A.R.@

Իր բարձին տեղաւորուելով, պառաւը գլխի թեթեւակի շարժումով բարեւեց հարեւանի հարսին, որը երեխային դրկած նստել էր իրենց դրանը։ Նա մտածեց, որ լաւ կը լինի դրկիցները չխմանան իր եւ ամուսնու տհաճ վէճի մասին, անյարմար է, եւ դէմքին դրոշմուած վատ տրամադրութիւնը քողարկելու համար իրեն ստիպեց ժպտալ, թէեւ դա շատ դժուար էր։

Շուտով երեւաց Ծերունին։ Նա դրանը յենուած կանգնեց մի քիչ, յետոյ կռացաւ, բարձը դրեց մէկ ատիճան վերեւ ու անհամարձակ նստեց։ Կարծես փշերի վրայ էր։ Նա էլ չէր ուզում, որ ուրիշ մէկը գլխի ընկնի, թէ ինչ է տեղի ունեցել իր եւ կնոջ միջեւ։ Եւ մարդկանց ուշադրութիւնը իր ընկճուածութիւնից հեռացնելու նպատակով, թէեւ ոչ ոք նրան չէր նայում, նա բարձր ու խեղդուելու պէս հաղաց։

Ծերունին ատիճանին թեք ընկած ծխում էր, իսկ պառաւը՝ շնչում երեկոյի դաղջ օդը։

Այդ օրը նրանք սնցնող-դարձողներին բարեւում էին, բարեւ առնում ընդծուած սիրալիրութեամբ, ժպտում էին, փորձում կատակել։ Կատակը ե՛ւ սառցւում էր, ե՛ւ չէր սառցւում։ Մէկ էլ՝ փողոցում խաղացող երեխաների գնդակը կպաւ նրանց պատուհանին, եւ քիչ մնաց ապակին կոտրուէր։ Ուրիշ ժամանակ պառաւը կը ճղճղար երեխաների վրայ, իսկ այժմ ձայն-ծրպտուն չհանեց, նոյնիսկ ներողամտօրէն ժպտաց։ Իսկ երբ հարեւանի հարսն ասաց, որ երեխան փորցաւ ունի, պառաւն անմիջապէս ուղեց դաղձ եփել, որի թուրմը փորձուած դեղ է, դեռ Երկրում դաղձով բուժում էին շատ հիւանդութիւններ։

Ցանկարծ պառաւն սկսեց չփոթմունքով այս ու այն կողմ նայել, չէր կարողանում տեղում հանդարտ մնալ։ Ջանալով հանդստութիւն պահպանել՝ նա ոտքի հլաւ, ուղղեց մէջքը եւ կամացուկ մտաւ տուն։

Քիչ յետոյ նա շեմքում երեւաց թիթեղէ կոփածոյ մատուցարանով, որի վրայ կար երկու զաւաթ սուրճ՝ իր եւ Ծերունու համար։ Ինչ էլ պատահի, ինքը պարտաւոր է ամուսնուն սուրճ տալ, ինչ անենք, թէ կռուած են։

Նրանք սուրճ էին խմում, եւ ամէն ինչ այնպէս էր, ինչպէս անցած բոլոր երեկոներին, միայն, մարդկանց աչքին անտես, չէին խօսում իրար հետ։

Մութն ընկաւ։ Փողոցում ձայները մարեցին։

Պառաւը սուրճի դատարկ զաւաթները դրեց մատուցարանի վրայ, վերցրեց իր բարձը եւ նեղս գնաց։

Շուտով Ծերունին էլ վեր կացաւ։ Ցուցմունքն էր պատճառը, թէ՞ ճակատագրի խաղ էր,— դուռը ծածկելով, նա մոռացաւ փականը դնել։ Նա անյաւ հիւրասենեակի միջով, մի խէթ հայեացք նետելով այն պատին, որտեղ պառաւն ուզում էր Երգնկան կախ տալ, եւ մտաւ ննջարան։

Մինչեւ Ծերունին կը հանուէր, պառաւը ներքնակին փռեց սպիտակ, մաքուր, արդուկուած սաւան, փոխեց նաեւ բարձերեսներն ու վերմակասաւանը։

Նրանք պառկում էին մի մեծ ու լայն մահճակալի վրայ, որ շինուած էր փայտից, ունէր բարձր նախշազարդ գլխամաս եւ շատ հին էր։

Ծերունին նստեց մահճակալի եզրին, սկզբում մէջքը պառկեցրեց, յետոյ դանդաղ վեր քաշեց ոտքերը։ Բաւականին երկար ժամանակ նրա հայեացքը սեւեռած էր հանդիպակաց պատին՝ կարծես Երգնկան արդէն այնտեղ էր։ Յետոյ շրջուեց դէպի կողքի պատը։

Պառաւը հանդցրեց լոյսը եւ, հանուելով, լուռ ու կամացուկ մեկնուեց ամուսնու մօտ։

Լուսամուտի տակ պահուած ճռիկի ձայնը նրանց աչքերին չուտով բերեց քաղցր քուն։

digitised by A.R.A.R.@

Կէսգիշեր էր արդէն։

Ցանկարծ Ծերունին անհանգստացաւ՝ շուռումուռ էր գալիս, քիչ մէջ անկապ խօսքեր ասում։ Նա բացեց կոպերը եւ ուզում էր կնոջն արթնացնել։ Պառաւն զգաց, որ մէկը մշտում էր իր կողը, եւ վախեցաւ, որովհետեւ այնքան մութ էր։

— Երզնկայի գժի անունը գլխիցս ելել է,— ասաց Ծերունին խռպոտ ու ողբերգական ձայնով։

— Նրա անունը Ենոք էր, ապրում էր Սրբուն բաղնիքի եռուը, նա ուրախ գիժ էր,— կիսաբթուն ասաց պառաւը,— գեռնին ձեռնափայտով շրջան էր գծում, սա աշխարհն է, եւ քահ-քահ ծիծաղում վրան։

— Արի հաշտուենք, Աշխէն։ Ես չէի ուզում քեզ վիրաւորել...

— Ես արդէն հաշտուել եմ։

— Իրա՞ւ։

— Երզնկայի համար, Փուստոս, նա ամէն զոհողութեան արժանի է։

Պառաւն անմիջապէս քնեց։ Իսկ Ծերունին դեռ երկար ժամանակ արթուն էր։ Ցեռոյ զգաց, որ քունը իրեն դարձեալ առնում էր իր գիրկը։

Լոյսը բացուեց։

Փողոցում շոգն ու աղմուկը շատացան։

Հարեւանի հարսը, երեխան գրկին, բարձրացաւ քարէ աստիճաններով, որտեղ անցած երեկոյ Ծերունին ու պառաւն էին նստած, եւ դուռը ծեծեց։ (Նա պառաւից դաղձ էր խնդրելու)։ Պատասխան չստանալով, նա կամաց հրեց դուռը եւ մտաւ ներս։ Միջանցքում մարդ չկար։ Նաեւ՝ հիւրասենեակում։ Հարսը նեղ, երկար միջանցքով գնաց բակ։ Ծերունին ու պառաւն այնտեղ էլ չէին։ Վերադառնալով հիւրասենեակ, նա ձայն տուեց նրանց, բայց ոչ մի արձագանգ չեղաւ։ Նա չուարած նայեց այս ու այն կողմ, ապա մօտեցաւ ննջարանի դռանը, որը կիսաբաց էր։ Ցեսնելով Ծերունուն ու պառաւին անկողնում, հարսը լուռ ծիծաղեց։ Նա անձայն մօտեցաւ ու կանչեց նրանց գլխավերեւը։

Նրանք պառկել էին մէջքի վրայ՝ ոտքերը երկարած, ձեռքերը խաղաղօրէն հանգչում էին կրծքերին, իսկ գլուխները հակուել էին իրար։ Նրանց դէմքին լուսաւոր ժպիտ կար, կարծես հեռուներում ինչ-որ բան էին տեսնում, որը նրանց հոգին լցնում էր երջանիկ սարսուռներով։

Ցանկարծ հարսը նկատեց, որ նրանց դէմքին ոչ թէ կենդանի ժպիտ է, այլ դիմակ, որ ժպտում է սառն ու մահաշունչ։

Նա նայեց աւելի ուշադիր եւ, մանկանն ամուր սեղմելով կրծքին, ամբողջ ձայնով ալեկոծուր ճչաց։

ՆՈՐԱՑՐ ԱԴԱԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Կ. ՇԱՀԻՆՅԱՆ

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Խախտած կամար յարդգոգի կ'իջնէ
լանջին խաւարի
ոգդ կ'երթայ թիրախ մը ձախորդ
առաստաղներ կը ճաթռտին անգոյն կիրով
գանկիս ներքեւ ու վերեւ
կը տարածուիմ ես ինձմէ ներս
մինչ դուն
վերադարձի կամուրջները ստուգելով կը յառաջանաս
քեզմէ քեզի
արցունքներուդ ցօղունները զգուելով
արմատները հազիւ հազ
յիշելով
«սամարացի բարի կինը ո՞ւր մնաց», կ'ըսես կը հակիս
ներաշխարհիդ ջրհորին
«նոր սենեակներ ցուրտ կը բուրեն», կը խորհիս
«Ինքարուսն եմ ես», կ'ըսես
բայց արեւի սկնոցներով կը շրջիս
մայրամուտին
տիալոգը կը դադրի
իմ եւ իմ միջեւ
կը տարածուիմ ես ինձմէ ներս
քանի սենեակ ճարտարապետուած
պէտք է գանցել՝ հասնելու
քարայրներու անտառին
ապառաժին Պրոմեթէոսի
եւ հրդեհի միսերուն
բուրգը տեղ մը ծանր-ծանր կը շնչէ
ազատութիւնս անծանօթ
տարագրութիւնս կը գրեմ
բուրգին ներսէն
մազաղաթեայ ու կապարեայ պատերուն վրայ
թերնիս ներքին պատերն ամբողջ
ծեփուած էին
քառերու
լերդացած եղեամներով

digitised by A.R.A.R.@

պէտք է բերանս ցօղուել
մորթուած լոյսի թանձրակայլակ
արիւնով
խաւար ծամել
խաւար քերթել
ամէն բառ դանակ մըն է
որուն կոթը ոսկորէ
պէտք է կոտրել
սեփական լեզուով
բառերուն շեղքը բռնել
շօշափել
շոյել
ու սրել
սրել
գոյաստացութիւն անկրկնելի
անժխտելի
ուր ափերս կը քացուին
շնչառութիւնս կշռելու
նախադասութիւններս սուզեմ
գոգը մահուան ուռկանին
փոխեմ ցրուեմ նուիրեմ
հրուանդանին

անդրջրհեղեղեան տեղնչանքներու եւ հոգմապտոյտներու

նախադասութիւններս պիտի պահեմ այրած հողերու մէջ
եւ հողերը պիտի պարարտանան
բանասիրեն ու բանաստեղծեն
երակներուս մէջ
խցուած նախադասութիւններ կան
կարասիներ ու սափորներ կան պահուած
խոռոչներուն «արեան հանքերուն»
ի՞մ թէ անոնց
որոնք ծնած չեն կ'ապրին
ոչինչ ունիմ իբրեւ զէնք
բացի արեան
մտրակներէն
եւ արիւնս կը սղոցուի
բութ սղոցներով
մինչ փեռեկեալ միսերուն մէջ առեւտրական սէրերուս
ձայնաւորներս կ'ուռին
կ'ըլլան անտառ հիւսկէնեներով
կարմրաշառայլ ամպերու

կ'ըլլամ խօսուն արձագանգ ներքին մութիս անարմատ

digitised by A.R.A.R.@

մութի կոզին ելտորող ձայնի հոյլեր կ'ունկնդրեմ
արդ կը գրեմ
ծննդոցը ոա զանգուածեղ գիշերին
ուր սպառումն աշխարհին
կ'ելլայ բերքուածը նախնական ու վերջին
որ կը ծնի կը մեռնի
յաճախանիէն բառոին

ու բառոր կը հոսի ադիբներէն տողերուս
սպասելով որփէոսեան բնարահար մատներու
աղջամուղջն է բառերու
սաղմնաւորում՝ լարերու

կ'ելնեմ հարը զգլալով
մատներուս մէջ ադիբներս ճմլելով
վերադարձի յոյսերս
մէկ առ մէկ
կոխկռտելով
էջս պատի՞ժ է
թէ պարգեւ
չեմ գիտեր
բայց ընդերքը տարօրէն զգլխիչ
արիւն ու հող
կը բուրէ
ամայիներուն օդը հոծուող գերաճող
գիս կը տանի
ցրուելու
առամներուն արեւի
ներքին նեխումը կ'ասի
կ'այրի ծուխով գարշ միսի
տերեւներու խարշապ մրն է որ իր հետ
մատներուս ու երակներուս կը բերէ
մաքուր ու թարմ
օդի պատկեր շնչելի
ամայիներու վրնջացող հովը գիս
կ'ընդլայնէ ու կ'արձակէ
դէպի ներքին ջերմուկներս ու ջուրերս
ամայիներուն՝ մենութիւնս կը հասունցնայ
կ'ուժաթափի
կը մեռնի
մինչ ափերս կը տարածուին
ու կուրծքս ալ կ'ընդլայնի
ներսս ուռչող ջուրերէն
ջրվէժներէն ապրումի

— — — —

ԿՈՐԻՒՆ ՇԱՀԻՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Մ. ԻՇԽԱՆ

ՄԾԱԿՈՅԹԻ ՊԱՀԱԿՆԵՐ

(ԹԱՏԵՐԱԽԱՂ ՋՈՐՍ ՊԱՏԿԵՐ)

Բ. ՊԱՏԿԵՐ

«*Արաքս*»ի խմբագրատունը: Աչին եւ ձախին, դէմ առ դէմ, երկու գրասեղաններ: Պատերու երկայնքին՝ թերթերու հաւաքածոներ, դարակներու մէջ: Արաբատի նկարը եւ Հայաստանի քարտէսը: Երկու մուտք, մէկը՝ դէպի փողոց, միւսը՝ դէպի գրաշարանոց, տպարան, ուրկէ յաճախակի լսելի կ'ըլլան մեքենայի ձայներ:

Վարագոյրը բացուելուն՝ սեղանին մէկուն առջեւ նստած է Ուրարտեան եւ կը գրէ: Միւսին առջեւ ոտքի կեցած՝ Հայկունի գլխիբեր կը ծրարէ ու կը կապէ:

1-

ՀԱՅԿՈՒՆԻ.— Ի՞նչ կը կարծես, Ամերիկայի համար յիսուն օրինակը կր բաւէ՞։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Շատ է նոյնիսկ։

ՀԱՅԿՈՒՆԻ.— Ցրանսա՞։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Քսան–քսանըհինգ օրինակէն աւելի չուղարկես։

ՀԱՅԿՈՒՆԻ.— Այս հաշուով, մեր բոլոր դաղութներուն մէջ հազիւ երկու հարիւրի չափ պիտի կրնանք տեղաւորել։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Հապա ի՞նչ կը սպասէիր. պիտի ղրկես՝ առանց տեղաւորած ըլլալու։ Փոխարժէքը կա՛մ կու գայ, կա՛մ կը կորսուի։ Ուժ պիտի տաս տեղւոյն վրայ սպառելու։ Դուրսէն մեծ յոյսեր չունենաս, փորձով գիտեմ։

ՀԱՅԿՈՒՆԻ.— Սփի՛ւռք, հայկական անծայր կայսրութիւն...

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Կը զարմանամ խելքիդ։ Դուք՝ բանաստեղծներդ, լուսնէն իջած էք կարծես։ Սփիւռք բաժդ ապ մը ժողովուրդ է. անոր ալ մէկ մասը հայերէն չի կարդար։ Հոս քանի՞ դիրք գնաց մինչեւ հիմա։

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԿՈՒՆԻ.— Հարիւր օրինակ մը գնաց։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Հարիւր օրինա՞կ, երկու շաբթուան ընթացքին, հիանալի՛ է։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Այո՛, նուէրները չուտ կ'երթան...
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Այդքան նուէ՞ր բաժնեցիր։ Գիրքերուդ սպառման հարուածը դուն քու ձեռքովդ տուեր ես։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Գրողներու ամէնէն մեծ հաճոյքն է տուիկա. բարեկամներու եւ գրչեղբայրներու նուէր բաժնել։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Սպասէ, որ թշնամիներդ դնեն ուրեմն։ (Մօտենալով Հայկունիի սեղանին եւ գիրք մը վերցնելով)՝ Ազուոր հրատարակութիւն եղաւ, կոկիկ, ներկայանալի։ Եւ դեռ չէիր ուզեր մեր տպարանին մէջ տպել։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Ուզածիս պէս չեղաւ. բաւական լուրջ սխալներ կան սպրդած։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Կարեւորութիւն մի տար. ո՞վ է հասկցողը։ Իսկանը ա՛յն է, որ գիրքդ մէջտեղ եկաւ։ Հիմա ճարպիկ պիտի ըլլաս՝ արագ սպառելու համար։ Մի՛ ամչնար, ամէնուն ալ ըրէ։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Ուզողին պիտի ըրեմ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Զուզողին ալ ըրէ, չես կրնար ուրիշ կերպ տակէն ելլել։ Հա՛, սա մեր տպարանին մնացեալ հաշիւը չատ չուշացնես. գրաշարները ղրամի կը սպասեն։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Կը վճարեմ, անհոգ եղէք։

Ներս կը մտնէ գրաշարը, գոգնոցը կապած եւ կը մօտենայ Ուրարտեանին։

2.

ԳՐԱՇԱՐ.— Պարոն, երրորդ էջին համար մէկուկէս սիւնակ նիւթ կը պակսի։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Նորէ՞ն կը պակսի. ահագին նիւթ էի տուեր ձեզի. ի՞նչ կ'ընէք, կ'ուտէ՞ք։
ԳՐԱՇԱՐ.— Մենք ինչո՞ւ ուտենք. թերթը կ'ուտէ։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Գրքիս յայտարարութիւնը գրէք խոշոր չափի վրայ։
ԳՐԱՇԱՐ.— Դրած ենք, նորէն կը պակսի։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Ի սէր Աստուծոյ, Հայկունի, նստէ սատեղ բան մը գրէ. գըլուխս չ'ալխատիր. անապարանքով ալ դուրսը գործ ունիմ, կէս ժամ պիտի բացակայիմ։ (Գրաշարին դառնալով)՝ Պարոն Հայկունիին օձիքը չձգես, ես պիտի մնամ։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Ես ի՞նչ գրեմ, գլուխս խառն է, արտասահմանի ծրարները կը պատրաստեմ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Ճանրմ, գրէ՛ բան մը. եթէ ուրիշ նիւթ չգտնես՝ հայ մշակոյթի եւ հայ լեզուի արժէքի մասին գրէ։ Եղածը սիւնակ մը բան է։ Կրնաս այլասերման մասին ալ գրել... Ծը՛, ես գացի։ (Կը մեկնի անապարանոց)։
ՀԱՅԿՈՒՆԻ (գրաշարին).— Հիմա գնա՛, երբ որ կանչեմ՝ կու գաս։
ԳՐԱՇԱՐ.— Պարապ կը սպասենք, եթէ կարելի է մաս մը տուէք, սկսինք չարել։
ՀԱՅԿՈՒՆԻ.— Մեքենա՞յ կարծեցիր զիս, ձգէ՛ որ մտածեմ։
ԳՐԱՇԱՐ.— Օհո՛, երկար պիտի տեւէ ուրեմն. մեր պարոնը չի մտածեր, մէկ անգամէն կը գրէ։

digitised by A.R.A.R.@

ՀԱՑԿՈՒՆԻ — Ձեր պարոնը հանճար է. ես չեմ կրնար։

Գրաշարը կը մեկնի դժգոհ։ Հայկունի կը ճտի, թերթ մը թուղթ կը դնէ առջեւը եւ գլուխը ձեռքերուն մէջ կը սկսի խոկալ։ Պահ մը ետք ներս կը մտնէ ցրուիչը, ձեռքը պայուսակ մը եւ թեւին տակ թերթեր, բրտնած ու շնչասպառ։

3.

ՑՐՈՒԻՉ — Օ՜ֆ, հոգիս ելաւ, ամբողջ չուկան ոտքի տակ տուի։
ՀԱՑԿՈՒՆԻ — Գաշարդ նորոգելո՞ւ եկաք։
ՑՐՈՒԻՉ — Ի՞նչ նորոգել. հինը սպառեցի՞, որ նորի մասին մտածեմ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ի՞նչ ըրիր ուրեմն մինչեւ հիմա։
ՑՐՈՒԻՉ — Հի՛չ, քէֆ ըրի՝ փողոցները չափելով...
ՀԱՑԿՈՒՆԻ — Երեք օր է տասնըհինգ գիրք չկրցա՞ր սպառել։ քու շահդ կը պահանջէ, որ...
ՑՐՈՒԻՉ — Պարոն Հայկունի, ես իմ շահս շատ լաւ գիտեմ, բայց հաւատացէք, գիրքի գործէն հաց չ'ելլեր։
ՀԱՑԿՈՒՆԻ — Բեր նայիմ հաշիւներու տա թուղթը, որո՞նց տարեր ես։
ՑՐՈՒԻՉ — Ամէնուն ալ... (Ծոցէն թուղթ մը կը հանէ, կը տարածէ սեղանին եւ երկուքը միասին կը հակին վրան)։
ՀԱՑԿՈՒՆԻ — Թորոսեանին տարի՞ր։
ՑՐՈՒԻՉ — Երեք անգամ դացի, խանութը չէր. այսօր վերջապէս բռնեցի, մերժեց։
ՀԱՑԿՈՒՆԻ — Բայց ինծի ըսեր էին, որ գրասէր է, անպայման կ'առնէ։
ՑՐՈՒԻՉ — Չեմ գիտեր, ի՛նչ ըրի՝ չառաւ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Լաւ, Սաւանճեան եղբայրներո՞ւն։
ՑՐՈՒԻՉ — Առած են եղեր։
ՀԱՑԿՈՒՆԻ — Չի կրնար ըլլալ. որմէ՞ պիտի առնէին ես տարիչ ցրուիչներու գիրք չեմ յանձնած։
ՑՐՈՒԻՉ — Ի՞նչ կրնաս ընել։ Չ'ըսուիր, որ ըսես՝ հոգոյց տուէք սա առածներդ, որ հաւատամ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Աղէկ, պարոն Բամպակեանին առաջարկեցի՞ր։
ՑՐՈՒԻՉ — Անշուշտ, յոյս կայ, որ հաս մը գնէ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ցոյսը ո՞րն է. գնե՞ց, թէ չգնեց։
ՑՐՈՒԻՉ — Ո՛չ տակաւին. բայց մեծ շանս կայ, որ գնէ։ Գիրքը վայրկեան մը թղթատեց, գազուոր կ'երեւի կորդ, ըսաւ եւ աւելցուց. «տուէք մէյ մը հարցնեմ, վերջը կ'առնեմ»։
ՀԱՑԿՈՒՆԻ — Գիրք գնելու համա՞ր ալ կնոջը խորհուրդին պիտի դիմէ։
ՑՐՈՒԻՉ — Այդպէս է, կարդացողը կինն է...։ Շանս կայ, պարոն Հայկունի, շանս կայ, կինը չի մերժեր, մեր թերթին հինգ տարուան յանձնորդ է։
ՀԱՑԿՈՒՆԻ (Կրկին ցանկին վրայ հակելով) — Մասխեա՞նը։
ՑՐՈՒԻՉ — Ռոմանի փարա չեմ տար, ըսաւ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Բացատրեցի՞ր, որ ասիկա սովորական ռոման չէ։
ՑՐՈՒԻՉ — Ինծի ի՞նչ կարծեցիր. լեզուս կլլած չեմ։ Անանկ լեզու մը թափեցի, որ քիչ մնաց մարդը կարծիքը փոխէր։ «Ասիկա ռոման չէ, աւետարան է, ըսի, կարդացէք եւ պիտի ծանօթանաք մեր ազգի բոլոր ցաւերուն, ներկային, անցեալին եւ գալիքին...»։

digitised by A.R.A.R.@

ՀԱՑԿՈՒՆԻ — Է՛, ե՞տքը։

ՅՐՈՒԻՉ — Ապդին ցաւերը ծանօթ են եղեր իրեն։

ՀԱՑԿՈՒՆԻ — Սա Բարսեղա՞նը ով է։

ՅՐՈՒԻՉ — Զէ՞ք ճանչնար. լաւ պաշտօն ունի, գարգացած մարդ է. անգլերէն, ֆրանսերէն՝ ջուրի պէս...

ՀԱՑԿՈՒՆԻ — Է՛, բան մը դուրս եկա՞ւ։

ՅՐՈՒԻՉ (հառաչելով) — Սուզ դուռ դիրքերնիդ։ Կ'ըսէ, թէ այս ծաւալով օտար հրատարակութիւններ, աւելի մաքուր թուղթի վրայ, կէս գինը կ'արժեն։ Կ'ըսէ, թէ հայ հեղինակներու ըրածը չարաշահութիւն է։

ՀԱՑԿՈՒՆԻ — Դո՞ւն ինչ ըսիր։

ՅՐՈՒԻՉ — Հոգ մի՛ ընէք, լեզուս կլլած չեմ։ Բացատրեցի իրեն, թէ մեր դիրքերու ապաքանակը փոքր է, ատոր համար սուղի կը նստի։ Ճիշդ չե՞մ ըսած։

ՀԱՑԿՈՒՆԻ — Գրո՛ղը տանի. պիտի չաւնեն՝ թող չառնեն, աւելորդ խօսքեր ինչո՞ւ կ'ընեն։

ՅՐՈՒԻՉ — Մի բարկանաք, պարոն Հայկունի, սովորութիւն է, մենք ցերուիչներս վարժուած ենք...

ՀԱՑԿՈՒՆԻ — Անցի՛ր միւսին։

ՅՐՈՒԻՉ (մատը պտըտցնելով ցանկին վրայ) — Պարոն Վահանեանը, ո՛չ, չառաւ։ Հաբցուց, թէ դիրքը ի՞նչ գոյն ունի։ Սկիզբը չհասկցայ, կարծեցի, թէ կողքերուն գոյնը կը հարցնէ։ Հապոյտ ուեսակն ալ կայ, մոխրագոյնն ալ. որը հաւնիք նէ՝ ան կու տամ», ըսի։ Եաքէն դլխու եկայ, որ կուսակցական գոյնի մասին է։

ՀԱՑԿՈՒՆԻ — Ապատչը չի՞ գիտեր, որ գեղարուեստական գործերու մէջ անանկ բաներ պէտք չէ փնտռել։

ՅՐՈՒԻՉ — Ըսի, պարոն, լեզուս կլլած չեմ, չհամոզուեցաւ։ Գլուխը շարժեց կասկածով։ Գոյնը պարզուելէն ետք պիտի մտածէ եղեր հատ մը դնելու մասին։

ՀԱՑԿՈՒՆԻ — Զըլլա՛յ որ երթաս անդամ մըն ալ քովը (Բարկացած)։ Վերցո՛ւր սա ցանկը աչքիս առջեւէն։

ՅՐՈՒԻՉ — Կեցէք, յաջորդը պարոն Սանանեանն է կարծեմ։ (Ստուգելով)՝ Այո՛, նոյն ինքը։ Ան մէկը սիրով ընդունեց, դրամը քանի մը օրէն պիտի վճարէ։

ՀԱՑԿՈՒՆԻ — Ի՞նչ մեծ շնորհք... ինչո՞ւ կ'ուշացնէ։

ՅՐՈՒԻՉ — Զեմ գիտեր, բայց ըսաւ, որ «պարոն Հայկունին մեր տղուն ուսուցիչն է, հիմա չառնենք՝ չ'ըլլար» եւ առաւ։

ՀԱՑԿՈՒՆԻ — Լաւ հաշիւ է։

ՅՐՈՒԻՉ — Ի՞նչ կ'ուզէ ըլլայ. կարեւորը ա՛ն է, որ փակցուցինք հատ մը։ Ուրիշ երկու հոգի եւս կան, որոնք չմերժեցին։

ՀԱՑԿՈՒՆԻ — Ո՞րն է մէկը. «Փարիզ» վաճառատան տէ՞րը։

ՅՐՈՒԻՉ — Ո՛չ, անիկա շատ կոչտ կերպով վռնտեց։ «Գիրք ըսածդ,— ըսաւ, — գրախանութին մէջ կը դնեն, ուղղակի կ'երթայ կը դնէ։ Սա ի՞նչ խայտառակ ձեւ է դիրք ջնջելու. տոմսակները չէին բաւեր՝ հիմակ ալ զօրով դիրք կը ծախեն»։

ՀԱՑԿՈՒՆԻ — Այդ պարոնը ատոր տարին անդամ մը կը մտնէ՞ արդեօք հայկական գրախանութի մը ներս։

ՅՐՈՒԻՉ (ոգեւորուած) — Գիտէ՞ք որուն ծախեցի երկրորդը. Մանչուրեանին։ Անունը ցանկին վրայ չկայ. նշանաւոր կծծի մըն է. սանթիմին վրայ կը գոռայ։ Ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ՝ եւ սա մարդուն հատ մը պիտի փակցնեմ, ըսի մաքէս եւ մտայ խանութը։ Սկսայ լեզու թափել.

digitised by A.R.A.R.@

«Այս գիրքը,— ըսի,— ձեր տան գրադարանին դարդը պիտի կազմէ»։ Գրադարան չունիմ, պատասխանեց։ «Անիկա կարդալով գաւառներուդ հայերէնը կը զօրանայ», ըսի։ Զաւառներս հայերէնի պէտք չունին, անգլերէնին ուժ պէտք է տան, պատասխանեց։ «Հատ մը առէք, գաղանին նուէր կ'ընէք ձեր մէկ սիրելիին», ըսի։ Նուէրը առնել-տալու սովորութիւն չունիմ, պատասխանեց։ Ձերկարեմ, այդ վայրկեանին երիտասարդ տիկին մը ներս մտաւ. հի՞ւր էր, յանձնո՞ւդ էր՝ չեմ գիտեր։ Մարդը պատիւներով ընդունեց այդ տիկինը։ Եւ սիրտ տուի, բակեսայ գովել իր ազգասիրութիւնը եւ աւելցուցի. «Հարկաւ չէք ձեր-ձեր օրինակ մը գնել այս գիրքէն՝ տաղանդաւոր հայ գրողի մը օժանդակած ըլլալու համար»։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Այդպէ՞ս ըսիր, առանց քաշուելու։

ՑՐՈՒԻՉ.— Այո՛, այդպէս ըսի. ինչո՞ւ պիտի քաշուիմ եղեր։ Ալ ամչցա՞ւ, ուզեց ինձմէ ազատի՞լ՝ չեմ գիտեր։ Մէյ մը ալ դրամը հանեց եւ նետեց վրաս, երեսիս պոռալով. «Առ էր պակաս, գրողներն ալ մենք պիտի ապրեցնենք. ագրա՛ր, չունչ քաշել չեն տար... ա՛ռ ու կորսուէ»։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Եւ դուն ալ առիր, հա՞։ Շո՛ւտ, այս վայրկեանիս կը վերադառնաս այդ մարդուկին խանութը, դրամը ետ կու տաս եւ գիրքը կը բերես։ Կ'ըսես իրեն, որ հայ գրողը աղտոտութեան կարօտ չէ։

ՑՐՈՒԻՉ (զարմացած).— Բայց ինչո՞ւ, պարոն Հայկունի, խոզին մաղ մը քաշելը չահ է, կ'ըսեն։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Կ'ըսեն նաեւ, որ մարգարիտները խոզերուն առջեւ չեն նետեր...

Ներս կը մտնէ Ուրարտեան։

4.

ՀԱՑԿՈՒՆԻ (ջղայնոտ).— Ամաչարէ՛, անամիջապէս կ'երթաս եւ դրամը երեսին կը նետես։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Ի՞նչ կայ, ինչո՞ւ յուզուած է։

ՑՐՈՒԻՉ.— Չեմ հասկնար, պարոնին գիրքէն հատ մը ծախեցի, կ'ըսէ՝ դնա՛ ետ բեր։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Որո՞ւն ծախեցիր։

ՑՐՈՒԻՉ.— Մանչուրեանին։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Այդ մէկը չեղաւ. կը գովեմ ճարպիկութիւնդ, բայց գիտցի՛ր, ամէն բան ամէնուն կարելի չէ ծախել։ Քանի դեռ մարդը սրտի կաթուած չէ ստացեր՝ դնա՛ եւ դրամը ետ տուր։

Ցրուիչը կը մեկնի քիթին տակէն մռմռալով՝ «չա՜տ զարմանալի է... չեմ հասկնար... ինչո՞ւ դրամը հոս պիտի տամ եղեր...»։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Բաց սիւնակը ի՞նչ եղաւ, Հայկունի, գրեցի՞ր քան մը։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Ո՛չ, սիրտ չունիմ յօդուած գրելու։

ՈՒՐԱՐՏԵԱՆ.— Լա՛ւ, եղբայր, ես կը գրեմ, ի՞նչ է եղածը, որ... (էջ մը թուղթ քաշելով առջեւը). պիտի գրեմ հայ գիրքի ճակատագրին մասին։

digitised by A.R.A.R.@

Ուրախտեան սիկարէթ մը կը վառէ եւ կը սկսի գրել։ Հայկունի նորէն գիրքը կը ծրարէ եւ կը կապէ։ Ներս կը մտնէ Վարդանեան։

6.

ՎԱՐԴԱՆԵԱՆ (հանդիսաւոր)։— *Բարեւ մասնաւորականներուն... Ցուղի՛չ տեսարան. գիրք, թերթ, գրիչ, խոհուն գլուխներ... Մարդ պատկառանք կը զգայ։* (Մօտենալով Հայկունիի սեղանին)՝ *Ձեր գիրքը ստացանք։ Դրատիրաց Միութեան անունով պարտականութիւն ունիմ խորին շնորհակալութիւններ յայտնելու ձեր ձեռագրած թանկագին նուէրին համար։ Ի՞նչ մեղքս պահեմ՝ միութեան գրադարանը յանձնելէ առաջ, երկու գեղեցիկ ընթացքին կարդացի լմնցուցի։ Կարդացին ճիշդ խօսք չէ, լափեցի ուզղակի։ Կինս՝ ալ կարդաց, հոգը տարի գրադարան։* (Հայկունիի ձեռքը թօթուելով)՝ *Թոյլ տուէք շնորհաւորել ձեզ. ազանչելի գործ է. մեր նոր գրականութիւնը գլուխ-գործոցով մը օժտեցիք։*

ՀԱՅԿՈՒՆԻ։— *Կը չափազանցէք...*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Անկեղծօրէն կ'ըսեմ. ես կեղծել չեմ գիտեր։* «Արամ»*ը ազգոր գրախօսական մը պիտի գրէ անշուշտ, այնպէս չէ՞, պարոն Ուրարտեան։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ (առանց գրելը դադրեցնելու)։— *Անշո՛ւշտ։*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Կ'արժէ։ Լաւ կ'ըլլայ, որ գրական առուլիս մը՝ ալ սարքուի։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ։— *Ամ ալ դո՛ւք ըրէք։*

ՀԱՅԿՈՒՆԻ (անտարբեր)։— *Ես երթամ. սա կապոցներէն մաս մը փոստ յանձնեմ։* (Երկու թուին տակ կապոցներ սեղմած՝ Հայկունի կը մեկնի)։

7.

ՎԱՐԴԱՆԵԱՆ (մօտենալով Ուրարտեանի սեղանին, մտերմօրէն)։— *Հայկունիի տրամադրութիւնները քարար չեն երեւիր։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ։— *Ի՞նչ ընէ, խեղճը ահագին պարտքի տակ մտաւ, գիրքերը չեն ծախուիր։*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Դուք կարդացի՞ք։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ։— *Կարդացի։*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Ինչպէ՞ս գտաք։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ։— *Գէշ չէ, լաւ մասեր չեն պակսիր։*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Այսինքն՝ կրնար աւելի լաւ ըլլալ։ Կառուցումը թոյլ է, մը-շակումի կը կարօտի. այն չէ, ինչ որ պէտք է ըլլար։ Կը կարդաս, ա-յո՛, չես ձանձրանար, բայց... չեմ գիտեր, բան մը պակաս է։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ (շարունակելով գրել)։— *Ի՞նչ, օրինակ։*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Դժուար է բացատրել։ Սանկ, ինչպէս ըսեմ, աւիւն չկայ, զգայացունց երեւոյթներու չես հանդիպիր։ Սովորական է, գլխէն պատկերներ, մեր գիտցած բաները, մեր կեանքը... կրցա՞յ հասկցնել։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ։— *Լաւ չեմ հասկնար, ինչ ըսել կ'ուզես։*

ՎԱՐԴԱՆԵԱՆ։— *Առնենք Հայկունիի նկարագրած հերոսները. սիրահարուել անգամ՝ չեն գիտեր. թոյլ, մեզի, առանց բռնկումի։ Առանկ սէ՞ր կ'ըլլայ։*

digitised by A.R.A.R.@

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ըստ քեզի՝ սէրը ինչպէ՞ս կ'ըլլայ։

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Զորս հարիւր էջնոց վէպի մը հերոսները իրաւունք չունին այդպէս սիրելու։ Անոնց սէրը պէտք է բռնկէր, հրդեհ դառնար...

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ամէն մարդ իր կրակով կը բռնկի։

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Ես քննադատ չեմ, բայց քիչ թէ շատ կը կարդամ, կը հետեւիմ օտար գրականութեան։ Եղրա՛յր, մերիններդ հեռուէն խակ չեն բաղդատուիր օտար ազգերու հսկաներուն հետ — Թոլսթոյ, Հիւկօ, Գէօթէ, Շէյքսպիր...

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Մենք ուրիշ ազգ ենք, անոնք՝ ուրիշ...

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Այո՛, բայց անոնք տարբե՛ր են, տարբե՛ր...։ Հա՛մ կ'առնես կարդացած առենդ։ Մերիններդ անոնց քով շատ խեղճ կը մնան։ Օրինակ, ա՛ռ Հայկունին, ի՞նչ է, ի վերջոյ, արտադրածը. սովորական վէպ մը. հորիզոնը նեղ, ներշնչումը ակար...։ Կրցա՞յ հասկցնել։ Ի՞նչ ընդունելութիւն կը կարծէք, որ պիտի գտնէր Հայկունիի գիրքը, եթէ օտար լեզուի թարգմանուէր։

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Չեմ գիտեր, բայց պէտք է կատարել նման փորձեր. մեր արժէքները անծանօթ կը մնան։

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Ճի՛շդ այս կէտին մէջ է, որ մեր կարծիքները իրարմէ կը կը բաժնուին։ Աւելի լաւ է նման փորձեր չկատարել, որովհետեւ Հայկունիներով չենք կրնար ներկայանալ օտարներուն եւ դնահատանք մուրալ։ Ի՞նչ խեղճութիւն...։ Մերիններուն գրածները ազգային նեղ սահմաններէն դուրս չեն ելլեր, համամարդկային նիւթեր չեն շօշափեր։ Կրցա՞յ հասկցնել...

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ամէն նիւթ նախ ազգային է, ապա՝ միջազգային։ (Կը շարունակէ մէկ կողմէն գրել)։

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Ցամենայնդէպս, Հայկունին թող չկարծէ, թէ գիրքը գլուխ-գործոց մըն է. չա՞ս հեռու է օտար չափանիշով գլուխ-գործոց ըլլալէ։ Առայժմ պարզ խոստում մըն է միայն, ուրիշ ոչինչ...։ Ցտեսութի՛ւն։

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Կը մեկնի՞ք։

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Այո՛, երթամ, ժողովի պիտի հասնիմ։ (Քանի մը քայլ դէպի դուռը ուղղուելէ ետ՝ կանգ կ'առնէ)։ Չեմ գիտեր, թէ դուք ի՞նչ պիտի գրէք Հայկունիի գրքի մասին։ Իմ կարծիքս այն է, որ պէտք չէ ուռեցնել, պէտք չէ չափազանցուած գովասանքներով չափացնել մեր նոր բահաս գրիչները։ Մամուլին պարտականութիւնն է զուսպ ըլլալ եւ արդար։ Կրցա՞յ հասկցնել...։ Ցտեսութի՛ւն։

Վարդանեան կը մեկնի։ Տպարանի դուռնէն ներս կու գայ գրաշարը, թերթերու եւ նամակներու ծրար մը ձեռքը։

8·

ԳՐԱՇԱՐ (թերթերն ու նամակները սեղանին վրայ դնելով)։ — Այսօրուան փոստն է։

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Միայն այսքա՞ն։

ԳՐԱՇԱՐ — Այո, պարոն. յօդուածը լրացա՞ւ։

ՈՒՐԱՐՏԵԱՆ (գրելը շարունակելով)։ — Վերջին տողը գրելու վրայ եմ, համբերէ, հիմա կու տամ։

ԳՐԱՇԱՐ — Գիտի ուշանանք։

digitised by A.R.A.R.@

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ա՛ռ սա երկու էջերը, արաժեանով չարել սկսէ, մնացածը կը հասցնեմ։
ԳՐԱՇԱՐ — Շատ լաւ, պարոն։ (Կը մեկնի)։

Ուրարտեան յօդուածը կը վերջացնէ եւ կը սկսի ցոր հասած ճամակները բանալ եւ աչքէ անցընել։ Պահ մը ետքէ ներս կը մտնէ Հայկունի։

9.

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Շուտ վերադարձար։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ցրարները ցրուիչին տուի, ինք պիտի կարգադրէ։ Ի՞նչ նորութիւն։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ի՞նչ պիտի ըլլայ, օրուան մարդը դուն ես. եկող-գացողը կը խօսի քու գիրքիդ մասին։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ո՞վ, օրինակ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Օրինակ՝ Դրասխրաց Միութեան նախագահը։
ՀԱՑԿՈՒՆԻ — Գիտեմ, ես հոս էի, երբ եկաւ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Մեկնելէդ ետք աւելի ազատ խօսեցաւ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Եւ ի՞նչ ըսաւ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Որքան ընթերցող՝ այնքան կարծիք։
ՀԱՑԿՈՒՆԻ — Դրակա՞ն էր, թէ բացասական։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Մասամբ գրական, մասամբ բացասական։ Կարեւորութիւն մի տար։
ՀԱՑԿՈՒՆԻ — Հետաքրքրական է դիտնալ, թէ դո՞ւն ինչ կարծիք ունիս։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ես իմ կարծիքս վերապահած եմ թերթին. քանի մը օրէն կը կարդաս։
ՀԱՑԿՈՒՆԻ — Կարելի՞ է իմանալ մեսաւորապէս։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Անկեղծօրէն ըսած՝ կարծիքս բացասական չէ բոլորովին։ Ազուոր մասեր ունի գիրքդ։ Նիւթը ամբողջութեան մէջ կը գտնեմ շահեկան։ Մեր ժողովուրդի ապրած ողբերգութիւնը անսպառ հանք է, որմէ պէտք է լայնօրէն օգտուին մեր գրողները։ Այդ ուղղութեամբ քու ճիգդ գնահատելի է. բայց քանի մը լուրջ դիտողութիւններ ունիմ ընելիք...
ՀԱՑԿՈՒՆԻ — Օրինակ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Դիտողութիւններս ղլխաւորաբար ուղղուած պիտի ըլլան գրելու ձեւին։ Ոնգ պէտք եղածին չափ կուռ եւ յղկուած չէ։ Ո՛ւր է, եղբա՛յր, Զօհրապի մը, Զարդարեանի մը, Վարուժանի մը ոճն ու լեզուն։ Ոճը ամբողջ դիրքն է։ Ան ո՞վ էր, որ ըսած էր՝ «ոճը մարդն է»։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ով որ է՝ ճիշդ ըսած է։ Ամէն գրող իր ոճը պէտք է ունենայ։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Հիմակուընէ չվիճինք. կը գրեմ եւ կը կարդաս։

Ուրարտեան մեքենաբար ձեռքը կ'երկարէ ու կը բանայ նոր հասած թերթերէն մէկը։

ՀԱՑԿՈՒՆԻ — Ի՞նչ թերթ է սոսկա։
ՈՒՐԱՐՏԵԱՆ — «Հրազդան»ի վերջին թիւը։ Տեսնենք նորէն ի՞նչ է ածած մեր դէմ։ (Պահ մը աչքէ անցընելէ ետք)։ Օ՜, աչքդ լոյս, Հայկունի, գիրքիդ մասին գրախօսական կայ։ Մեզ կանխեր են։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ո՞վ է սատրագրողը։

digitised by A.R.A.R.@

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Ո՛վ պիտի ըլլայ· ամենագէտն Նայիրեան։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Իսկապէ՞ս, տուր ինծի։* (Կը փորձէ ձեռքէն առնել)։

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Սպասէ, եւ պիտի կարդամ...։ Կ'ուզէ՞ս գոց ըսեմ առանց կարդալու։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Կարդա՛ տեսնենք։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Լա՛ւ մտիկ ըրէ։ «Հայկունիի ընդարձակ վէպը, որ նոր լոյս տեսաւ, յատկանշական նմոյշներէն մէկն է զաղուրտեան այն վատառոգ գրականութեան, որուն ներշնչման աղբիւրները չեն թխիր հայրենիքի լուսաշող իրականութենէն»։* (Դառնալով *Հայկունիին*)։ *Առի՞ր։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Շարունակէ՛։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ (Կը կարդայ)։— *«Մօտ 400 էջերու մէջ, հեղինակը փորձած է մեզի ներկայացնել տարագրութենէն վերապրող սերունդին կեանքը, ուր կը գտնենք աւելի վիշտ, քան ուրախութիւն, աւելի համակերպութիւն, քան ընդվզում, աւելի պայքար, քան յաղթանակ»։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Ի՞նչ կ'ուզէր գտնել արդեօք։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Չեմ գիտեր։* (Կը շարունակէ կարդալ)։ *«Ի՞նչ շատ հին ու մաշած այս թեմաներով գրականութիւն մշակելու ամուլ ճիգեր։ Մեր երիտասարդ գրողները պէտք է հրաժարին այլեւս անցեալէն, հիմա, որ պայծառ լուսաբաց մը կը շողայ։ Գրականութիւնը հնահաւ պերճանք մը չէ, ինչպէս կը փորձեն վարդապետել հոգիով աղքատները...»։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Որո՞նք են այդ աղքատները։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Դուն ու ես։ Զարմանալի բթամիտ մը ես։ Լսէ՛ շարունակութիւնը։ «Կ'ուզենք գրականութիւն մը, որ շնչէ մեր կեանքին երկաթէ ռիթմով։ Նոր օրերու շառաչուն ձայնը պէտք է հնչէ մեր նոր երկիրէն։ Տալ նոր մարդուն կերպարը առաջաւոր թեմաներու ընտրութեամբ — ահա՛ ինչ որ կը պահանջուի մեր երիտասարդ գրողներէն»։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Կազապարուած անիմաստ խօսքեր...*

ՈՒՐԱՐՏԵԱՆ (Շարունակելով ընթերցումը)։— *«Հայկունիի վէպը նոր քան մը չ'աւելցներ իր գրական փաստակին վրայ։ Ընդհակառակն, այս գիրքը կու գայ անգամ մը եւս փաստելու, թէ հայրենի հողէն կտրուած գրականութիւնը զարգացման հեռանկարներ չունի։ Անցեալի պաշտամունքը անկումային տրամադրութիւններ ստեղծելու կը ծառայէ միայն, մինչդեռ հայ գրողը իր աչքերը յառած պէտք է պահէ պայծառ գալիքին, խիզախ ու ճանճնչաւոր նայուածքով»։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Ի՞նչ է ըսել ուզածը։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Կը կարծե՞ս, թէ ինք հասկցած է ըսել ուզածը։ Աժան ապրանք է, կը քշէ։ Ո՞ւր էինք, հա՛։ «Խիզախ ու ճանճնչաւոր նայուածքով։ Պէտք է խոստովանիլ, որ վէպը հետաքրքրութեամբ կը կարդացուի, եւ ասիկա՝ շնորհիւ աշխոյժ եւ կուռ ոճին ու հարուստ լեզուին, որոնք հեղինակի միակ արժանիքները կը կազմեն...»։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Դուն ալ ահի՞ր բաժինդ։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Վա՜ղ անցիր, պէ՛, հայ լեզուն ամէն օր խաչը հանողը ելեր լեզուի հարստութենէն կը ճառէ։ Ի՞նչ կը հասկնայ ողբալին։*

ՀԱՑԿՈՒՆԻ — *Շարունակէ՛, տեսնենք ո՞ւր պիտի հասնի։*

ՈՒՐԱՐՏԵԱՆ — *Ա՛լ չեմ կարդար· առ ու վայելէ։* (Թերթը կը նետէ ձեռքէն)։

ՀԱՑԿՈՒՆԻ (Թերթը ծալելով եւ գրպանը դնելով)։— *Եւ ասիկա կը կոչուի քննադատութիւն, անաչա՞ռ եւ արդա՞ր քննադատութիւն...։ Դուն խօսքը լաւ կը գտնես, ոճը՝ տկար· ան խօսքը փոած կը գտնէ, ոճն ու լեզուն՝ աքանչելի· ուրիշ մը, ով դիտէ ինչե՞ր պիտի գտնէ եւ ինչե՞ր պիտի չգտնէ...*

digitised by A.R.A.R.@

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ժամանակը, սիրելիս, ժամանակը պիտի ճշդէ բուն արժէքը։
ՀԱՑԿՈՒՆԻ (հառաչելով) — Սպասենք ուրեմն յետ մահու անմահութեան...
ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ամ մէկը հիշդ ըսիր. բոլոր մեծ գրողներուն ճակատագիրը...։ Կ'արժէ խմբագրական մը գրել այս մասին։ (Սեղանին վրայէն ճամակներ ու թուղթեր հաւաքելով)՝ Նայէ՛, Հայկունի, ես կէս ժամի չափ պիտի բացակայիմ. տեղէդ չշարժիս։ Քիչ ետք գրաշարը յօդուածիս փորձը պիտի բերէ։ Նայէ, որ սխալ չապրդի։ Ցը՛... (Կը մեկնի)։

Մինակ մնալով՝ Հայկունի թերթը կը հանէ գրպանէն եւ լուռ ու խոհուն կը շարունակէ ուչէ անցընել գրախօսականին մնացեալ մասը։ Քիչ ետք ներս կը մտնէ Զուարթ։

10.

ԶՈՒԱՐԹ — Բարեւ, պարոն Հայկունի...
ՀԱՑԿՈՒՆԻ (անակնկալի եկած, հիացիկ) — Բարե՛ւ, օրիորդ Զուարթ. այս ո՞ր հովը ձեզ հոս բերաւ։
ԶՈՒԱՐԹ — Հայրիկս յանձնարարեց, որ անցած ատենս տպարան հանդիպիմ եւ ձեր գիրքերէն հինգ օրինակ առնելիմ հետս։ Զէի սպասեր, որ դուք ալ հոս կ'ըլլաք։
ՀԱՑԿՈՒՆԻ — Դժգո՞հ էք, որ հոս եմ։
ԶՈՒԱՐԹ — Ընդհակառակը, շատ ուրախ. առիթ մըն է, որ ձեզի յայտնեմ իմ խորին շնորհակալութիւնները ձեր ինծի նուիրած գիրքին համար։
ՀԱՑԿՈՒՆԻ — Գիրքիս առաջին օրինակը ձեզի ձօնագրած եմ...։ Եւ ի՞նչ յանդգնութիւն, ի՞նչ մեծ սիրով, եթէ կիսնաք։ Կարդացի՞ք...
ԶՈՒԱՐԹ — Ոչ տակաւին, ձեռքս անգլերէն գիրք մը կայ. աւարտելուս պէս պիտի ջանամ կարդալ։
ՀԱՑԿՈՒՆԻ — Շա՛տ ուրախ կ'ըլլամ. ձեր տպաւորութիւնը ինծի համար կարեւոր է։
ԶՈՒԱՐԹ — Հայրիկս շատ խանդավառ է ձեր գիրքով։ Կ'ըսէ՝ մեծարժէք գործ է։ Եկող-գացողին ձեր գիրքի մասին կը խօսի։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ես ձե՛ր տպաւորութիւնը կ'ուզեմ իմանալ։
ԶՈՒԱՐԹ — Իմ տպաւորութի՛ւնս...։ Հայերէնի իմ համեստ կարողութիւնս ծանօթ է ձեզի. ինչպէ՞ս կրնամ կարծիք յայտնել։
ՀԱՑԿՈՒՆԻ — Կարեւորութիւն չունի. ես հաւատք ունիմ ձեր առողջ դատողութեան վրայ. դուք լաւապէս կրնաք ըմբռնել նիւթին ընթացքը, ոգին, գեղարուեստական արժէքը։
ԶՈՒԱՐԹ — Իմ մասիս ձեր ունեցած կարծիքները չափազանցուած են։
ՀԱՑԿՈՒՆԻ — Ո՛չ, Զուարթ...։ Թոյլ կու տա՞ք, որ այսուհետեւ ձեզ պարզապէս «Զուարթ» կոչեմ. աւելի անուշ կը հնչէ, աւելի սրտի մօտ...
ԶՈՒԱՐԹ — Ինչո՞ւ չէ, պարոն Հայկունի։
ՀԱՑԿՈՒՆԻ — Գիտե՞ս, Զուարթ, այս գիրքիս ստեղծումին մէջ դուն բաժին ունիս, խոշոր բաժին մը...
ԶՈՒԱՐԹ — Ե՞ս. ինչպէ՞ս...
ՀԱՑԿՈՒՆԻ — Երբ կը գրէի անոր էջերը, քու պատկերդ դիմացս էր միշտ, քու աչքերդ կը խօսէին ինծի, կը ժպտէին, կը քաջալերէին։

digitised by A.R.A.R.@

ԶՈՒԱՐԹ.— Կը չփացնէք դիս, պարոն Հայկունի, ինչո՞ւ չէք մտածեր անգլերէն գրել ձեր վէպերը. ձեր անգլերէնը բաւական զօրաւոր է. պզաթիկ ճիգով մը պիտի յաջողիք:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Ես հայ գրող եմ:

ԶՈՒԱՐԹ.— Բայց անգլերէնը ձեր առջեւ կը բանայ յաջողութեան դուռները. անգլերէն գիրքերը հարիւր հազարներով կը ծախուին:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Գրականութիւնը ամէն բանէ առաջ հոգի է եւ հոգին մայրենի լեզուով միայն կր գտնէ իր հարազատ արտայայտութիւնը: Հայ մը, որ հայերէն գիտէ եւ օտար լեզուով կը գրէ՝ տարբերութիւն չ'ունենար այն անձերէն, որ օտարի հետ կ'ամուսնանայ...

ԶՈՒԱՐԹ.— Նորէ՞ն օտար ամուսնութեան սարսափը: Կարեւորը յաջողիլը չէ՞, երջանիկ ըլլալը...

ՀԱՅԿՈՒՆԻ.— Զուա՛րթ...

ԶՈՒԱՐԹ.— Այո՛, պարոն Հայկունի:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Քեզի հարցում մը տուած էի, կնանքիս ամէնէն կարեւոր հարցումը. կը սպասեմ պատասխանին...

ԶՈՒԱՐԹ.— Պատասխանը... պատասխանը իրաւ որ չեմ գիտեր... (Արագ կը փախչի):

Հայկունի շփոթած՝ կը վերցնէ իր գլխարկն օրինակ մը եւ մեքենաբար կը դիտէ զայն: Կը բանայ, բանի մը էջ կը դարձնէ, ապա կը փակէ ու կը դնէ սեղանին վրայ...

Գրաշարը ներս կը մտնէ՝ ձեռքը թուղթեր:

ԳՐԱՇԱՐ.— Փորձը բերի:

ՀԱՅԿՈՒՆԻ (մտամոլոր).— Ի՞նչ փորձ:

ԳՐԱՇԱՐ.— Յօդուածին փորձը:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Փորձը... հա, այո՛, փորձը...

ԳՐԱՇԱՐ.— Ո՞վ պիտի սրբագրէ...

ՀԱՅԿՈՒՆԻ.— Չեմ գիտեր...

Վ Ա Ր Ա Գ Ո Ց Ը

Մ. ԻՇԽԱՆ

(Շար. 2)

digitised by A.R.A.R.@

Պ. ՀԵՐԵԱՆ

Հրազինթի այս թիւին հետ, այս օրերուն, հրապարակ կ'ելնէ մեր աչխատակիցներէն Պետրոս Հերէանի հատը... խորագրեալ բանաստեղծութիւններու գրքոյկը, ուր ամփոփուած են երիտասարդ բանաստեղծին վերջին տարիներու բանաստեղծումները։

Սառիւ՝ ընթերցողին կը ներկայացնենք Պետրոս Հերէանի գրքոյկին բնդհանուր մթնոլորտը եւ անոր բաղկացուցիչ տարրերը համադրող գերիշխանը, որ, միաժամանակ, լուսաբանիչ կը թացատայտէ երիտասարդ բանաստեղծին գրական նախասիրութիւնները։

ԲԱՌԸ...

Վաղուց արդէն թնակուած հմայական ցաւերով,
Կը շրջէի ես անդուլ դիւահարի մը հանգոյն,
Կը փնտռէի փրկարար բառը բարի,
Սակայն չէի յաջողեր ճշդել անունը անոր։

***

Բառը ցօղ էր նախապէս՝ իջած դոդին մատներուս,
Դէմքիս թեքուած ծաղիկներու ժպիտ էր ան վայրենի,
Թոթովանքիս շնորհուած զուրգուրանք էր պարզապէս։

Բառը ցա՛լք էր ադջկայ,
Բաժակ էր ան երաշահիւս կակաչի,
Ապա խաչքար ճաքճքած,

digitised by A.R.A.R.@

Մագաղաթի ծուէն էր՝ արիւնիս մէջ թաթախուած,
Երակներս լափլիզող կրակ էր ան պատռուած,
Եւ ջիգերուս ցանցը ցնցող հրազոյր էր էգերու,
Որդան կարմիր էր եռուն,
Արեւայորդ հաւատամք էր հեթանոս,
Հնադարեան մեղեդի,
Հոսի բոյր էր զգլխիչ,
Ցովատակի վրինջ էր ու վարդ էր ան եղնիկի,
Նեմրութ սարի գագաթէն դէպի երկինք սլացող
Աստուածային թռիչք էր ան փետաներու միածին,
Ինձմէ ձգուած — գիս կանչող՝ բառը տանջանք էր գուցէ,
Կամիտասեան խնկարկում էր խելագար,
Եւ առ Աստուած ճեռներում էր Նարեկի,
Շարականի խազերուն մէջ հոլովուող
Հոգեվառ բառն այդ մախմուր,
Հոգեեան բա՛ռն իմ անգոյ,
Որուն կարօտ՝ թափառեցայ ամէնուր,
Եւ անձնատուր եսի մթին ծոյլերուն՝
Ես դիմեցի աստղերուն եւ փողոցի լամբերուն...

Բայց ի վերջոյ,
Անցնող ամէն վայրկեանի դէմ,
Մեռնող մէն մի բջիջիս հետ,
Հասունացման դառնակսկիծ ոսպէին,
Ես զգացի ու հասկցայ վերջապէս,
Համոզուեցայ աբդարեւ,
Թէ չգրուած իմ բառն էր ան ահարկու,
Որ թունաւոր նետի պէս
Կ'երթեւեկէր մարմնիս մէջ...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Հետաքրքրական են տարազները, որ կու տամ, լոած ըլլալով զանոնք մեծահարուստ «խավագ»ի մը բերնէն, դրաբար հասկցող, ինչպէս զոյգ օրաթերթերու խղճամիտ բաժանորդ, կիսատ-պռատ դրոց-բրոց։ Էֆենտին, որ Պուլագի չիտակին քառասուն հազարնոց իր ափարթրմանը կը տնկէր, համոզուած հակառակորդ մըն էր բարիքին, որուն ճամբաներէն զինքը դտաւ իր կեանքին մեծագոյն դժբախտութիւնը։ Մեղքցեր, որբուհի էր առէ՛ր տուն։ Ցդի։ Անչո՛ւշտ տունին ծառայէն, Ապտոյէն։ Բայց անոր արկղին ամբողջ ուժը հազիւ էր բաւեր զրպարտութիւնը սանձահարելու։ Բարի՛ք։ Ըրէք ու տեսէք։ Ու կը ծամէր իր պեխերը, ատենախօսի, ծամելով իր դառնութիւնը ու հաղորով ամէն մէկ պատգամէ առաջ.

— «Աղբիւրէն հոսող ջուր է բարիքը»։

— «Ամէն գեղին ցեխ է, երբ ջուր իյնայ վրան»։

— «Ամէն բարիք ապականութիւն կ'ածեցնէ»։

— «Որքան առատ վազէ ջուրը, այնքան խոշոր կը բացուին ցեխին կոյտերը»։

— «Ամէն ապականութիւն բարիքով աստիճան մըն ալ կը խոյանայ»։

Ու նման չատ մը տարազներ, որոնք կը լուսաւորէր անիկա վաւերական օրինակներով՝ վերցուած մեր կեանքէն ու կը պսակէր որբուհիին անլուր ապերախտութեամբը։ Ու կը հոսէին բերնէն բարեբարները, իւրաքանչիւրը հեծած իր բարիքին վրայ, իր չարժումներուն կապոցները կախած երիվարին կողերէն կամ յարդարած այդ թշուառ բարիքը իրը լումայ քաւութեան կամ վարձքի։ Անիկա կը յարձակէր գաղութին ամէնէն մեծ անուններուն վրայ ու կը բանար վարագոյրը անոնց արարքներուն վրայէն, նմանցնելով մեծահարուստ ու արժէքաւոր ազգատոհմի մը համբաւը «բուսած» գերեզմանին պատկերին։ Որքան ալ խոշոր ըլլայ բաժինը փարատոքին, այդ հա-

digitised by A.R.A.R.@

բուսանները փաստ մը կը պարունակեն որոշ մտայնութեան։ Այս աղէտաւոր, դժուար իմաստութիւնը կարելի է տանիլ իր վերջին տարրին ու ըսել Մինաս Մարանին նման միշտ տաք, համոզիչ, բարձրաձայն.

— «Քիչիկ-քիչիկ, շուտիկ-շուտիկ».

կամ

— «Հէմ լանք, հէմ երթանք»։

կամ

— «Հաստ ու բարակ մէկ գին է»։

Բայց պէտք է կենալ։ Վասնզի այս վէպը անկարող է Մինաս Մարանին տիպարը լիովին ընդգրկելու։ Ամբողջ հատոր մը քիչ կու գայ անոր բարեգործութիւնները ցուցակագրելու։ Ու, միւս կողմէն՝ տասնով հատորներ պիտի գային քիչ, այդ բարիքներով ասպաւորուած, «սրբագործուած» ողբերգութիւնները պատմելու։

Ինքզինքը հոգիներու տարբաբան յայտարարող, բայց զայն մանուկի մը պէս հաղիւ գիտցող ու հասկցող (մենք ուրիշները պիտի արհամարհենք, մեզ ունենալու սիրոյն) մեծատաղանդ արձակագիրը անշո՛ւշտ որ չատ բան գիտէր այս ամէնէն։ Բայց գիտէ՞ր իրը դոյն ու կարկառ, ոճի ելլելիք հում նիւթ։ Ջէ՞ր խորհած այարին, ինչպէս կը սիրէր տարածել ոսկերչական բացատրութիւնը հոգեկան արժէքներու զարկա՞ծ ատենը, ի՛նք՝ սիրուհիին գոհարեղէնները գրաւի դնելու, ծախելու, «մանրելու», «թեթեւցնելու» աշխատանքներուն համար այնքան յաճախ չփումի մէջ՝ այդ հինդուֆելէք գազաններուն հետ, որոնք կը կազմեն մեր ամէնէն բանիմաց, ամուր, խորապէս հայ արհեստաւորները,— ոսկերիչները։ Սահակ Պարգեւեան կ'ատէր այս մարդիրը, ոսկերիչները՝ անոնց խորամանկ ու նենգ ճարտարութեանը համար. յետոյ՝ իբեն նման խելքի, տաղանդի իւխանի մը դէմ անոնց ցոյց տուած գոռհիկ ուշադրութեան, աւելի յետոյ անոնց խանութներուն հետ կապուած հոգեկան իր փոքրութեանց համար, հասարակ գողութիւններ գրեթէ ասոնք, գոհարեղէնի արժէքէն կամացուկ մը խորուած ու պղտոր պարագի մը բերանը նետուա՞ծ, բայց որոնք տուներն մէջ Տիկինին հետ տրտում, ապանող խեղճութեամբ տեսարաններ կ'ստեղծէին, այն եղերական պահերը, որոնց ընթացքին Տիկինը անոր սուտին վրայէն ակնարկը կը զատէր, ինչպէս աղբի մը վրայէն ու կը քաշուէր իր խուցը, արցունքը մինակը թափելու։

Իրողութիւն էր, որ իրմէ զատ աշխարհը «անարգ» նկատող մեծ գրագէտը չորս-հինգ ամիսէ ի վեր բացառիկ ատելութեամբ մը լեցուած կը զգար ինքզինքը այդ «հոգեպէս արուաղիճ» ու «եօթնակոթան» արիկային դէմ, վերաբերեր, որոնք տաղանդին վայել չուքով ու բաւի ճարտարագէտի մը դիւրութեամբ կը հարէր խօսք թէ գիրի մէջ։ Թափանցած՝ անոր ասպմավարութեան հեռաւոր հանգոյցներուն։ Դժուար պիտի ըլլար հաստատական պատասխանով մը գոհանալ ու անցնիլ։ Մենք հազար ու մէկ նկատումներով, արդար կամ պատրուակի, կը հանգուրժենք մեր չրջապատը, միշտ մենէ հեռու ըլլալով անկէ հասնելիք ամէն չարիք։ Ինչպէս մահացու հիւանդութեան մը հետ չենք հաշտուիր մինչեւ հոգեվարք, այնպէս ալ մեր չուրջը յաճոյ վտանգը ուղղուած կը դատենք մեզի մօտ ուրիշներու, բայց ո՛չ՝ մեզի՞։ Անդորրացումի այս պահանջը միամտութի՞ւն է, հոգեկան ծուլութի՞ւն մը։ Ո՛րը որ կ'ուզէք։ Պարահանդէսի մը մէջ մեր սիրածին չուրջը որոշ իր ձգտումովը ինքզինքը մատնող որսորդը պի-

digitised by A.R.A.R.@

ուի գիտենք մենք դուրս ապահովութեամբ մը։ Միամի՞տ, սիրային մարդին վրայ Սահակ Պարգեւեանը, խորաթափանց իր զգայնութեամբը։ Ո՛չ անչուչա։ Բայց մանուկ էր անիկա միւսին վրայ, ուր գիտութիւնը կ'արժէ ոչինչ ու կշիռ ունի գործելը միայն։ Ու ա՛ն՝ որ երեսուն տարի չէ հակազդած նոյնիսկ իր ակարութեանը, գժուար կը պղտորուի իր գծած հունին մէջ։ Բայց կ'ատէր, աճեցուն, հոտող զգուանքով մը։ Գիտցա՞ծը։ Տեսա՞ծը։ — Ոչինչով նոր։ Մինաս Մարանը նոր ամուսնացած էր գեղանի իր արկղակալուհիին, որուն խորունկ աչքերը Սահակ Պարգեւեան կը նմանցնէր հնդիկ իշխանուհիներու աչքերուն, յայտնի հանոյքով մը յամենալով, շաղակրատօրէն, եւ որ եղած էր բերդ մը, օր մը, վրան բաց կատակի մը դէմ, վիրաւորելու չափ միշտ շոյուած գրագէտը իր զգայուն կէտէն, խօսքի գետինէն։ Շարաթ մը յետոյ անիկա տեսաւ հնդիկ իշխանուհին, որ կարմրած էր ելեր քովնտի ռենեակէ մը։ Սփլանտիտ պանդոկին ներքին մարտարապետութիւնը լաբիւրինթոսեան հով մը ունէր, որ իր մէջէ մէջ ռենեակներուն, իրարու անցնող նրբուղիներուն կիսամութովը կը տպաւորէր օտարները։ Սահակ Պարգեւեան, սեռային հոսանուտին դէմ արտակարգ իր ընկալչութեամբը, խռովա՛ծ, չինեց այդ իսկ բոպէին, իր փոքր վէպը։ Անոր տկարութիւններէն մէկն ալ սա էր, շատ հին օրերէն սկսեալ։ Իրեն պատմուած ամէն գրուագ կը խորանար անոր մէջ, յատակ կազմելու չափ օր մը «գրուելիք վէպի մը», ինչպէս արագ յուզումի մը իրեն հպանցած ամէն աղջիկի կամ կնիկի դէմք ունոր կու տար սեռային բարդ կեանքի մը հեռանկար ոստայն մը։ Փառորդ մը յետոյ, Մինաս Մարանը, նոյն այդ քովնտի ու կամարակապ նրբուղիէն։ Անիկա խօսեցաւ սակայն սովորականին պէս ու անցաւ գործին, առանց ակնարկի դէպի հնդիկ իշխանուհին, որ կը պահէր իր թիթեւ կարմիրը։ Ինչո՞ւ սա պատկերը անիկա ընդարձակեց՝ մէկ ծայրը ընդարձակելու չափ դէպի իր տունը, հոնկէ՝ Մարանին վիլլան։ Վէ՞պ։ Ո՛վ գիտէ։ Անիկա պանդոկին առաջամասին փառաւոր պատշգամին տուած տրտում իր փորը՝ պահ մը դիտեց անցուդարձը, ամէնէն տխուրներէն մէկը անոր դիտած համապատկերներէն։ Անոր ակնարկը հեղուկի պէս կ'առնէին երիտասարդ աղջիկները, որոնք թեւաւոր ու հով, ամէն մէկը բացուած, մաքնիսուած դէպի խորչը սեռին։ Իջաւ ցած։ Զառաւ հանրակառք, բնիկներուն աղտէն ու ոջիլէն սարսափած ըլլալուն։ Հասարակաց պարտէզի կտոր մը, քաղաքին մէջ յանախադէպ բուրաստա՛ն։ Հոն, պանդուխ մը շուքին, նստարանի մը վրայ, առանձին, անիկա այցուեցաւ կրկին հընդիկ իշխանուհիէն։ Ինչո՞ւ։ Դէմը ոչինչ, նման սեսիլէ մը թելադրող։ Ցեւոյ անդրադարձաւ, որ ձեռքէն փնտռուած, կախ էր կմախքը կիսաբաց վարդի մը, վերցուած արկղակալուհիին պիւրայէն։ Նոյն ատեն անոր մէկ մատը քսուեր էր մազերուն, ուրիշ դեղի տարտամ բոյր մը փրթած, ելած, փակած էր ռունգերուն, յամառ ու կծու։ Դառն վարանում մը լուսաւորեց զինքը։ Ինչո՞ւ։ Անոր լքումի, կորանքի պահերուն կը դուդադիպէր այս զգայութիւնը, ամբողջ ուղեղովը։ Սեռին համար ապրող մարմիններուն կանխահաս ժա՞նգը, թէ աւելի խոր տրամութի՛ւն մը՝ յատակը այս ինքնալքումին։ Տարի՛ քը։ Որ կամաց-կամաց կը ծանրանար, կը դանդաղէր, անոր մարմինին չատ մը խորչերուն մէջ արդէն դնելով իր կրախտին հանդոյցները։ Ցիսո՞ւն։ Անիկա պիտի կենար բառին վրայ ու պիտի բռնէր մօրուքը, որուն ատեր կը թուէր քիչ մը աւելի ընդդիմանալ, թափած մեռաք-

digitised by A.R.A.R.@

ոչ իր շրջիկներ։ Այդ տարիքի պատկերին կ'ընկերանար ուրիշ մը, Մինա՞ն, թոյլ ու նուրբ հոտերով, մանկօրէն տխուր։ Ի՞նչ էր կապը յիսունին ու քսանին մէջ։ Չէր յիշեր, թէ եղած էր ինքն ալ այդ տարիներուն։ Մենք կը մոռնանք ատիկա, ելլալ, ազատիլ չկրնալով երկաթէ կապագարէն, որ տարիքինն է մեր հոգիին վրայ։ Ն'երպէնք, յիսունին մեր պատանութիւնը, բայց յիսունի գոյնով ու հէնքով։ Անոր մտանները ելան կրկին իր մազերուն։ Ահա անմիջապէս, յիսունը, սեւ ու երկար նռնիի պէս գծուող իր դէմքով։ Փախչելու համար սեւ այս ակերոնէն՝ ինկաւ վար, պանդոկին մեծ սրահը, պատը լման բռնող հայելիին մէջ։ Անոր դէմքը գերծ էր տակաւին ծերութեան, հիւծումին կնիքէն։ Ու անոր տազանդագեղ ճակտէն վեր անթառամ բան մը, հո՛վ մը, արիւնին խենթ օրերէն։ Գոհունակութի՞ւն, պատրա՞նք, անցեալի ճնշո՞ւմ։ — Մէկն ու միւսը գառածած էին զայն, բացած անոր լեզուն ու վիրաւորած հնդիկ իշխանուհին։

Դրէք ժամանակին փոչին մեր տաղնապներուն շուրջն ու վրան։ Ինչպէս կ'ելլաք չատ բան։ Տարի առաջուան այս պատկերները ու առանէն անդին երկարող իր ծանօթութիւնը Մինաս Մարանէն հարթ տախտակներ էին գրեթէ, այնքան փոչին թաղած, կապած էր կարկառուն մասերը անոնց։ Մեր անցեալը չատ յանախ կը նմանի այսպէս մթուրով կնքաւոր տախտակներու։ Մեր դժբախտութիւնը հոն կը սկսի, երբ չենք հաւատար այդ ողջ-ողջ թաղումին։ Այսինքն՝ ամէն տհաճութիւն մեզ ճամբայ կը հանէ դէպի խաղաղ գերեզմանոցը ու չենք կրնար մեր ներկան տեսնել զատ, ապատ՝ փոչիէն, որ կեանքին փոչին է գիրքին՝ ինչպէս սիրտին էջերուն վրայ։

Երբ, գարնանամերջ սա յեսմիջօրէն, մեծատաղանդ գրագէտը դէմ առած Մինաս Մարանը իր աշխատանոցին մէջ, իբր թէ մտիկ կ'ընէր անոր, ճիւաղային ո՛ր օրէնքով, նայելով հանդերձ անոր աչքերուն, գտաւ ժամանակ վերադառնալու համար սա երկար քաղաքին, որուն գլխաւոր գիծերը արուեցան վերի էջերով։ Ցիշելը ապրելէն կը տարբերի սա արագութեամբ։

Ու մինչ կը պատմէր չեղոնչաչառ Մինաս Մարանը, ինչո՞ւ մեծատաղանդ արձակագիրը մասնակի յամառութեամբ մը այցուեցաւ, զգեստուեցաւ պամպուական ներշնչումնք քերթուածէ մը, զոր ստորագրած էր յարգուած եպիսկոպոս քերթող մը, խոր ծերութեան մէջ, դիմանալով չքեղ իր մազերովը, կիսադարեան իր ռոմանթիզմին պատանէնէրուն ետին, հանդէպ հանդէս պտրտցնելով վառ իր ձայնը ու ոգեկոչելով Պետրոս Դուրեանի, Մկրտիչ Պէշիկթաշլեանի օրերը, երբ գրաբար ուղերձներ, տաղաչափական անթերի յօրինուածքով զիրար կը խաչաձեւէին ու «Ան կոյսն», «Ան թիթեռնիկն» ու «Ան զեփիւռն» ոտանաւորներ մրցումի նիւթ էին ուսանողներու մէջեւ։ Թող պատմէր Մինաս Մարանը։ Գրագէտը չորս անգամ ինքզինքը գտաւ պամպուին տակ, իրական այդ թաւուտին մէջ, հնդիկ որակուած իշխանուհիին հետ, թարմ, հոտաւէտ ու ախորժաքեր։ Որուն պատկերին մէջ երեսը կը փրթէր, կարմրած, մարանեան հիւրանոցին նը-կուղներէն ու միւսը կու գար նստելու իր մօտ, հինաւուրց ու խեղճ թաւուտին խորը, «խոշոր ու ըղձական», ինչպէս ըսեր էր օր մը անոր ականջներուն, փսփսուքով ու ջերմին։

Սկիզբները, առաջ հովով այս պատմումը Մարանին, քիչ-քիչ առաւ իր իմաստին լիալիր եղերականութիւնը։ Բազմազգի մարդիր, նոր ժամանած ինքնատիպ ու խենթ լորտեր, դրամ ու զբօսանաւ,

digitised by A.R.A.R.@

փառք ու նորաղի քայլերդներ, կիներ ու աղջիկներ, ինչպէս կուլտ փոր՝ անչուլտ հեքիաթին չէին պատկաներ միայն։ Կային անոնք լայն աչխարհին մէջ ու կային քիթին խակ տակը։ Ի՛ր լլան օրեր եւ պահեր, երբ մեր կեանքին ընդհանուր գրկանքը յանկարծակի կ՚ընդլայնի ու մեզ կ՚ողողէ։ Ու եղելութեանց դորչ ջուրերուն վրայ մեր «օղակը» կը խուսափի մեր մատներէն։ «Մահուան իջնալը» գրական ուռուցիկ բացատրութիւն մը չէ, մինակ՝ չատ հաղուադէպ ըլլալուն դիւրաւ չ՚ընկրկեր մեզ։ Անչուլտ հոյակապ սուտ մը չէ, Մարտին նման, Իշխան Զօղոս Արծրունին։ Ու կան այդ բորբոսած հնգկահայերը, ոսկիին մէջ կրացած, որոնց վրայ անիկա չէր դադրեր իր տպատնի վէպերը ողջունձուելէ, էկզոթիք հրախաղութեամբ ու սատիք երակուսով։ Ու կային հնդիկ իշխանուհիները, վաւերատիպ, խեցգետնի եբեսներովը, հարաւի ջերմ ու հեռու ծովերը, ու սուտակահոս Գանգէսը, կապտաւուն հմայապատկերի մը ծալքերով։ Կային, եղան ու անգան անոր նայուածքին դաչտերէն։ Իր մանայատկութիւններէն մէկն էր ուրիշներու մտիկ ընելու ձեւին տակ ինքզինքը ապրիլ ու ապրիլ իր երազները։ Մարդիկ անչահեկան էին անոր համար, երբ պատմէին սեռէն դուրս, ու դուրս արուեստէն։ Առելի՝ երբ կը պատմէին մանրամասնութիւններ որեւէ վրիպանքէ։ Թողուց, որ փղչացին բաւերը սահին իր վրայէն։ Ցեղոյ զգաց, որ արտմութեան, տհաճութեան բացատիկ վիճակ մը չինուեցաւ ինքն իրեն։ Ամիկա ձեւն էր, որով կը պտըտին կիները մեր մտքին մէջ, եւ որով փարչամակուած կը դառնար Սոնան, Մարանին վիլլայէն, դաչնակը, ոչ թէ դասը՝ բեռի մը պէս ընդարչելով։

Զէր մոռնար օրը, ապատումը, անոր իմաստը. Մինաս Մարանը, որ կը կանոնէր ժամադրութիւնը։ — Գրապէ՛տը, որ մտիկ կ՚ընէր ու նոյն դիծի կը բերէր հնդիկ իշխանուհին, պամպուլ թաւուտներու, իշխանները ու իպացող իշխանազուններու Արեւելքի արքունիքներէն։ Կա՞պը՝ այս ամէնուն եւ Մինաս Մարանին, որ զզուելի էր, երբ բերանի տեղ աչք ու մատ կը խօսեցնէր կիներուն համը թէլադրել փորձած ատեն։ Ու կապը՝ Սոնային ու այդ ամէնուն, հիմա, ինչպէս այն միւս իրիկուններուն, երբ խումբ ծագիկի մը պէս կ՚անցնէր, կը դառնար իր մենութեան, մերժելով պտոյտ ու լեզու։ Խորհուրդին հետ քալելու մեր ձեւը նկարագրի մաս կը կազմէ։ Մէկը պիտի ընէ ատիկա ադմուկով ու արիւնով։ Ուրիշ մը՝ ներս պիտի նետէ իր տառապանքը ու պիտի անցնի մութ պատգամի մը նման, լուսաւորուելով մէկ անգամ, այն ալ դերեզմանի սեմին։ Սոնա՞ն։ Բայց խորհուրդը մանկութիւն միայն չունի։ Տասնէն վեր ամէն ձեւ անկէ կապուած հանդոյց մըն է։

***

«Սինլքոր», «էջ», «կաւատ», «կոկորդիլոս», «արուագիճ», եւ այլն, եւայլն, Մինաս Մարանին պատմա՞ծը.

Ամէնէն առաջ, մտածին պէս ներս

— Ցմահաճոյք, էֆէնտիմ, քմահաճոյք...

Ամէն խորհրդաւոր մարդու նման, որ վաստկած է այս վերաղիրը ճակտի քրտինքով ու «տոքին ցեխով» (Պարգեւեանի կենդանապիրը կը թելադրէր ամօթն ու կայրը մարդուն ասպարէզին եւ՝ ձայնէն մունջ մեղաւորի սուրբ սրբոց կերպարանք մը) Մինաս Մարանը

digitised by A.R.A.R.@

կը տիրէր անորոշը, երկդիմին, կէսը, բառի՝ ինչպէս չարժումի մէջ։ Ասպարէզի հեղո՞ւմ, հեղինակութիւն պահելու դասակա՞ն մարզանք, թէ յախուռն ը՛ղալ չուղող մարդու վերապահութիւն,— սա զգուշաւորութիւնը, կէս-բերանութիւնը կարծես կը հաշտուէր դիմագիծին պաղ ու կապտաւուն սափրուածութեան հետ։ Մարդիկ իրենց դէմքը իրենք չեն չիներ ուզածնուն պէս, այլ կ'առնեն անոր ծուէնները, ժըլատ ստացումներով ու կը հիւսեն անոր պատառը կկոցին տակը իրենց խղճմտանքին, անծանօթ՝ ժատին, որ կը նեաէ հէնքին լարերը, բայց հաւատարիմ՝ կչոյթին, որ մեր արարքներուն գնացքն է մեր մէջ ու մենէ դուրս։ Ու կ'աշխատինք ուրիշներու լուծին ներքեւ։ Այս հանգամանքը զայն կը պաշտպանէր ընթացիկ զիջումներէ, որոնք մեր դիմակներուն — կրնաք ճշդել՝ դէմքերուն — հետեւանքը եղան, վաղնզի, ամէնէն քանուկ ճամբան մարդէ մարդ, ինչ ալ ըսեն, դէմքն ու աչքերն են նորէն։ Մուրացկան մը անվրէպ է այս օրէնքին ճանաչողութեան մէջ, երբ անցորդներէն կը հետապնդէ մէկը ու հանդարտ կիրը ճակատ քրտինքով ու «ոտքին ցեխովը» (Գարգեւեանի կենդանակը ձգէ միւսը։ Մինաս Մարան, միշտ դիմակով, այս վարժութիւններուն շնորհիւ կ'արդիլուէր մանաւանդ աւելորդ զեղումէ (կիրք, զգացում, դուք, ատելութիւն եւ այլ նման թեթեւութիւններ), որ եթէ ուղղակի կորուստ մը չէ, շահ ալ չի բերեր մութին դործողին։ Ան՝ որ ստրիներով արեւէն հեռու կ'ապրի, տեսնելու ըզգայարանքին մէջ խորապէս կը վնասուի։ Ու արեւը երբեմն չայլելեց մեր խղճմտանքներուն՝ գրեթէ մեր կեանքին լման տեւողութեամբը։

— Գմահաճոյքը օրիորդին

որ,

տխուր, բայց հայեվար իր դաստիարակութեամբ շատ լաւ հասկնալի անճարակութեամբ մը (Մինաս Մարանը դէմ էր մեր աղջիկներուն տրուած կրթութեան, մասնագէտ իր հաշիւներո՞ւն, թէ համոզման մը հպատակ։ Անիկա չէր կշտանար զմայլէլ հրեաներուն թափանցող, առատ շնորհներուն, ու չէր անդրադառնար, որ իր ասպարէզին թաքուն գոհունակութիւնը կը պատդամէր, հիներուն բառով՝ հացին պէրէֆէքը) մերժեր էր ճաշը Սփլինտիս օթելին մէջ, Իշխան Գօդոս Արծրունիին։

Ցարգալից ու ինքնաբերաբար լրջացած, չարեց անիկա իշխանին տիտղոսները, իրարու ետեւէ, դասը գոց գրուցող պատանիի մը աշխուժով։ Անհաւասարելի իր յիշողութի՛ւնը, որ անատոլուցի կեղացիին կոտրէն չիներ էր այս դարավերջիկ ու պատկաւելի ազգայինը, պահու բերո՞ղ մեր հասարակութեան, ինչպէս կը փոտաքանուէր մեր մամուլին էջերէն։ Անոր գերագոյն առաքինութի՛ւնը։ Ոչինչ կը մոռնար ձեւէ ու վանկէ։ Ու չէր կենար գործելէ անոր մտքին մեքենան։ Այսպէսով է, որ բազմութիւն ու վայելչութիւն էին անոր բերանին մէջ բոլոր տիտղոսները, այլափոխելու չափ ընդհանրապէս զուսպ ձեւը մարանեան արտայայտութեան։ Հիւրանոցներու մրթնոլորտը վերջ ի վերջոյ կը տպաւորէ իրմով ապրողներուն հոգեխառնութիւնը։ Էքիֆէքը կը դադրի պատահական իր իմաստէն, վերածուելու համար հիմնական հոգեմասի։ Ուրիշներուն դէմքը, դրամը, տիտղոսները կրկնուելով-կրկնուելով կ'անցնին մեր ձայնին, մենէ անկախաբար։

Ստոյգ էր նոյն ատեն, որ եղանակին ամէնէն կարկառուն անձնաւորութիւնը, ազգային շրջանակներու համար, այդ Արծրունի Իշ-

digitised by A.R.A.R.@

խանն էր, արեւելահայ տնգուղական թատերագիրէն ալ աւելի, հաւատարակէս հետաքրքրող մտաւորականները՝ ինչպէս առեւտրականները, մայրերը՝ ինչպէս աղջիկները։ — Օրուան մա՛ղը։ Անոր այցելութիւնները օրերով կը պատմուէին, հետզհետէ «ճոխացուած» ու «բարեփոխուած»։ Ու շահեկան կը դառնային իր ապաւորութիւնները ղպրոցէն կամ շուկայէն, առաջնորդէն կամ թեմականի ատենապետներէն։ Ու բերնէ բերան կը շրջէին անոր առածակի պատգամները, ինչպէս նաեւ լայն ու առատ «նուիրանքները», բա՛ռ՝ զոր կը գործածէր յամառ դաղընկարանութեամբ մը, յարգելու համար Կալկաթայի ճեմարանին հայկարանութեան ինքնատիպ իր ուսուցիչը։ Մասնաւորաբար զայն ձեռքէ ձեռք կը ճանային խլել մեր մտաւորականները, թշուառ ու մեծոգի բանակ, սրբազան ուխտին ապատարիո՛ւ, մեծով պղտիկով, անգործ ուսուցչապետներէ ու թարշամած քերթողներու խայտարղէտ խմբակէն առաջնորդուած։ Զայն ափ էր առած արդէն մեր միտքին մեծագոյն առաքելալը, Իշխա՛ն Սահակ Պարպեւեան, ինչպէս յայտարարած էր ինքգինքը անոր երկրորդ հանդիպումին ու տարտնդաւոր իր շնականութեամբը լուսաւորա՛ծ Իշխանին տրամադրութիւնները հանդէպ աշաղուրկ, մեծավաստակ դաստիարակի մը, որ իր ծաղիհար պնդերեսութիւնը, վոսպուրականեան ուղղամտութեամբ, յաջողած էր հաշտեցնել հնգկահայ Իշխանին «փափուկ ու գորովալից սրտին» սիրալի՛ արտայայտութեան, ապահովելու համար տպագրութի՛ւնը իր ընդարձակ մէկ դիւցազներգութեան, ժամանակակից դէպքերու բանաստեղծօրէն հեղո՛ւմ, «վսեմ ու վերաբերեալ» ոճով մը, թելադրուած՝ իր քարտուղարներուն եւ որմէ արտասաներ էր Միջերկրականի հոյակապ նկարագրակա՛նը, տեսնուած՝ չունեցած աչքերով։ Խօսք ու խոստում Իշխանին սիրական շնորհները եղան ու ամէն անոր մօտեցող անօթի գէր մէկ երկու գիշեր յոյսով քուն անցուց։ Խոստումի մարգին վրայ Իշխանը վար կը մնար միայն արեւմտահայ ուրիշ բանաստեղծ մը, որ դարձեալ հնդկական «ափերու մերձ», «վանառականութեան եւ մուսայից» ծառայելով հաւասար «եռանդամբ», դիրած էր պատկառելի հարստութիւն, ու գործը հաշուեյարդարի ենթարկելէ յետոյ, կ'ուսումնասիրէր Եգիպտոսը, անցողակի, հաստատուելու համար յետերպա, վերջնականապէս, «իւր ձմեռը ապասելու» լուսոյ մեծ ոստաններէն մէնոյն մէջ։ Մինչ այդ, կը բանախօսէր ո՛ւր որ ըլլար իրեն հրաւէր։ Գրողներու Ֆոնտ կը հաստատէր օդին մէջ, մեր գրականութեան բոլոր գործերը վերտին կը հրատարակէր ծրագիրներու վրայ ու ազգային մշակոյթին իր բոլորանուէր պաշտամունքին, ապասին իբր նախախայրիք, փառակազմ հատորի մը մէջ կը հրատարակէր երեսուն ու աւելի տարիներու «Ճըգանց երկուսիմ» իր ոստանաւորները, իր զնդին փառքն ու անակին տրիուր գեղեցկութիւնը երգող, իր նամակները՝ առ վեհապետս ու քաղաքական նշանաւոր անձնաւորութիւններ, մեր դատին շուրջը, հընդկական ջուրերուն վրայ ծովակալներու եւ մարաջախտներու իր ըրած ընդունելութիւնները, ազգային հարցին իր մատուցած ծառայութիւնները, զանազան խորհրդարաններու, զօրավարներու, նախագահներու, արքաներու իր ուղերձած հեռագիրները, միշտ իր քաջակէն ու անոնցմէ ստացողական պատասխանները,— բոլորը մէկ խմբուած Անապատական վերնագրով հաւաքածոյի մը մէջ։ Ու առաջին այդ շնո՛ւրհը ակօսը կը բանար անշուշտ, բացի օրինակ հանդիսանալու համար «այլոց», որպէսզի ցանկագործուի մեր բանաւոր անդաս-

digitised by A.R.A.R.@

տանը աւելի զօրեղ «ուղիներէ», աւելի խոր արտերով ակօսուած։ Իշխանն ու բանաստեղծը դիրար կ'արհամարհէին խորագէս, առաջինը՝ մեղրին հանդէպ իր ընդոծին լրբութեամբ, երկրորդը՝ իր ոսկեպատ վերարկուին տակ չհալեցուած մուրացկանութեան իբր հակազդում, բայց դիրար կ'ամբողջացնէին հանդէսներու ատեն, պատրանք պատճառելու չափ անպատի՛ւ Գարդեւեանին։ Դիտուած էր, որ երկուքն ալ բուն սիրտ էին։ Առաջինը կը բխէր զրպանէն, ուր կը հոսէին իշխանական տափաստաններու ոսկիները։ Երկրորդը՝ այլքերէն, որոնք կարօտի եւ չնորհի մէջ լմուած, թլչած, աշնան երկինքին նման կը թացնային ամէն ամպէ ու հովէ։ Բայց...։ Երկուքն ալ կը սարսափէին Գարդեւեանէն, որ իր անվրէպ սրատեսութեամբը դատած էր տիպարները դեռ առաջին շաբթուն ու բանաձեւած իր ապաւորութիւնը իրեն վայել պերճ ու ցնցող բառերով։

Հակառակ ատոր, եղանակին աւագ շահեկանութի՛ւնը, անշուշտ նորէն Իշխան Գօղոս Արծրունին, որ բանաձիրական, հնախուզական, ազգասիրական իր բաղմազգի պտոյտներուն քով — ո՛վ մեր սոփեստութիւնը, որ տարիքէն ալ չի վախնար ու կը լրբանայ, ծերերուն նըման ցնդելով — զդալի էր ըլլած ուրիշ աւելի սրտառուչ հաւանականութիւններ։ Անիկա պերճութեամբ ու հաւատքով կը խօսէր — ոսկիին գոլորը մեր բառերուն կու տայ այս ինարակը — համեստ, աղքատիկ, զարգացած օրիորդներու արժանիքներէն ու կը թրջուէր արեւմտահայ բանաստեղծին յուզուած արցունքներովը, երբ առաջնորդը, ճարտար ու քիչ մը չար խազարկութեամբ, նեղի ձդէր երկու ականաւոր հիւրերը, սրբուհիի մը օժիտ ճարելու դժուար ձեռնարկին մէջ ու դպէր, քիչ մը խոչոր, Իշխանին «փոփուկ» բարերուն, անյոյս հեգնութեամբ մը իր բեկումը պարզելէ վերջ բանաստեղծին երաչտ քաշէին։ Արծրունեան «թագադիր» ու «թագակիր» տոհմին այնքան անակնկալ, բայց անհերքելի ատ նոր վիրընծիւրումը, իր պարզուկ հեզումներով, օրինակի մը համար՝ սրբուհիի մը բունիկ մը կառուցանող իր ձեւին մէջն ալ, սրտառուչ շնորհ մըն էր Ամենակալին անհաս պատգամներէն։ Շինուէին, հոգ չէ թէ բուներ, փոխան դղեակներու, ապարանքներու, արքայամուրներու։ Շինուէի՛ն։ Վանդի, մի՛շտ անհաս կամօքն Ամենակալին, ճակատագիրը ինչե՛ր չէր հանդերձուած ողջունելու, սուրի ասպետներէն մինչեւ գրչի իշխանները, ինչպէս էր պարապան այժմ ակնանուր, բայց արդէն իսկ անմահութեան որդեգիր քերթողին համար, ծաղումով, ընտանիքով, հայրանունով իսկ որբ մը ատենին։

Մինա Մարան, «պատուական ու պատուաբեր» այդ ազգային, խորագէս դժգոհ էր Օրիորդ Սոնա Գոհարեանէն, որ ո՛չ միայն անճարակ էր եղած «դերազանց առիթը» չահագործելու, այլեւ պատճառ կը պառնար Իշխանին բարի որամադրութիւնները խանգարելու հայ աղջիկներու մասին։ Միշտ պատուական իր հաւաստումով՝ անիկա ի՞նչ էր քաշեր սրբագրելու համար այս կարգի թիւրիմացութիւն մը, որ ծնունդ էր առած Օրիորդ Թիթա Ձիվանպաղէի անպատշաճ ընթացքէն։ Արեւելահայ թատերագիրը ու անոր արարատեան նշանաւոր աղջիկը չաբաթներով վայելած էին Իշխանին առատաձեռնութիւնը, աշխարհիկ հանդէսներէն մինչեւ եւրոպացի մեծահարուստներուն միայն մատչելի պտոյտները Վերին Եգիպտոս, Նեղոսի վրայ եռթիւրով ու բնիկ սպասարկութեամբ, պատմական վայրերու այցելութիւն ու գիշերազբաղ ուրիշ հանոյքներ, առաւ «նուիրանք», ճաշ ու ծպտուած

digitised by A.R.A.R.@

պարեր, «իւր սարօք»։ Երած էին այս ամէնը, հայր ու աղջիկ, բայց չէին ալ մոռցած լուսանկարելու Իշխանին մենագարութիւնները, յայտարարելով զայն «փախուկ», «ցնդած» ու «քաւթառ»։ Թատերագիրը առաջ էր գացած, զայն գրուելիք խաղի մը իբր հերոս ծաղրանկարելու եւ քապարէներու մէջ անոր շարժուձեւերը դերած չարապինդ ու հարազատ տաղանդով։ Լեզուական խնամիութենէ մը մեկնած այս մտերմութիւնը (Իշխանը կը խօսէր թերխաշ ու հինուկ բարբառ մը, որմէ գրաբարի խեցիները երբ թափէին, կը մնար արարատեան արդի լեզուին նախատարերքը), առանց թարմ ու չփացած ու հարտաբ օրիորդի մը վտանգին, մարդահաճ ու դերասան թատերագիրը անշուշտ պիտի տանէր բնական իր հետեւանքներուն, ամէնէն քիչը՝ ոանկ համեստուկ ոոմիկ մը ապահովելով իր ծերութեան ալ վերահաս օրերուն։ Անշուշտ, ամէն արարած ի վերջոյ ձեւի մը գիտէ թափել ապրելու իր պարտքը։ Մարդահաճութիւնն ալ, դարերէ ի վեր, ձեւ մըն է ապրուստի, ինչպէս են, աւելի մօտ ժամանակներու մէջ, ուսմնարութիւնը կամ ժամկոչութիւնը (բառերուն տուէք այլաբանական իմաստ)։ Իր բարեկամին, առաջնորդին նման, Մինաս Մարանին խղճարկութիւնն էր եղած ջուրը ձգել ոոմիկին հարցը, պատմելով, ծաղրանկարելով թատերագրին Նիրկայացումը Իշխանին քարքերէն։ Ու երբ աւելին, միշտ իր հաւատումով, ջախջախելով դրեթէ «վերջացած» ամուսնութիւնը Ռիթայի եւ Իշխան Պօղոս Արծրունիին։ Իրականութի՞ւնը։ — Սովորական, փոքր, տափակ պատահմունք՝ թեթեւսոլիկ, չփացած աղջիկի մը արտօնումներով, եւ միւս կողմէն՝ իր դրամին համար, ամէն տարօրինակութիւն իրեն նեբելի դաւանող մարդուկի մը փախուկութեամբը պայմանաւոր։ Համբուրած էին զիրար, ծպտուած ու ծանօթ ու նախատած զիրար, թատերական ջերմութեամբ, հին մեհեանի մը քարայրին մէջ, մինչ ծուռիկ ու խորտուբորտ կեղծիքով թատերագիրը կը հսկէր մուտքին ու կ՚ուսումնասիրէր, տկար աչքերովը, մեհենադիրներուն նուրբ կորաձեւերը։ Աւելի՞ն։ — Բաւ էր ատիկա։ Մարանին տաղանդը։ — Ի հարկ՛։ Տաղանդը, դերազանցապէս ազգային, իր խառնուածքին։ — Բամբասել ու կոծանել, հասաւ անիկա իր նպատակին, Օրիորդին իրական զգացումները պարզելով, չշափելի ընծայելով, կատակերգական արարուած մը բան սարքելէ ետքը երկուքին մէջտեղը. «կանանչ ու կծուց», տարապղպեղի մը պէս, ու խորապէս քիփիկ, յաջող՝ ինչպէս մոլիեռեան Ֆարս մը։ Միշտ իր հաւատումով, անիկա հեղինակեր էր այս սատանութիւնը Սոնային հաշուոյն։ Զինքը շատ աւելի իոր ճանչցող առաջնորդը դլուխ կը թօթուէր մեղմ, թերահաւատ ու անթափանց, երբ մարդոց հաշիւները քննէր ինքն իրեն ու կը զգուշացնէր Պարգեւեանը, խնայելու համար իր համայնքին՝ պատրաստուող բուռն բախում մը արեւմտահայ ու արեւելահայ երկու մեծ դրագէտներուն, հաւասար՝ իրենց մեղքովը, ինչպէս տաղանդովը։

Ցիսունի վրայ, թէեւ քառասունն ալ չանցած, այնքան հարաւի սպասող ամապարանքը ճմռկած էր անոր արտայայտութեան արտաքին կտաւը։ Իշխան Պօղոս Արծրունի Հնդկաստանէն Եգիպտոս էր եկած կէս մը զուարճանալու, կէս մըն ալ գործով, զոր չունէր։ Ան կը կրէր իր տիտղոսները ժառանգօրէն ու կը կրէր միջնադարեան մեր նախարարներուն դիծովը։ Անոր մերձաւոր պապերը պահեր էին հարկաւ եկեղեցիին ու ճեմարանին գործերը, դար մը ամբողջ, Կալիկաթայի թէ Մատրասի մէջ, ու կտակած իրենց զաւակին իրենց աղտերն

digitised by A.R.A.R.@

ու մաքուր ոսկին։ Ուսումնակա՞ն, քանի որ Լոնտոնի շատ նշանաւոր մէկ վարժարանին ընթացքն ունէր աւարտած, վաճառականական ու կենդանի լեզուներու կրկէսէն. անիկա կը կրկնէր ընդհանուր տիպարը, որով վերջանալու են առնուազն իրենց հանրային դերէն, եթէ ոչ՝ արիւնէն, մեծափարթամ հետերու յետին, «հաստ» շառաւիղները,— այսինքն՝ «գաւառպար», «տիրացու», կամ՝ «անառակ» ու «ցոփ» կենցաղօք «վատնեալ զաւուրս իւրեանց»։

Իշխան Գօղոս Արծրունի արդիական իշխան մըն էր մա՛նաւանդ բարոյական մարզի վրայ։ Անոր համար դիրքի բառեր էին մեր քաղաքակրթութեան նորագոյն պատգամները,— ի՛նչ որ նուաճող ազգերու ընտրանին դեռ կանգուն կը պահէ իր կարգ մը պատրանքներուն վերեւ։ Շատոնց պարպուած իր պապերուն կրօնքէն, պէտք չէր զգացած հոգեկան հաւասարակշռութիւն մը ճարելու, քանի որ դրամը լայնծուն էր ըրած աշխարհը իր ոտքերուն ներքեւ։ Մենք, Արեւմուտքի նոր փարիսիներ, կը տառապինք զոյգ հարցերուն ի խնդիր։ Իշխան Գօղոսները չունին անօթութեան զգայարանքը։ Ասկէ՝ բարոյական հարցին դէմ անոնց ահաւոր խաղաղութիւնը, օգոստափառ անտարբերութիւնը։ Ազգ մը չունին անոնք իրենց կռնակին, որպէսզի ստիպուին գանէ արիւնի գնով քառորդ դար հեղ մը ըլլալ լուրջ, վտանգին դէմ արի ու մահուան հետ խօսելու տրամադիր։ Կ՚ըսեն սուտը, իրաւը, նենգը, նոյն օգոստափառ այլուրութեամբ ու կը փախչին իրենց ժամանակէն, նեռուելով հրամանին ապառող գործիքներու մէջ։ Իշխան Գօղոսները վար են Գարդեւեաններէն՝ իրենց արձակութեանց մէջ հետապնդած հեռանկարներով։ Ու չունին վերջիններուն պարտադիր չքմեղանքը, քանի որ մեղքն ու լրբութիւնը կը գործադրեն իրենցմէ վեր օտարութեամբ մը։ Մահակ Գարդեւեան գոնէ փորին կալանաւորը եղաւ։ Իշխան Գօղոս Արծրունի՞ն։ Կարճ պէտք է ըլլալ։

Անիկա կը խօսէր ու կը գրէր դիրքի բարբառով, ինքնավստահ ու յիմար, Գարդեւեանէն տարբերելու չափ փառաւոր ոչընչութիւն մը։ Անոր տարօրինակութիւններէն մէկն էր տեղ մը հանդիստ չկրնալ դտնելու իր մենագարութիւնը, հասարակ արիկայ, դրամին սղտորութեանը եւրն ապաստանած, «վաճառականական» նպատակներով կը վարպուրէր իր վաշկատուն բնազդները ու կը շրջէր աշխարհները, ծախելով ու ծախելով իր պապերը ու չկրնալ ապառելով անոնց նշխարները։ Մշտահալած ով գիտէ ի՛նչ սերուականներէ, ինքնատիպ ու դրեթէ յիմար, կ՚երեւար անիկա Արեւելքի փարթամ ստատններէն մէկուն մէջ, կը բանար դուռները ոսկիի հեղեղներուն, կը մխրճուէր շատ խոր ու շատ վար, յետոյ կը թռէ՛ր, ծածկելով իր հետքերը ինքնաշարժներու փոշիին մէջ կամ իր հրամանին մշտապատրաստ հախթերու փրփուրով։

Հասկնալի է տարօրինակ խանդավառութիւնը, նոյնիսկ ոչ-իշխանական մարզէ, զոր կը ստեղծէ իր մէջ, հեռուներէն փրթող ամէն փնտացու։ Անիկա հին դարերուն թափառիկ ասպետն էր հարկաւ, ու մեր օրերուն՝ մեր տարաղնումին հոգերանական կրկնեբեւոյթը։ Հիրիք է, որ թեթեւակի ծանուցուի, այդքանն իսկ բաւական է, որ լրբացուի։ Ցօրինուի պիսի անիկա, դասական իմաստով, վերստին կապպարուա՞ծ մեր ցանկութեանց ոսկի մուրճերով ու քուրանիրով։ Անաչխատ, պարզ, բնական արհեստո՛վ մը, քանի որ մեր գաղութները, իրենց տուն մնայ ալշիկներուն կարաւանովը, դժբախտ այս յարմարութիւնը կը մշտաւորեն ու հնարաւոր կ՚ընեն իշխաններ՝ ինչ-

digitised by A.R.A.R.@

պէս մեծահարուստ գործաւորներ։ Մեր գրականութիւնը դեռ չգտաւ գործոնց բաւական ընթացիկ տիպարը, որ ծանօթ է քիչ մը լաւ, ամերիկահայ փեսացու արտայայտիչ տարազով,— հաստակեկ ու խեղճ մարդեր, որոնք քառորդ դարու իրենց փարաւոնեան գերութեան մէջ, չեն իսկ խորհած իրենց մորթը փոխելու պէտքին, զոյն ընելով աւելի խարդած, գործարանի թիարանին մէջ, բայց կիրակնօրեայ իրենց զգեստովը կը դառնան քաղքացի, դոնէ մինչեւ իրիկուն, փիրենց Ամերիկացին փողոցներուն մէջ, կամ Դահիրէ ու Մարսէյլ, մինչեւ հարս մը գտնելին։ Անչուշտ, Իշխան Գոլոսները, չատ աւելի ցանցառ, առանց մենագարութիւններու, տպաւորիչ անձեր են, ամէնէն առաջ չոր ու խորտուբորտ իրենց դէմքերովը։ Հարաւային Ասիան ու Հիւսիսային Ափրիկէն երկրորդ սերունդի վրայ կը գեղծեն օտարականը, մարմնական ու հոգեկան չէնքէն։ Դուք գժուար կը գտնէք հօրէ ծնած հայ եգիպտացին տեղական ֆէլլահէն, այնքան կլիման գարկած է իր կնիքը անոր ոսկորներուն խուլ ու խոր ճարտարապետութեան։ Ու Իշխան Գոլոսները, որոնց հայրը ծնած է Մատրաս կամ Ճաւա, վըկայով միայն կը հաստատուին իրենց օտարութեանը վրայ։ Ամբողջ երկրամաս մը այդ հնդկաստանը, որ կէս դարու մէջ կ'աւլէ մարդուն արիւնէն անգամ ըլլիները, հեւքերը իր պապերուն։ Մերինները, հարաւային աշխարհները ապրող անդլիացի իշխանաւորներու ձեւերն ու հագուստը կապկած, օտար կը թուին հիմնովին, երբ մտնեն զանգուածին մէջը մեր ցեղին։ Կը խօսին բարբառ մը, որ անարդի է բոլորովին։ Նոյն այդ հնադէմ բոյրը իրենց մտածումներուն ու զգացումներուն ալ մէջը։ Անոնք մեր հոգերէն ու հոգերանութենէն եւս են նուազագոյն երեք քառորդ դար։ Ու մ՛օ՛ռ՝ ա՛լ անվերադարձ այն ոգիին, որով համբոյրեցին, գաղթեցին ու գաճեցան» տասնութերորդ դարուն ու տասնիններորդ սկիզբներուն՝ մեր աղաները, իշխանները օտար հորիզոններուն ներքեւ։ Երբեմն մեծազգեստ նուէրներ, երբեմն գրաբար քերթուած մը, երբեմն ալ հնօրեայ հանդէսներու մէջ տեղադրական–վիճակագրական յօդուածներ, անոնցմէ կը հանէին դժնդակ լուսանկարներ ու չահեկանութիւն։ Գատերազմէն առաջ այդ մարդերը, իշխան կամ իշխանցու, ունէին դրամին եւ այլուրութեան հրապոյրները։ Ցիմարութիւն, խանդ, երբեմն լրջութիւն ու տրամութիւն, գրեթէ միշտ ռոմանթիք հայրենաբաղձութիւն մը ու դրաբար թացիկ նամակներ այդ մարդերը կ'ընէին տարերկրեայ ու յանկուցիչ։ Ձեռքի, հողիի բարութիւն մը զանոնք կը գտնէր Աբիսողոմ աղաներու պարունակէն։

Իշխան Գոլոս Արծրունին «կին ու զաւակներ» ունէր կամ գոնէ չէր հերքեր ունեցած ըլլալը, երբ մէկը ըլլար բաւական անփոփուկ, հարցաքննելու իշխանազունը այդ աշխարհէն։ Իրականին մէջ, ամուրի էր անիկա, ինչպէս կը հաստատէր, Հնդկաստան իր նուիրակութեան միջոցին անոր պալատը ամիներով հիւրասիրուած բարձրաստիճան եկեղեցականը, որ իր միտքի տուրքերուն կը միացնէր հեգնելու ուր ընդունակութիւն եւ աշխարհը տալու ձեւով զայն ծաղրանկարելու տաղանդ, ու հիմա, կը ջանար, միշտ հեգնելով, անոր «իշխանազն» սիրուէն, «պատուական» զգացումներէն կարելի չափ ապահովել գաղութին կարօտեալներուն։

Վաղահասօրէն թառամած իշխանական այդ դէմքին վրայ, քիթը կ'իյնար անհանդուրժելի ոգեղութեամբ, իր ճմռկումովը ընելով անոր արտայայտութիւնը տարօրէն խառնակ, անճշգելի, գրեթէ

digitised by A.R.A.R.@

անանանական։ Հնդիկ առուծներուն կնիքը։ Անգլիական, չինական ֆլէկմով, անիկա կը փորձէր քաւել ծնունդին մեղքը խմիչքով, զոր կը հոսեցնէր գանգէսեան յորդութեամբ։ Ու կը փախչէր իր մեղքէն քաշ իր ձեռքովը, սիրուն խենթութիւններովը, թերխաչ դրաբարովը ու անթերի, մեստաքսաւէտ, ժիւնասպիտակ, ամէն օր փոխուող ըզգեստներովը։

Փեսացո՛ւ մը, այս արձակութենէն ու այս կիսագար վարժութիւններէն։ Անչո՛ւշտ։ Ամէնէն յորդ բանը աշխարհին սիրոն է մայրերուն։ Բայց Մինաս Մարա՞նը։ Բայց մա՛նաւանդ ու մա՛նաւանդ խորթափանց գրագէտ Գարգեւեա՞նը։

Դուք չափով մը ծանօթ էք Մինաս Մարանէն յարգարուած եգիպտական ամուսնութիւններուն, ընթացիկ ու պարզ ոճէ, որոնք եղան երջանի՞կ, քանի որ թշուառութեան մէջ հաւասարութիւն մը միայն մեզ կ'ընէ հաճեստ ու ժուժկալ։ Բայց չէք գիտեր chiffré անոր ձեռնարկները, վարձագիր կամ պայմանագիր, ստորագրուած ամէն ազգերու հասարակ յիմարներէն, որոնք Եգիպտոս աբշաւին երկրորդ օրն իսկ կը ներկայանան պանդոկապետին privat սենեակին մէջ ու, կը պահանջեն, պիֆբէֆին ու ուիսքիին հանդամանքներուն վրայ յարատակ ու վճռական պայմաններուն քով՝ «Հայթայթուելիք միսին մասին յատակ ու վճռական հաւասարիքներ,— ազգութիւն, տարիք, դոյն, գնդերային լիութիւն կամ չափաւորութիւն շօշափող ու այդ ամէնուն համար, համաձայն նախասիրութեանց, կու տան ու կ'առնեն ընկալագիր։ Անչուշտ, բացառիկ իշխանազուններուն համար, բացառիկ սակեր։ Ու աղջիկներ, հանրաւաններէ վերցուած, յարմարցուկ, ներկուն, վերածուած տան աղջիկի, որոնց իրենց անցընելիք քննութեանց լիովին պատրաստ, մարզուած ըլլալով լաւագոյն վարդապետներէ, ճարտա՛ր և այնքան՝ ծախելու իրենց հօրն անգամ փոշիացած կուսութիւնը, դժուար, փաթէթիք պայմաններու հանդէսով մը, համաձայն իրենց ախորժակներուն,— անապատ կամ հեղոսեան նաւ, եղէգնահիւս կղզի կամ բաւիղները ամայի մեհեաններուն, ընտրելով հարմարութեան առագա՛ստ։ Հարուստները երբ ժառանգութիւն կը սպաննեն, յիմարութեան կրկէսին վրայ, կը գերազանցեն բոլոր պակակիցները։ Երեք-չորս հարիւր սենեակնոց հիւրանոց մը համառօտուած ալիքարհ մը է ու հինգ երկրամասերու մանրանկարը կ'ընծայէ դիտել կրցողին։ Այս է պատճառը թերեւս, որպէսզի պանդոկապետ մը աւելի հեռուն, ճոխ, ճիշդ տեսնէ, քան երեսուն տարի գրիչը սուրի մը պէս չարժող ինքնահաճ ու ինքնաբաւ գրագէտ մը, թէկուզ մեծատաղանդ, որ մարդերը պիտի տեսնէ սնափառութեան պարունակէն ու կ'եղծէ զանոնք անոր գոլորշիովը։ Այս է պատճառը դարձեալ, որպէսզի դռնապան մը միշտ աւելի բան գիտնայ բազմայարկ բնակարանի մը բնակիչներէն, որքան չեն գիտեր ասոնք ամէնքը մէկ իրարու մասին։

Երկու տարիէ ի վեր, Մինաս Մարա՛նը, զգուշաւոր, կեղծաւոր, բայց հաստատ, որդեգրած էր Սոնային ամուսնութիւնը։ Իր հաշիւնե՞ը։

— Ծանօթ են մասով։

Ու ահա ուրիշ յաւելումներ։

Ըստ երեւոյթին, ամէնէն առաջ ու ամէնէն շատ, թախանձանքը Տիկին Գոհարեանին։

Այն օրէն, որ դժբախտ կինը լսեր էր պատմութիւնը, բաւական ստորօրինակ, Լորտ Հարրինկթընի, այն օրէն Տիկին Գոհարեանի համ-

digitised by A.R.A.R.@

բերութիւնը խուսափած էր իր սահմաններէն։ Ինքնատիպ մարդ, իրաւ որ, այդ լորտը, որ Լոնտոնի մէջ կառուցանել էր տուած աշխարհի մեծագոյն պանդոկներէն մէկը ու, ռոպարէգին պատրաստուելու անգլիական խղճմտութեամբ, արհեստին ուսումն էր սկսած խոհանոցէն, գեղանախնձոր մաքրելով, այնքան լրջութեամբ, որ մաքրած էր նոյն մաքուր եռանդին մէջ խոհարարուհիին ալ աղջիկը, որ հիմա լէյտի Հարրինկթըն, կը հրամայէր չորս հազար սպասաւորներու բանակի մը։ Բա՞խտ։ — Այդքան կ'ըլլար։ Աշխարհին պատրանքը այնպէս չինուած է, որ հազար-հազար տանջանք ու մէկ հատիկ վայելք իրար հաւասարակշռեն։ Ու նման ամէն մօր, որուն աղջիկը միշտ արժանաւոր է «թագ ու պսակի», անիկա թախանձեր էր ընտանիքին «անկեղծ, պատուական» բարեկամին։ Այս օրինաւոր փառասիրութենէն զատ անիկա թափանցիկ, հեղինակաւոր ուրիշ ալ պատճառներ ունէր, ժամ առաջ ազատուած տեսնելու իր աղջիկը։ Կը հասկնա՞ք թափանցիկ այս վտանգը։ Ամէն աղջիկ օր մը ամուսնանայ պիտի։ Ուրիշ ամէն փառք տկար է, պարզ այս իրողութեան հետ բաղդատուած։ Ու այս պատգամը ամէնէն առաջ հասկցողը մայրն է միշտ։ Ու մարդկային բան է, որ ինքզինքը կործանելէ ետք, երկրորդ ու աւելի անկանգնելի կործանում մը խնայելու համար իր թշուառութեան, մայր մը նուաստանայ, լացով խնդրելու չափ, «ամուսնութենէն յաջող գործակալ» Մինաս Մարանէն, ամէն գնով, կապել Սոնային դլուխը յարմար մէկու մը, ստնկ ունեւոր ու երիտասարդ, որ չըլլար իր երեք էրիկներուն գիծէն ու դնէր սիրտ առնելիք կնիկին վրայ։ Անշո՛ւշտ որ ամէն մայր պիտի նայի մտովի աւելի անդին, քան սա համակերպումին շրջանակը ու հետապնդէ ուրիշ յարմարութիւններ ալ։ Բայց իր տունին «վիճակը» անոր միջոց չէր տար դժուար «հաճելու»։ Ու հակառակ իր տարիքին ու ասոր դիղած փորձին, կարծես չուզելով կը հաւատար հեքիաթներուն, լորտ հերոսներով, որոնք երբեմն կ'ընեն «առակող առակ» խենթութիւններ ալ, քապարէի մը երդչուհին վերցնելու չափ իրենց լորտութիւնը մինչեւ։ Երբ մենք մինակ ենք ձըգուած չատ մեծ մեղքի մը հետ, ստիպուած ենք մեզ դիւրահաւան, դիւրախաբ ընելու։ Երբ այդ մեղքին աւելնայ մահացու վէրքի մը կրկնին ալ, մօտիկ ենք խենթութեան ու կ'ընդունինք բոլոր հեքիաթները, մէկն ըլլալով լորտերուն՝ ինչպէս Արծրունի իշխաններունը։ Իր տագնապին զգեստուած, անիկա տասը տարեկան աղջիկի մը ուղեղը ունէր, երբ կը թախանձէր Մինասն ու Գարդեւեանը, մոռնալու չափ իր սիրահարը, իր աղջիկը ու ասոնք իրարու կամարող կարմիր-կանանչ գօտին մեղքերու մեղքին։

Միամի՞տ նորէն

— Սահակ Պարդեւեանը, նեղոսեան տափանաւերու հեշտախոյզ այցորդը, անապատական հեւասպառ գիշերներու մեծաթռիչ ողբերգուն, ինչպէս նաեւ լալահառաչ, հերարձակ, վսեմ քնարերգողը իր ցեղին դժբախտութեան ու անոր ամէնէն դժբախտ հատուածին,— անոր կիներուն։ Աւելի՞ն։

Այս հարցումը պատասխան չունի։ Կան օրեր, երբ մարդ կը դագրի ամէն բանէ, ո՛ւր մնաց խոր հարցումի մը պատասխանը ճարելէ։

Միւս կողմէն՝ հանրածանօթ իրողութիւն էր, որ երեք-չորս տարիէ ի վեր մեծատաղանդ դրագէտը վեց ամիսը անգամ մը «նչանելու» կ'ելլէր «սքանչելի» Օրիորդը, հնարովի կամ իրաւ, փեսացու-

digitised by A.R.A.R.@

նիրը ճամբելով, պահելով, վարելով անսպասելի տակտիկայով, որ զարմանք կ'ազդէր տղու չափ իսկ խելք չունեցող բնազդական այդ մեծ կենդանիին վրայ։

Իր զսպանակնե՞րը.

— Բայց ամէնական։ Գիրը՝ ինչպէս դրամը, որոնց արահետէն կը մօտենային թեկնածուներուն բոլոր յիմարութիւնները, որ մէկը Գոլիս օրաթերթի մը մէջ թղթակցութիւն մը ստորագրած ըլլալու իրաւունքը արժեւորել ջանալով, ուրիշ մը իր դրամին զոհունակութիւնը իր քառասունէն վեր աւերակոյտին սփածանելի զետեղելով։ Իր զսպանակնե՞րը։ Անշուշտ,— կի՛նը, գլխապրեցէք։ Ինչպէս՝ սնամտութիւնը։ Ա՜յթը (չեղած խղճէ մը հանուած այդ սրտառուչ բա՜նը), ինչպէս իր պատկառելի, աննահանջ շնականութիւնը, որ առիթ կու տար իրեն քայքայելու տարաբախտ համբաւներ, եւ կը ջախջախէր իրենց կրպակներէն վեր նայող եղեգիներուն «ապիտակուռ» (իրե՛ն է բառը) ու «չամանագործ» (դարձեալ) սխտորութիւնը։

Այս ամուսնութեան եղջերուաքաղը զբաղում մը՝ էր անոր, որով կը բաւարարէր պորտաբոյծ իր թափառումները ու թիակ կը նետէր իր իսկ դիակին, մեղքի մեծ ջուրին վրայ ցոյցի ելած։ Բաներ կան, որ ծածկուելով աւելի կը հոտին։ Ու գաղտնիք մը, որ ամէն օր անտուկէն կը հանուի ու չուկայ կ'իջնէ, ճակատագրուած է պայթելու։ Այդ եղջերուաքաղը անոր սնամտութեան ուշացած նպաստ ալ կը թերէր։ Զինքը կարելի էր գրաւել (գէթ այդ մտքով իրեն մօտեցողները կը ապաւորուէին այդ կերպ) մանուկի դիւրութեամբ, ջերմ, դիտակից, հլուրջ դնահատականով մը իր մէկ պատմուածքին վրայ, հերիք է, որ դրական կեղծիքի հոտ չառնէր դէմինէն։ Անբացատրելի սա նանրամտութիւնը։ Անիկա քիթէն կը բռնուէր ամէն անգամ, որ «պարզ մարդերուն» այս բուխ յուզումը հաստատել կարծէր ու՝ չէր տեսներ անկարելին, այսինքն՝ դրական հասկացողութեան անկարելին՝ իր տաղանդին հիացողներէն, երբ դայլն ասոնք ոչ-ասպարէզէ, ի՛նք՝ որ կ'ընդոտնէր պաշտօնական տարաձները լրագրող-քննադատներուն։ Զինքը կարելի էր գրաւել, նեղութեան բոպէներուն ճարտարօրէն փութացուած նպաստով մը, որ չհոտէր ողորմութիւն ու հաշտուէր տաղանդի տուրքին անկորնչելի սկզբունքին։ Ու ոչ ոք կ'անդիտանար անոր ահաւոր տկարութիւնը հանդէպ սեռին։ Եղան երիտասարդներ, որոնք մանկամարդ իրենց քայլերը գործածեցին անոր ուշադրութիւնը իրենց կապելու, մուտք ճարելու համար Սոնային չրջանակը։ Անիկա գիտէր այս փոքր դաւերուն փոքր թշուառութիւնը, գռեհկութիւնը, բացի դրական կեղծիքէն։ Ու կը մօտենար, այսինքն՝ մատչելի կը դառնար ռազմավարութեամբ մը, որուն դժուար էր խելք հասցնել։ Անիկա քանը «թեւակոխած» տղաքը կը հանդուրժէր իրենց անհանդուրժելի քերթուածներուն մէջ ու կը քաջալերէր անոնց «հորաբոյս» տաղանդները, արո՞ւ եւ էգ։ Բայց եղջերուաքաղը կար ու կը մնար։

Ու ամուսնութեան սա հեքիաթը կը պարբերէր ու չէր քալեր։

Մարդիկ, խորունկ ու փորձառու դասէն, կը հարցնէին իրենց կարգին.

— Զսպանակնե՞րը։

— .....?

Հնարողներուն կոտրէր լեզուն, եթէ կ'ըսէին սուտ։

Բաներ կան, որ կ'ըսուին ու չեն լսուիր։ Նոյն այդ իրաւունքով

digitised by A.R.A.R.@

չեն ալ դրուիր։

Խորունկ ու փորձառու այդ մարդե՛րը։

Ուշագրաւ էր նոյն ատեն, Սոնայիին առիթով, որդեգրուած քաւական յստակ, նոյնիսկ մշտապղտոր իր գոյութեան միակ յստակ քաղաքականութիւնը, վայե՛լ՝ կեանքին, զոր կը կրէր արտաքուստ, ձանձրոյթին ու պարտքին սրտառուչ տիրումովը, շլքելով կինը, որ չէր ուտուեր ալ, ու պաշտպանելով «հայրօրէն» անոր աղջիկը, անպակաս ընելով զանոնք համախմբումներու, խրախճանքներու, լուսապսակի մը պէս պտըտցնելով անոր գեղեցկութիւնը մեղքին մեծ արձանին վերեւ, որ մարմինն էր անոր։ Հոն կ՚արտասանէր անիկա ջերմ ու փարթամ ճառեր, բաժակէ կամ սեղանէ, մոռցնելու չափ իր մեղքին քանդակը ո՛չ իր վրայէն, քանի որ անկնճիռ ապրողն էր ինքը, այլ՝ «զոհերուն» վրայէն, երբ հանդէսին ամէնէն գողտր ու խանդավառ պահերուն կը մօտենար գեղանի աղջիկին, ու, ափերովը, բանալով անոր մազերը, պայծառելով անոր ճակտին մելամազոտ շնորհը, կը պոռար հանդիսականներուն.

— Հինգ հազար...

Անիկա միլլիմ(*) պակաս չէր ընդուներ։

Ի՞րն էր ծախու հանել բացատրութիւնը, թէ ուրիշներու դարբնածը։ Անիկա հաճոյքով կը գործածէր զայն, յաջողելով վարագուրել տարագին դեհկութիւնը յորդ երեմիականով մը մեր բարքերուն վրայ, յարձակելով դրամին հակայ ճնշումին, զոր գեղին մեսագը կը գործադրէ մեր ամէն արժէքներուն վրայ։ Աւելի՛ն. բացատրութեան մէջ անիկա կը գտնէր երկիմաստ տարողութիւն։ Մէկով՝ ծաղրելով հասստ շտեսութիւնը Սոնայիին շուրջը դարձողներուն, որոնք, քաջալերուած իրենց դրամէն, չէին խլներ անյարմար դուռներ բախելէ, շտեսներ տարիքէ ու մարմինէ, յիսունի մօտ կամ հոթենթոթային տպեղութեամբ, եւ կամ անդարման խեղութեամբ կարեւոր գործարաններէ։ Միւսով՝ անիկա կը կարծէր ինքզինքը մխիթարել իր կոթանքէն, դրամէն դիտապատ, բայց անով անյագուրդ մարդու լրբութիւն մը փայփայելով հաւատարապէս։ Ու լեգէոն էին այդ հասաները, մինչին տիպարներ, քանի մը հազարնոց, քառասունի ջուրերուն, ա՛լ ատենը հասած սեպող սեպհական կնիկին խորհելու, ուրիշներունը «բուժանելէ» յոգնած։

Դրամը մշտահալած, երեսուն տարի ուրիշներու ձեռքը նայելու նուաստութիւնը գոնէ մէկ անգամ փարատելու յուսատենչ, անիկա, հաւատաւոր, «ըղձակաթ» շեշտ մը կ՚առնէր, երբ կը պոռար իր հազարները,— միակ իրաւացի գոհացումը մեսագին աշխարհէն, իրողութիւն դարձած արդէն, երբ ոչինչ կար մէջտեղը։ Դրա՞մը։ Ըլլալու երկու ձեւ չունէր այդ անիծեալ առարկան։ Զզուած ու մա՛նաւանդ յոգնած, նորատիպ մուրացկանութենէն, որ Գարոնեանով սեւեռուածին հերքումն իսկ է, պահանջկոտ, յարձակող, իրաւատէր իր լրբութեամբը, քառորդ դարու երկայնքին, անիկա ապրեր էր Սիմէոն Սիւնեակեացին նման շուքովը իր սիւնին կամ ուրիշներու կոնակին։ Բայց ահա եկած էր ատենը, երբ սիւները կ՚իյնան իրենց շուքերէն ու կրոնակները կը թափին իրենց միսերէն։ Ծերութեան մուտքին, անոր վրայ կը ծանրանար նոր դիակը ա՛լ անգուտ մեթոտին։ Շանթածը, անխելք՝ ինչպէս անխնայ, վարկաբեկ էր ըրած ինքզինքը մա՛նաւանդ

(*) Միլլիմ = Եգիպտական ոսկիին հազարերորդ մասը։

digitised by A.R.A.R.@

Եգիպտոս, որ չրջանակին ընդարձակութիւնը չչուկները կը սպանէ եւ մամուլին մուրացածոյ դոյութիւնը առնուազն բարեւով մը վաճառելի էր, այդ օրերուն, աս ու ան փաչային կամ կալուածատէր խանութպանին։ Լրագիրը չէր եղած պոլսական կլիոր։ Ու վաճառականը, անպատիժ, կը դարձնէր եռ, խոշոր նախատինքով մըն ալ, նպաստի տոմսերը։ Զվատակած ծախող ամէն ուռնահարի նման, Սահակ Գարպեւեան սպառած էր ինչ որ բերեր էր սիրուհին։ Կա՞րդը ծախելուն, պարզ է պատասխանը։ Ա՞ռ էր պատճառը, որ «ծախու էր հանած» գեղանի աղջիկը, առանց նեղուելու, հեղնութեամբ ուժաւոր նախադասութիւնը անպակաս ընելով իր բերանէն, «փարթամ պարտաւորը» նշաւակելով արդի քաղաքակրթութիւնը, հայ չարչիութիւնը, վաչխառութիւնը, մեռաղապետութիւնը, որոնց կեդրոնանիստ քաղաքն էր երանելի Գահիրէն։

— Աւելի վճարողին, միչտ աւելի վճարողին,— կը պոռպռար անիկա խոհուն լրջութեամբ ու դառն կնճիռով, բարձրաղեղ այդ արհամարհանքին մէջ հաւատարելով չատ մը տարբերութիւններ, տարբերին՝ ինչպէս իմաստին մարդերէն, երիտասարդն ու քառասունը անցը, արժանիքները՝ ինչպէս աղտահար անցեալը, բարոյականն ու զարգացումը, չիք յայտարարելով միտքին եւ անոր կապուած տառքինութեանց վարկը, ամէնէն առաջ անձին օրինակէն, ու փառաբանելով, մոլեռանդ շարսրտութեամբ մը, ուրիշ մը պիտի ըսէր թրքութեամբ մը՝ եուրքը դրամին,— մահրիչ ամենայնի, արարիչ բարւոյ եւ չարի։ Անիրաւութեան մամոնան։ Ցիմար էր, անոր կարծիքով, այս տողին ձկնորս-տառքեալը։ Անիկա կը չրջէր տարազը ու կը վերահաստատէր իմաստը.

— Ի սկզբանէ էր Մամոնան, ու անմահ էր Մամոնան, արարչահիւթը իմաստութեան եւ վայելքին, Բանին եւ Գործին... ու... Գեբազոյն տապանակը՝ հարկա՞ւ, ծերութեան դուռներուն։

Այս կարդի իր առածները անիկա կը պասդամէր հզօր իր ձայնով, որ կը ծեծէր ունկնդիրները։ Հռետո՛ր, ականջէն թեթեւակի տառապող, անիկա պիտի չի զդար բարձր ատիճանը իր շեչտին, որ կը յուզեցնէր, տարօրէն յուզելէ ետքը ու կը թարգմանէր անոր քը-մայքին երանդը, տպաւորիչ ու բուռն այն բանը, որով կարդ մը մարդիկ կ'երեւան, կը շլացնեն ու կը քաչուին, եթէ չեն ուզեր տապալիլ։ Կոկորդն ու սեռային գործարանը, անոր ապրուստին երկու զլխաւոր միջոցները։ Անդուլ ու դժուար կռիւ, հացի պահանջն էր, որ չինեց անոր ձայնին գործիքը, բամբ, թաթի պէս իջնող, կսկծացնող, որուն հետ բաղդատուած՝ թունաւոր անոր ոճը ասնելի կը դառնար։ «Անհուն իր զրկանքը» (կ'ակնարկէր անհուն իր տաղանդին եւ անոր բրոնադատուած արժեզրկումին) զինքը կ'ընէր մեծ վայելուչ իր պարապուին՝ ինչպէս դատումներուն մէջ։ Ուրիշներուն նման անիկա չէր գորին՝ ինչպէս դատումներուն մէջ։ Ուրիշներուն նման անիկա չէր գործածեր գիրքերուն «ոսին» բարբառը։ Ու կը յաւակնէր իր իմաստասիրութիւնը ճարած ըլլալ կեանքին մամուլին ներքեւ։ Ինք նոր օրերու Ստրաս մը, կռնակին՝ դուռնոր հացին, աւելի խոշո՛ր՝ քան երկրինը, հեքիաթի հսկայի քամակին։ Ու կը վայլեցնէր այս նահատակութիւնը իւրայատուկ արժանութեամբ։ Ու կը պոռնէր վաճառատունէ վաճառատուն, սրահէ սրահ, գրպրիչ, իրեն ներուած լրջութեամբ, խայծի մը նման ցոյցի հանելով երիտասարդ աղջիկը, որ ժպտուն, տարտամ ու խոհուն այլուրութեամբ մը կը հետեւէր դրագէտին, անոր բարեկամներուն գործատեղիները, ցաթելով տարաշխարհիկ բանի մը պէս,

digitised by A.R.A.R.@

ջերմ ու խորունկ իր աչքերովը նայելով թուղթէ տնակներու մէջ շըղթայուած քարտուղարներու, նուրբ, մեղմ, մելամաղձոտ տղաք, հանգարար հոգեպէս ալ աղքատիկ, տնամէջ, բայց տարօրէն թրթռուն, զգայուն՝ իր խռովքին ու թաքուն ծորումներուն։ Կեանքին խորագոյն բնաղդն է այդ հոսումներուն հակակշիռը իր ձեռքը ունենալ ու դատել ուրիշը իր գոյին մէջէն։ Ու կը նայէր անոնց ներկուած փաթրոններուն, կոչտ, անկիւնոտ, խորտուբորտ դէմքով, տաք երկիրներու գալկութեամբ թղթուած, իրենց կազմախօսական կնիքէն խորապէս խախտած արարածներ, բայց անկարող հերքելու իրենց մօտիկ անցեալը, հոտելով հեռաւոր իրենց գեղերը, անոնց թուքն ու պատեղը, երշիկն ու ապուխտը։ Թանձրակզակ ու մենագաթ այդ իշխաններուն մօտ դրպէտին նրբացած ու արձակ արտայայտութիւնը, որուն վերայ, այնքան պզտիկուց, ինկած էր անոր մատալ ուշադրութիւնը, կը վերածուէր բարձր գեղեցկութեան։ Ու կ'երթար անիկա ուրիշ տեղեր, հո՛ն՝ ուր աւելի համեստ կարողութիւններ կրկէս կը մտնեն, մանրամասնաներ, փերեզակներ, մա՛նաւանդ ոսկերիչներ։ Որոնք, փոքր քաղաքներու մէջ այնքան հարազատ, տիրական, մեծ քաղաքներու համար կը կազմեն այնքան օտար, անզգած, տպաւորոյ մըթնոլորտ մը։ Ուշադիր անցորդը գիւրաւ կը զգայ սա տարբերութիւնը, մասնակի, յատկանշական, որ զաղթականը կը գտաւ բնիկէն։ Սոնա Գոհարեանը Գահիրէի մէջ, քիչ-քիչ վարժուեցաւ այս բարեխառնութեան։ Մեծ ոստանը, խաբեբայ ու համաքաղաքացի, կ'այլափոխէ անցորդը՝ ինչպէս դնորդը։ Մեր ժողովուրդը — երբ կար անիկա մեր երկրին մէջ — մաս մը նկարագիր էր տուած իր շուկաներուն, փոքր քաղաքներու վրայով։ Բաց կամ գոց, այդ յօրինումները կերպով մը երկարաձգումն էին մեր տուներուն ու կը տպաւորէին իրը այդ։ Գահիրէի մէջ անիկա արձակութիւնն է, օտարութիւնը, մանրացումը։ Ո՛չ մէկ պայման՝ որով մարդիկ մնային կապ ու հաւատարիմ իրենց տուներուն ու աղջիկներն ալ՝ իրենց մօտիկ աւանդութիւններուն։ Հասակագեղ, արձանատիպ, մորթին խտղտող լլացքովը, քովն ի վեր յոգնած արուի թելադրող պահակութեամբը, Օրիորդ Սոնա Գոհարեան, մեղքի ծաղիկ ու մեղքով հովանաւոր, վաճառքի ապրանք, Արեւելքի շահատաններուն վաղընջաւոր գերուհին, արդի քաղաքակրթութեան գեղակերտ պուպրիկ, գեղօր, լացնելու չափ կը յուզէր մեծն ու պզտիկը, երբ կը ձգէր մեծ փողոցները ու կը ձգէր նեղ գըռիհները, ժպտելով ու տխրելով նոյն նայուածքին մէջ։

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(Շար. 12)

digitised by A.R.A.R.@



Ամէն մի աշակերտ, անկախ իր հակումներից, անկախ այն բանից, թէ վազը իր համար ցանցուցէութեան ինչ ոլորտ կ'ընտրի, դպրոցում ստանալու տարիներին պէտք է խորապէս, կատարելապէս տիրապետի մայրենի լեզուին, զգայ նրա ամբողջ գեղեցկութիւնն ու նրմայը, ասվորի ճիշդ, պտտայատիչ խօսել, յստակ շարադրել իր մտքերը:

Կ. Ս. ԳԵՄԻՐՃԵԱՆ

Մեր լեզուի համար բարձր պատասխանատուութիւն կրող մտաւորականութեան շարքում առաջին տեղը պատկանում է ուսուցչին, մասնաւորապէս, մայրենի լեզուի եւ գրականութեան ուսուցչին:

Ես ասացի՝ մասնաւորապէս մայրենի լեզուի, որովհետեւ այդ պատասխանատուութիւնը կրում են բոլոր առարկաների ուսուցիչները: Ասենք բացառութեամբ՝ բոլորը: Չի կարելի խեղճուկրակ լեզուով ֆիզիկա կամ մաթեմատիկա սովորեցնել, էլ չեմ ասում՝ պատմութիւն, բնագիտութիւն կամ աշխարհագրութիւն:

Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՅՈՒՍԱՏՈՒ ԶԵՌՆԱՐԿ

Մշակութային մարզէն ներս, մեր հայրենիքին մէջ տեղի ունեցած այս տարուան մեծագոյն երեւոյթներէն մէկը կարելի է անվարան համարել իրապործումը «Հայոց լեզուն ու գրականութիւնը դպրոցում» երկամսեայ հանդէսին, որուն առաջին համարը արդէն կը գտնուի ընթերցողին տրամադրութեան տակ:

Հայրենի մեր միւս ու նոյնաբնոյթ հանդէսներուն ծննդոցը չափով մը ծանօթ է մեզի գրականութեան պատմութենէն ու տարեդարձային գրութիւններէն, բայց անոնց հիմնադրութեան ետեւն առաջացած ապրումներէն սրեւէ մէկը գոյն ինչ չի յիշեցներ այն համընդհանուր ոգեւորութիւնը, որ ստեղծեց այս մէկը՝ կուսակցական, պետական, դիտական, արուեստի ու մշակուծեց այս մէկը՝

digitised by A.R.A.R.@

թային չրջանակներու մէջ, ինչպէս կը հաստատեն ներկայացուցչական դէմքերու արտայայտութիւններէն քիչ անդին արտագրուած ոգեշունչ վկայութիւնները։

«Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» հանդէսը ունի մի՛ջին ծաւալ մը եւ կը հաչուէ վաթսունըչորս էջ, ուր տեղ գտած բոլոր գրութիւնները ներդաշնակ են անոր առաջադրութեան ու կոչումին, զերծ՝ անհարկի խմողումներէ, բարախուն՝ հայոց լեզուն ու գրականութիւնը ըստ ինքեան արժեւորող ու սիրելի ընծայող ոգիով մը։

Այս վերաբերումը ինքնին կ'ենթադրէ նման ձեռնարկի մը անհրաժեշտութիւնը, որ երկար տարիներէ ի վեր կ'ալեկոծէր Հայաստանի ուսուցիչներուն, գրական դէմքերուն ու մտաւորականներուն սիրտերը։

Հայրենի մամուլին մօտէն հետեւող մարդուն համար բնաւ զաղտնիք չէ այն փաստը, որ, ինչ-ինչ պատճառներով՝ հայոց լեզուին ու գրականութեան ուսուցումը բաղձալի մակարդակի մը վրայ չէր գտնուեր։ Դասագրքերու ոչ-նպատակայարմար պատրաստութեան եւ ժամապահերու անբաւարարութեան վրայ սկսած էր բարդուիլ աւելի ծանրակշիռ տարր մը,— հայոց լեզուն անշահեկան, նոյնիսկ աւելորդ համարող վտանգաւոր հոգեբանութիւնը, որ ծընունդ կ'առնէր աստիճանաբար խորացող ու ընդարձակուող քաղքենի մտայնութենէն, չտեսութեան, շահամոլութեան ու փառամոլութեան այն վարակէն, որ զարկած էր շատերը, վերնախաւի ջոջերէն մինչեւ պարզագոյն հոգիները։

Անչուշտ, հայրենիքը հայրենիք է, եւ հայրենիքի մէջ բացառական որեւէ երեւոյթ չի կրնար միակտուր տիրապետութիւն մը հաստատել եւ ջլատիչ դերեր խաղալ։ Հարազատը կառչած կը մնայ արմատին ու ձեւը կը գտնէ բողբոջելու։ Մուշեղ Գալշոյեանը, Ռազմիկ Դաւոյեանը, Հրանտ Մաթեւոսեանը, Հենրիկ Էդոյեանը, Վարդգէս Պետրոսեանը, Արմէն Մարտիրոսեանը եւ շարքը ասոնց հասակակիցներուն, մեր լեզուին ու գրականութեան այս թարմաշունչ ընձիւղները ի վերջոյ երկինքէն չիջան, ոչ ալ կորակոր «շնորհիներու» պարգեւը եղան, անոնք ծեւաւորուեցան Հայաստանի կրթական բովերուն, հմուտ ու ոգեշունչ ուսուցիչներու ստեղծած մթնոլորտին մէջ։ Մասհոգիչը դրական արդիւնքներու տանող գործօններու սակաւութիւնն է, հնարաւորը չկարենալ կարկառելու փաստը, որ յաճախակի նիւթերէն մէկն է հայրենի մեր մտաւորականներուն անխթար դասին, քաղաքացիական քաջութեամբ օժտեալ ընտիրներուն։

«Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» հանդէսը շատին միտող ձեռնարկ մը կը թուի ըլլալ։ Միւս կողմէ՝ բնաւ պէտք չէ անտես առնել նոր փորձառութիւնները, նաեւ թարմանալու անդիմադրելի պահանջները, որոնց համար մարդիկ երբեք սակարկութեան չեն նստած եւ յանձն առած են յաւելուածական զոհողութիւններ, երբ մա՛նաւանդ հարցը կը վերաբերի մայրենի լեզուին պէս անփոխարինելի սրբութիւններու, անոր ուսուցման ու տարածման հեռանկարներուն։

Ի սրտէ ողջունելով հանդերձ այս հանդէսին յուսատու երեւումը, մենք չենք կրնար հաշուի չառնել մեռելին միւս երեսը, որուն առիթով կատարուած խորհրդածութիւնները ընթերցողին կը յանձնենք յաջորդիւ։

digitised by A.R.A.R.@

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

Ձիրմօրէն ոգեւորուած եմ «*Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում*» հանդէսի ասպարէզ դուրս գալը: Մեր երիտասարդութեանը հայրենասիրութիւն, մաքառասիրութիւն եւ այլ վսեմ գաղափարներ հաղորդելու մէջ մեծ դեր են կատարում հայոց լեզուի ու գրականութեան ուսուցիչները: Նրանք պէտք է մեր երեխաներին տաղանդեն ազնիւ ու պայծառ ըզգացումներով, վարակեն անսահման սիրով՝ առ Հայրենի գիր ու գրականութիւն, առ հայրենիք, առ ժողովուրդ: Ուրեմն, թող մեր այս նորաստեղծ հանդէսը դառնայ յոյսի ու իմաստութեան սերմնացանների՝ ուսուցիչների հաւատարիմ օգնականն ու մեթոդական խորհրդատուն:

Այդ կարեւոր նպատակներն իրագործելու մէջ հանրապետութեան գիտութեան եւ մշակոյթի գործիչները, մեր մտաւորականութիւնն աջակից կը լինեն հանդէսին:

Ուրեմն, թող հաստատուն եւ վստահ լինեն մեր նորածնի քայլերը, ու նրա հետագայ գործունէութեան բերքն էլ՝ արդիւնաւէտ, իմաստալից եւ բազմախոհուրդ:

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

⁂

Գոհունակութեամբ ընդունեց «*Հայոց լեզուն և գրականութիւնը դպրոցում*» հանդէսի ծնունդը, որ մեր լեզուի եւ գրականութեան այսօրուայ եւ վաղուայ համար պետական մեծագոյն հոգածութեան արտայայտութիւն է: Նոր հանդէսին ցանկանում ենք քարի երթ եւ աւագութեան իրաւունքով մաղթում՝ հայոց լեզուն ներկայացնել ո՛չ միայն որպէս դպրոցական առարկայ, այլեւ որպէս ՀՍՍՀ դպրոցի լեզու եւ հայ գրականութիւնը՝ երէկուայ ազգային տագնապների, այսօրուայ խազաղ ներուզումների ու վեհ թռիչքների գրականութիւնը, ծառայեցնել աճող սերնդի քաղաքացիական, հայրենասիրական, ինտերնացիոնալ դաստիարակութեանը:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ»
ամսագրի խմբագրութիւն

⁂

Ողջունում ենք մեր կրտսեր եղբօրը՝ «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» հանդէսին՝ ծննդեան օրուայ առթիւ: Ուրախ ենք, որ լեզուին ու գրականութեանը նուիրուած ինքնուրոյն հանդէսների ընտանիքը համալրուեց եւս մէկով: Բայց այս մէկը բոլորովին էլ սովորական չէ. այն պէտք է դառնայ աշխարհի հնագոյն եւ հարուստ լեզուներից մէկի՝ հայոց լեզուի, աշխարհի ամենահին եւ գունագեղ գրականութիւններից մէկի՝ հայ գրականութեան ուսուցիչների իսկական բարեկամը, իմաստուն խորհրդատուն: Նրա էջերում միշտ պէտք է բոցավառուի հայերէնի եւ բազում այլ լեզուների ու գրականութիւնների բարեկամութեան ջահը:

«ԼԻՏԵՐԱՏՈՒՐԱ Վ. ՇԿՈԼԷ»
ամսագրի խմբագրական
կոլեգիա — Մոսկուա

digitised by A.R.A.R.@

⁂

Հայաստանի գրողների միութեան վարչութիւնը բոլոր հայ գրողների անունից ջերմօրէն ողջոյնում է հանդէսի ծրնունդը: Ինչ խօսք, նման հանդէսի հրատարակումը մեծապէս կը նպաստի մայրենի լեզուի ու գրականութեան դասաւանդման մակարդակի բարձրացմանը, ուսուցման նոր, աւելի ժամանակակից մեթոդներ կը մշակի: Կարելի է յուսալ, որ հանդէսը կը դառնայ հայ գրականութեան եւ լեզուի բոլոր ուսուցիչների մտերիմ բարեկամը, խորհրդատուն:

Հայոց լեզուի եւ գրականութեան դասաւանդման պրակտիկան մեր դպրոցներում, չնայած ձեռք բերուած ակնյայտ յաջողութիւնների, առանձնայատուկ ուշադրութեան կարիք է զգում: Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցականների համար սոսկ դասաւանդուող առարկաներ չեն: Դրանք միջոց են ազգային մշակոյթի գանձերին, հաղորդակից լինելու մեր մեծ գրողների, մտածողների ստեղծագործութիւններին: Հայերէն թարգմանութիւններով մենք հնարաւորութիւն ենք տալիս ճանաչելու եւ իմանալու ռուս մեծ մշակոյթը, եղբայրական գրականութիւնների, ինչպէս նաեւ համաշխարհային գրականութեան նշանակալից արժէքները:

Հանդէսի ստեղծողները պէտք է յիշեն, որ մայրենի լեզու դպրոցականները սովորում են ո՛չ միայն հայոց լեզուի եւ գրականութեան ժամերին. ուրեմն, սեւեռուն ուշադրութիւն այն բանին, թէ ինչ հայերէնով են դասաւանդւում նաեւ միւս առարկաները:

Հայաստանի գրողները, կրկին ու կրկին անկեղծ ուրախութեամբ ընդունելով նոր հանդէսի ծնունդը, յոյս են յայտնում, որ նա պարտքի խոր գիտակցումով կը կատարի իր վրայ դրուած դժուարին, բայց պատասխանատու եւ հայրենանուէր առաքելութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր մարդ, ով փնտռում է դեղեցիկը կեանքում, ամէնից առաջ այն պէտք է որոնի մայրենի լեզուի, մայրենի խօսքի ներդաշնակութեան մէջ: Սա է ամէն ինչի սկիզբը, գեղեցիկի առաջին ակունքը: Եւ իմ ցանկութիւնն է, որ հայերէն դեղեցիկ խօսքը գեղեցիկ հնչի ո՛չ միայն լսարանների պատերի ներսում (ափսո՜ս, դա էլ հազուադէպ է լինում), այլեւ՝ ընդհանրապէս տանը, փողոցում, ամէնուր, բոլորի շուրթերին: Ահա թէ ինչու, երբ յաճախ լսում եմ մեր երեխաների աղաւաղուած, անբարեհունչ հայերէնը, մտորում եմ, որ դպրոցում ուսուցիչները դեռեւս անհրաժեշտ ուշադրութիւն չեն նուիրում բանաւոր խօսքի ճիշդ ձեւաւորման խնդիրներին: Հարկաւոր է աշակերտին դնահատելիս նկատի ունենալ ո՛չ միայն խոր գիտելիքները, այլեւ այն, թէ նա ինչպիսի՞ հայերէնով է դրանք մատուցում, ինչպէ՞ս է խօսում մայրենի լեզուով, կարողանո՞ւմ է իր մտքերն արտայայտել գեղեցիկ, տպաւորիչ, հնչեղ: Երջանկութիւն է, երբ հենց այդպէս է հնչում մայրենի լեզուն քո շուրթերին,

կը ցանկանայի, որ «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» հանդէսը իր վսեմ նպատակների մէջ ներառնէր նաեւ բանաւոր խօսքի հարստացման եւ զարգացման խնդիրները, դրանք դարձնէր մշտական հոգածութեան առարկայ, լինէր գեղեցիկ խօսքի, ներդաշնակ խօսքի ակտիւ շարժիչ ուժ:

ԳՐԻԳՈՐ ԵԱՆԶԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Լաւ լուր իմացայ. մեզ մօտ հանդէս է ստեղծուել մեծ նպատակով՝ «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում»: Ողջունում եմ հանդէսի աշխարհ գալը: Դա մեր պետութեան ու կուսակցութեան ազգանպաստ գործերից է:

Լաւ գործին լաւ սկիզբ է պէտք: Սովորաբար առաջնակին շնորհաւորելու են դալիս մօտիկ ազգական-բարեկամները: Ես էլ, իբրեւ հին ուսուցիչ, շնորհաւորում եմ մեր նորածնին. երկար կեանք, բարի համբաւ ու օգտակար անելիք ունենայ մեր ամենաթանկ հարստութեան՝ ժողովրդական լեզուի ու ժողովրդական գրականութեան հիմնաւոր ուսուցման ասպարէզում: Ամէն լաւ բանի սկիզբը դժուարագոյն է: Մենք հայոց լեզուի ու գրականութեան լաւագիտակ շատ մանկավարժներ ունենք թէ՛ քաղաքներում, թէ՛ գիւղերում: Համոզուած եմ, որ նրանք իրենց կատարեալ փորձից ելնելով, հլու-հնազանդ չեն մնայ լեզուաբանական ու գրականագիտական որոշ քարացածութիւններին, իրենց բնիկ կենդանի խօսքն ու գործը կը հաղորդեն դպրոցին, ուսմանը եւ այս հանդէսում շատ բարի գործեր կ'անեն:

Լեզուի առաջին եւ վստահելի ուսուցիչը գեղարուեստական գրականութիւնն է: Հանդէսն իր ուսուցողական գործը պէտք է յենի նախ եւ առաջ դրա վրայ, դտնի ժամանակակից լեզուի նաեւ բարբառային կենդանութիւնները, որ այնքան վարպետօրէն իւրացրել են մեր հեռը՝ Աբովեանից սկսած մինչեւ Բակունց: Սովորել ժողովրդից եւ ժողովրդական գրականութիւնից: Համոզուած եմ, որ մեր հանդէսը, իրօք, ժողովրդական կը լինի, իր էջերը կը զարդարի ժողովրդական կեանքի ու լեզուի լոյսով: Դժուարին գործ է, բայց լիայոյս եմ, որ հանդէսը պարզերեւ գուրս կը գայ:

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

***

Ինստիտուտի կոլեկտիւը գոհունակութեամբ ընդունեց «Սովետական մանկավարժ» ամսագրի «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» յաւելուածն ինքնուրոյն հանդէս դարձնելու մասին որոշումը: Համոզուած ենք, որ հանդէսը սրբութեամբ կը կատարի իր առաքելութիւնը՝ հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչների տեսական եւ մեթոդական կավարժական մակարդակը բարձրացնելու, մայրենի լեզուի ուսուցման առաջաւոր փորձը պրոպագանդելու գործը:

Ցանկալի է, որ մեր հանդէսն իր էջերում աւելի շատ տեղ յատկացնի հայոց լեզուի եւ գրականութեան ծրագրերն ու դասագրքերը կատարելագործելու, արդիականացուած մեթոդներով դասը վարելու խնդիրներին:

Մայրենի լեզուի ուսուցիչների բարեկամ ու խորհրդատու մեր հանդէսին ցանկանում ենք յաջողութիւններ իր վսեմ նպատակների իրականացման պատասխանատու գործում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

digitised by A.R.A.R.@

Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՈՒՍՈՒՑԻՉ

Մեր լեզուն երկար ու դժուարին ճանապարհ է անցել, այդ ճանապարհին ստեղծելով գրականութեան անթառամ արժէքներ։ Բայց խորապէս արդար կը լինի արձանագրել, որ նրա զարգացման եւ համակողմանի ծաղկման համար երբեք չեն եղել այն պայմանները, ինչ վերջին վաթսուն տարիներին, մեր հողի վրայ ե՞րբ են եղել այսքան դպրոց եւ ուսուցիչ, հայերէնով լոյս տեսնող գրականութեան այսպիսի հարստութիւն, հայրենի հողի վրայ ստեղծագործող հայ գրողների այսպիսի անընդմէջ շղթայ։

Ուրեմն, մեզանից, միայն մեզանից՝ հայ մտաւորականից ու բանուորից, ուսուցչից եւ ինժեներից, գիւղացուց, գրողից, արտիստից, հաւաքական առումով՝ ժողովրդից է կախուած այդ լեզուի հետագայ զարգացումն ու ծաղկումը։ Լեզուն կենդանի օրգանիզմ է, որ կեանքի եւ ժամանակի թելադրանքով պիտի հարստանայ, նորանայ, աւելի ճկուն եւ տարողունակ դառնայ, այդ լեզուով շարունակաբար պիտի ստեղծուեն գրականութեան եւ արուեստի նոր, վաւերական արժէքներ։ Ապրել անցեալում ստեղծուած արժէքների տոկոսներով միայն, նշանակում է լեզուն դարձնել պահածոյ, թէկուզ եւ սրբազան պահածոյ։

Անցած վաթսուն տարիներին մեր լեզուն զարգացել է ճիշդ այդ ճանապարհով, այդ է նաեւ նրա հեռանկարը, եւ տարբեր առիթներով արտայայտուող մեր մտահոգութիւնները պէտք է բացառապէս գործնական երանգ ունենան, այլ ոչ թէ հնչեցնեն կեղծ տաղնապի ահազանգ կամ էլ ծառայեն էժանագին նպատակներ կամ գրգիռներ հրահրելու նպատակներ։

Մայրենի լեզուի նկատմամբ պատասխանատուութեան չղթայի մէջ մեզանից ամէն մէկն իր խնդիրն ունի։

Հայ գրողը լաւ եւ տաղանդաւոր պիտի գրի։ Ընթերցողը նրա գիրքը չի կարդայ միայն նրա համար, որ հայերէն է գրուած կամ նուիրական թեմա է մարմնաւորում։ Նաեւ հայ գրողը պիտի կարողանայ հայելին դառնալ մեր բարդ ու դրամատիկ ժամանակի եւ դիմանայ գրականութեան համամիութե-

digitised by A.R.A.R.@

նական եւ միջազգային բարձր չափանիշներին։ Արուեստի մէջ տեղական չափանիշներ չկան։

Ուսուցիչը պէտք է խոր ու կայուն գիտելիքներ տայ մայրենի լեզուից, աշակերտի մէջ ներարկի մեր լեզուի գեղեցկութիւնը, ուժն ու նրբութիւնը, կարողանայ նրա ձեռքը տալ գրականութիւնն զգալու, ընկալելու կախարդական բանալին։

Հայ արտիստը պէտք է հմայիչ ու մաքուր հայերէնը հնչեցնի բեմից, կինոյի եւ հեռուստատեսութեան էկրանից։

Մեր լեզուի համար բարձր պատասխանատուութիւն կրող մասնագիտականութեան շարքում առաջին տեղը պատկանում է ուսուցչին, մասնաւորապէս, մայրենի լեզուի եւ գրականութեան ուսուցչին։

Ես ասացի՝ մասնաւորապէս մայրենի լեզուի, որովհետեւ այդ պատասխանատուութիւնը կրում են բոլոր առարկաների ուսուցիչները։ Առանց բացառութեան՝ բոլորը։ Չի կարելի խեղճուկրակ լեզուով քիմիա կամ մաթեմատիկա սովորեցնել, էլ չեմ ասում՝ պատմութիւն, բնագիտութիւն կամ աշխարհագրութիւն։ Այս տրամաբանութեամբ երեւի սխալ չէր լինի «խնդրելու պէս պահանջել» եւ պահանջելու պէս խնդրել» մեր մինիստրութեանը՝ ուսումնասիրել տիրող վիճակը խորութեամբ եւ լայնքով եւ ոչ հեռու ապագայում նման մի համաժողով ծրագրել՝ արդէն միւս առարկաների ուսուցիչների համար։ Ի՞նչ հայերէնով են նրանք գիտելիքներ ներարկում աշակերտներին եւ ի՞նչ հայերէնով են աշակերտները նրանց պատասխանում։

Եւ, այնուամենայնիւ, մտահոգութեան այս շղթայի առաջին եւ վճռական օղակը մայրենի լեզուի եւ գրականութեան ուսուցիչն է։

Հայ ժողովրդի համար, սկսած Մեսրոպ Մաշտոցից, հայերէնի ուսուցչի ֆենոմէնը խորագոյն յարգանքի եւ գնահատութեան առարկայ է եղել։ Մայրենի լեզուի ուսուցիչները գիւղի կամ քաղաքի կարեւոր դէմքերից են եղել, նրանց խորհրդին են դիմել մարդիկ կեանքի կնճռոտ իրավիճակների պահին։ Մեր ճակատագրի ամենադժնդակ ժամանակներում անգամ նրանք հաւատարիմ են մնացել ուսուցչի իրենց բարձր առաքելութեանը։ Այդ բանը հաստատող բազում վկայութիւններին կ'ուզենայի աւելացնել եւս մէկը։ Արեւմտահայաստանից մեզ հասած ձեռագիր մի մատեանի վերջին էջին ես կարդացել եմ ցնցող մի պատմութիւն.

«Մեռաւ Տէր-Մինասը՝ գիւղի միակ ուսուցիչը։ Գիւղն ու վեց ա աշակերտները որբացան։ Տէր-Մինասը մեռաւ դպրոցի շեմին ընկած, հարբած ենիչերու թրի հարուածից։ Այդ օր ուսուցիչը այբուբենի վերջին տառն էր սովորեցնում եւ խնդրեց ենիչերիներին, որ չընդհատեն դասը, մինչեւ երեխաները սովորեն գրել վերջին տառը։ Հարբած ենիչերին չանսաց եւ խփեց Տէր-Մինասին։ Վիրաւոր գլխից արիւնը հոսեց քարէ տալին։ Վերջին շնչում Տէր-Մինասը մօտ կանչեց իր Վահրամ աշակերտին, նրա ձեռքը թաթախեց իր արեան մէջ եւ քարէ տալին գրեց մեր այբուբենի վերջին տառը։

«Գիւղ Զրատուն, 1827 թիւ, կարին։ Բոլորը հաւաքուել, նայում են այբուբենի վերջին տառին ու լալիս են։ Անժրեւոտ մի օր էր»։

Նաեւ այսպէս՝ իր արիւնով է հայ ուսուցիչը սովորեցրել մայրենին, եւ դրա համար մեծարել է նրան ժողովուրդը՝ որպէս իր ինքնութեան պահապանի։

Մեր ժողովրդի նոր ժամանակներում, երբ վերածնուած Հայաստանում հարիւրաւոր դպրոցներ բացուեցին, եւ ուսուցիչների թիւը տասնեակ հազարների հասաւ, իսկ աշակերտների թիւը՝ հարիւր հազարների, ժողովրդի վերաբերմունքը ամենեւին չտատանուեց. ուսուցչի դժուարին գործն այսօր էլ արժանանում է ամենայն յարգանքի եւ գնահատութեան։ Բայց ոչ չփակենք

digitised by A.R.A.R.@

նաեւ մեր նոր իրավիճակի բարդութեան վրայ. ոչ հեռու անցեալում, երբ գիւղում մէկ–երկու ուսուցիչ էր, քաղաքում՝ 25–30, վիճակը, բնականաբար, այլ էր: Նախ՝ ուսուցիչ էին դառնում քչերը, ընտրեալները (մենք այսօր յիշում ենք Ներսիսեան դպրոցի ուսուցիչներին, իսկ քանի՞ Ներսիսեան դպրոց ունէինք) եւ ապա՝ երբ ուսուցիչ մէկ–երկուսն են, բնականաբար, նրանք արժանանում են շատ աւելի ընդգծուած ուշադրութեան եւ վերաբերմունքի:

Այսօր հազար հինգ հարիւր դպրոցի, 40 հազար ուսուցչի (վեց հազար միայն հայերէնի ուսուցիչ կայ), 600 հազար աշակերտի պայմաններում պատկերը, բնականաբար, նոյնը լինել չի կարող: Այսօր մենք շատ աւելի հիանալի ուսուցիչներ ունենք, բայց նրանց համար իբրեւ իսկական ուսուցիչ ընդգծուելը շատ աւելի մեծ տաղանդ, դիտելիք եւ մասնագիտական աւելի բարձր նկարագիր է ենթադրում:

Զմռռանանք նաեւ մեր ժամանակի բարդութիւնը, այլեւայլ ինֆորմացիայի այն հեղեղը, որ թափւում է աշակերտի գլխին, պատանուն ձգող, նրան ուսուցումից կտրող հմայքները՝ հեռուստատեսութիւն, մոդա, կինո, սրճարան, եւայլն: Զմռռանանք նաեւ կեանքի սուր հարցերից, կեանքի ստուերոտ կողմերից նոր սերնդի լաւատեղեակութիւնը: Նաեւ ամէն ինչ քննարկելու նրանց կերքն ու, յանախ, կեցուածքը: Զմռռանանք նաեւ իդէալի եւ իրականութեան անհամապատասխանութեան ոչ քիչ դրսեւորումները:

Եւ այս ամէնի դէմ յանդիման կանգնում է ուսուցիչը: Կանգնում է ամէն օր: Աշակերտը գիտէ նաեւ իր ուսուցիչների անձնական կեանքը. որքա՞ն է համապատասխանում նրանց քարոզած ճշմարտութիւնն այն կեանքին, որով իրենք են ապրում: (ճշմարտութեան մասին խօսելն աւելի դիւրին է, ճշմարիտ ապրելն է դժուար):

Այս ամէնի միահիւսումից է այսօր գոյանում «ուսուցչի հեղինակութիւն» կոչուող առեղծուածը, ի՞նչ հրաշքով է նա գոյանում, ի՞նչ ցնցումներից է նա երերում...

Ուրեմն, այսօր է՛լ աւելի կարեւորագոյն նշանակութիւն է ստանում, թէ ով է ուսուցիչը:

Մենք ունենք մանկավարժական բուհեր: Հարկ չկայ եւ, մա՛նաւանդ՝ ես պատրաստ չեմ այսօր խօսելու վիճակի մասին ընդհանրապէս, միայն երկու մտահոգութիւն: Առաջին՝ մանկավարժական բուհեր, ցաւօք, դնում են ոչ ամենաշնորհալիները, յանախ այդ բուհը շրջանաւարտների համար պարզապէս դառնում է խարիսխ գցելու ամենավերջին նաւահանդիստը: Եւ ապա՝ ուսուցիչը ո՛չ միայն գիտելիք է, այլև՝ երեխաների հետ աշխատելու հակում եւ տաղանդ, խստութեան եւ բարութեան ներդաշնակ միահիւսում, ճաշակ, բարեկրթութիւն, անգամ՝ արտաքին տեսք, քայլուածք, առոգանութիւն:

Ո՞վ է այս ամէնը ճշգրտում այդ բուհերում ընդունելութեան քննութիւններից առաջ: Եւ մի՞թէ այդքան անհնար է դա իրականացնել, փորձուած մանկավարժների, մասնագիտակների տարբեր յանձնախմբեր մի՞թէ չեն կարող նախապէս զրուցել դիմորդների հետ եւ պարզել՝ ով հակում ունի իր ապագայ կոչման նկատմամբ: Այդ զրոյցի եզրայանգումն ինձ աւելի կարեւոր է թւում, քան հետագայ քննութիւնների արդիւնքները. գիտելիքները ձեռք բերուի բաներ են, ուսուցչի տաղանդը պիտի լինի մարդու էութեան մէջ՝ ինչպէս արտիստի, գրողի, նկարչի տաղանդը:

ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» նոր պարբերականի հրատարակութիւնը ինքնին կարեւոր փաստ է։ Հայերէնն աշխարհի ամենահին լեզուներից մէկն է։ Դեռ վաղ ժամանակներից սկսած, հզօր քերթողական շնչով ստեղծուած հայկազեան լեզուն ներշնչել է այնպիսի գրական գլուխ-գործոցներ, ինչպիսիք են Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը», Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը, որոնք համարւում են համաշխարհային գրականութեան թանկարժէք գոհարներ։

1982 թուականի Սեպտեմբերի վերջերին Երեւանում կայացած հայերէնագիտական համաժողովը նոյնպէս ապացուցեց այն հեռաւոր թութութիւնը, որ յարուցում են հայոց լեզուն ու մշակոյթը ո՛չ միայն Սովետական Միութեան մէջ, այլ նաեւ՝ Արեւմտեան Եւրոպայի և Հիւսիսային Ամերիկայի գիտական ոլորտներում։

Որպէս այդ գիտաժողովի մասնակից, զոհունակութեամբ նկատեցի, որ ո՛չ միայն զեկուցումների դգալի մասը կարդացուեց հայերէն, այլեւ առաջ քաշուած բոլոր թեզիսները թարգմանուեցին այդ նոյն լեզուով։ Սա վառ ապացոյցն է այն փաստի, որ հայերէնը հանդիսանում է մտածողատրամաբանական կուռ գործիք, որ այն լիովին յարմարւում է ժամանակակից գիտութեան եւ տեխնիկայի լեզուական պահանջներին։ Հայոց լեզուի այժմեան ծաղկումը արդարեւ է նաեւ այն մշակական հոգատարութեան, որ ցուցաբերում են Սովետական Հայաստանի կառավարութիւնն ու լուսաւորութեան բոլոր հաստատութիւնները։

Ինձ մնում է մաղթել, որ այս պարբերականն իր աւանդը մուծի հայոց լեզուի ամրապնդման եւ հեռագայ հարստացման վսեմ գործում։

ԺԱՆ ՓԻԵՌ ՄԱՀԷ
Բանասիրական գիտութիւնների դոկտոր,
պրոֆեսոր, Սորբոնի համալսարանի
հայագիտական ամբիոնի վարիչ.

⁂

Ինչ էլ ասասելիս լինի նրանց (հայերին) ապագայում, նրանց երկիրը միշտ պէտք է մնայ որպէս ամէնից աւելի եւրոտաբրբրականներից մէկն ամբողջ հողագնդում, եւ արդէն իսկ նրանց լեզուն... մեծ ուսումնասիրութիւն է պահանջում...։ Ձոխ է հայոց լեզուն, եւ առատօրէն կը վարձատրուի նա, ով ի՛նչ-ասասիրի այն։ Ես փորձում եմ, իմ փորձն առաջ է ընթանում։

ՃՈՐՃ ՊԱՅՐԸՆ

⁂

Հայոց լեզուի միւս կողմը, որ արժանի է հիացմունքի, նրա բառային եւ ոճային հարստութիւնն է։ Այս առանձնայատկութիւնը հայ բանաստեղծներին հընարաւորութիւն է տալիս համաշխարհային գրականութեան գանձերը բոլոր նրբերանգներով թարգմանելու հայերէն։ Եւ բառապաշարի հենց այդ հարստութիւնն է, որ դժուարութիւն է յարուցում օտարազգի թարգմանիչներին հայ գրականութիւնը իրենց լեզուներով թարգմանելիս։

ԷՏՄՈՆԴ ՇՈՒՇ

⁂

Ձեր հնամեայ լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն։ Դրա մէջ արեւելքն եմ զգում, դարերն եմ ճշմարտում այնտեղ, տեսնում եմ անցեալի խորհրդաւոր ճշոյլի շողարձակումը։ Ինձ համար պարծանք է հայերէն թարգմանուելը։

ՎԻՔԹՈՐ ՀԻՒԳՕ

⁂

... Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նոյնիսկ գոյութիւն չունէր, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմութեան մէջ. այն ժամանակներում, երբ ֆրանսերէն լեզուն դեռեւս չէր տարբերւում լատիներէնից, գոյութիւն ունէր հայերէն կարեւոր գրականութիւն։

ԱՆԹՈՒԱՆ ՄԷՅԵ

digitised by A.R.A.R.@

Կ. ՄԵՀԵԱՆ

Վազգէն Շուշանեանին նուիրուած «Բագինի բացատրիչին» ուրիշով գրուած եւ «Ազգակ» օրաթերթին մէջ երեւցած Կ. Մեհեանի հեռագայ կարճ գրութիւնը արտագրելով՝ պիտի ուզէինք խոնարհաբար յիշեցնել, որ պէտք է չարտունակուի տարբաբար գրագէտին գրականութեան ու գաղափարական աշխարհին վրայ լոյս սփռող յուշագրութեանց այս շարքը։

Վազգէն Շուշանեանը անմնացէս հանչցած ու անոր մտերմութեան մէջ ապրած մարդոց միտը մեծ չէ հիմա եւ անպարտան շնորհակալ գործ մը կատարուած կ'ըլլայ, եթէ կարգ Փալատեանի եւ կարգ Մեհեանի օրինակով ուրիշներ եւս արձանագրեն իրենց յուշերը, որոնք չեն կրնար մեծ կամ փոքր վկայութիւններու արժէք չունենալ։

Կարգ Մեհեանի յուշը լռիւայն կը յուշէ նաեւ այլ հարց մը, — Շուշանեանի նամականին, որուն մէկանգումը իրագործող անձը անտարակոյս պիտի վայելէ Սիսիւրի գրականութեան բախտով շահագրգիռ բազմութիւններուն երախտագիտութիւնը...

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ

«ԲԱԳԻՆ»Ի ԲԱՑԱՌԻԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՕՆՆԻԿԷՆ ՄԻՆՉԵՒ ՎԱԶԳԷՆ

1913ի մեծ արձակուրդին Գոլոէն վերադարձայ Թոռոսթօ։

Ցունիսի վերջին Կիրակին, Ազգային վարժարանի սրահին մէջ դպրոցական հանդէս մը տեղի պիտի ունենար։ Նոյն վարժարանի աշակերտական չրջանի քաղցր յիշատակներէն մղուած՝ գացի հանդէս։

Յայտագրի գործադրութեան ընթացքին բեմ եկաւ պատանի մը, ոպիտակադէմ եւ առոյգ։ Գահ մը կեցաւ բեմին մէջտեղ եւ նայեցաւ սրահին բազմութեան։ Ո՛չ միայն վարանում չունէր, այլեւ ցայտուն համարձակութիւն մը թնորոշող կեցուածք մը ունէր։

Բանաստեղծութեան խորագիրը ըսելէ ետք, սկսաւ.

— Եղեգնեայ գրչով երգեցի երգեր,
Քեզի ընծա՛յ, իմ հայրենիք...

Ձայնը հնչեղ, բառերը կ'արտասանէր

digitised by A.R.A.R.@

յստակ ու լաւ առողանութեամբ մը։ Բայց գլխի ընծայի ատեն յանկարծ բարձրացուց բաղուկները, ափերը բաց, դրեթէ կ'աղաղակէր։

Հանդէսին վերջաւորութեան, երբ դուրս կ'ելլէինք, ինծի մօտեցաւ ծանօթ տիկին մը։ Իրեն հետ էր արտասանող պատանին։ Խօսակցութեան ընթացքին հարցուցի, թէ ո՞վ էր այդ պատանին։

— Շուշանեանին տղան է,— պատասխանեց։

— Պետրոս էֆէնտի՞ն։

— Ո՛չ, անոր եղբօրը, մեզի դրացի են։

Պետրոս էֆէնտին իրաւաբան, քաղաքական ժողովի անդամ, հայ համայնքին ամէնէն ազդեցիկ անձը, ծայրայեղ պահպանողական եւ, հետեւաբար՝ ծայրայեղ հակադաշնակցական։

— Անո՞ւնը,— հարցուցի։

— Օննի՛կ։

— Օննիկ,— ըսի, ձեռքս ուսին դնելով,— բառերը յստակ ու լաւ կ'արտասանես, նկատեցի նաեւ, որ շատ համարձակ ես։ Բայց շարժումներդ եւ ձայնիդ ելեւէջները չէին համապատասխաներ բառերուն։

Օննիկ յանկարծ չառաջնեցաւ, թուշերը ուռեցան, աչքերը տամկացան եւ կ'երեւի կ'ուզէր պոռթկալ, բայց մնաց դուսպ։

Գարդ էր, թէ շատ վրդովուած էր ինծի դէմ։

Անկէ ետք Օննիկը չտեսայ։ Մոռցեր էի։

Անցան տարիներ։ Օր մը ալ «Յառաջ»ի մէջ Վազգէն Շուշանեան ստորագրութեամբ գրութիւն մը տեսայ։ Քնարական ոճ, խոր զգայնութիւն։ Եւ ընտի՛ր հայերէն մը։

Շուշանե՞ն։ Յանկարծ աչքս առջեւ պատկերացաւ Օննիկը։ Ծի՞ւղ էր ենթադրութիւնս։ Գրեցի Շ. Միսաքեանին։

— Քաղաքակիցդ է,— պատասխանեց։

Յաջորդաբար հրապարակուող իր պատմուածքները եւ վէպերը աւելի չեշտեցին գնահատանքս։ Օր մը ալ նամակ մը ստացայ իրմէ։ Կը գրէր, թէ «Յառաջ»ի մէջ կը գործակցինք, բայց իրարու հետ չենք հաղորդակցիր, եւ յիշելով հանդէսի պարագան՝

— Այդ օր չատ զայրացայ, բայց աւելի ուշ ճիշդ համարեցի դիտողութիւններդ։

Առիթ սկսաւ մեր կանոնաւոր թղթակցութիւնը, մինչեւ այն օրը, երբ Մարտկոցական շարժումը ծայր տուաւ։ Որակումը դժգոհեցուց զիս։ Մարտկոց կամ կրակոց որո՞ւ դէմ։ Պայքարը հոգեզհեռէ խորացաւ։ Կը հետեւէի խոր դժգոհութեամբ։ Որոշ ատեն ետք՝ նամակ մը. «Դուն պէտք է, որ մեզի միանաս», երկար բացատրութիւններ տալէ ետք։

Պատասխանեցի, թէ ապահովաբար ունիք դժգոհանքներ եւ արդար պահանջներ։ Բայց, նաեւ այդ «մեզի»ն ըմբռնելի չէ ինծի համար կուսակցութենէն ներս։ Ձեր կիրարկած կերպը ճիշդ եւ արդարանալի չեմ համարեր։

Ընդունեցաւ։

1937ի վերջաւորութեան Փարիզ մեկնեցայ։

Շրջանը դրեթէ քայքայուած էր։ Պարտադրեցին, որ չվերադառնամ Ֆիլիպէ եւ չրջանի վերակազմութեամբ զբաղիմ։ Մանր պատասխանատուութիւն մըն էր։ Քաղաքէ քաղաք, բեմէ բեմ։ Ամէն տեղ մարտկոցականներ։ Իսկ պատերազմը մեր շարքերէն խլած էր որոշ թիւով երիտասարդներ։

Դաշնակցութեան կեդր. Կոմիտէի նախաձեռնութեամբ՝ պիտի տօնուէր Եղեռնի տարեդարձը։ Վարձուած էր Փարիզի մեծագոյն սրահներէն մէկը. կը նախագահէր Շ. Միսաքեան։ Պիտի խօսէինք Հ. Զարդարեան եւ ես։ Երբ բեմ ելայ, շուրջ երեք հազարի հասնող բազմութիւն մը լեցուցած էր սրահը եւ զայդ վերնայարկերը։ Ուշադրութիւնս գրաւեց վերեւի վերնայարկին մէջտեղը կանգնած վազգէնը, ձեռքերը մէջքին. իր նախընտրած համեստ տարրին եւ երիտասարդութեան հետ էր։

Հակառակ մարտկոցականներու մղած պայքարին, Դաշնակցութեան համայքը մնացած էր անվթար։ Յաջորդ օրը,

digitised by A.R.A.R.@

Շաւարշ Միսաքեան իր տոմսին խորագի-
րը դրած էր. «Այսպէ՛ս կը տօնեն...»:

Օրեր ետք գացի Ֆլորիա ճաշարանը:

Լեցուն էր: Սպասաւորը զիս առաջ-
նորդեց սեղան մը, երկու հոգի նստեր
էին դէմ դիմաց: Մէկը Վազգէնն էր:
Բայց, տարուած խօսակցութեամբ՝ չնը-
կատեց. երբ ոտքի ելան.

— Նայէ՛, Վազգէն,— ըսի:

Գահ մը ուշադիր նայեցաւ եւ յան-
կարծ.

— Մեհեա՞ն,— գոչեց, բազուկները
օդակելով վրիս:

Գացինք սրճարան մը: «Հանգամանք
ունիս, անպատեհ չէ՞ ինծի հետ ըլլալդ»,
ըսաւ:

— Գրած էի քեզի, թէ ուր ալ ըլլամ,
որուն հետ ալ ըլլամ՝ ես ինծի հետ եմ
միշտ,— ըսի:

Մարսէյլէն նոր վերադարձեր էի:

— Թողած տպաւորութիւնդ հրճուե-
ցուց զիս,— ըսաւ,— ես միշտ նոյն դաշ-
նակցականն եմ, այդպէս ալ պիտի մնամ:
Կ'ուզեմ, որ զոնէ դուն վստահ ըլլաս այդ
մասին: Դժուար գործի լծուած ես, բայց
չարունակէ: Ինչ որ մենք քանդեցինք,
պէտք է վերաշինուի...

Գատերազմի պատճառով վերադար-
ձայ Գուլկարիա:

Օր մը նամակ մը ստացայ իրմէ:

Կ'ըսէր, թէ ձեռագիրներ ունի եւ կը
փափաքի, որ լոյս տեսնեն «Հայրենիք»
ամսագրին մէջ: Եւ կ'ուզէր, որ բարեխօ-
սեմ Ռ. Դարբինեանին: Պատասխանեցի,
թէ երկու անպատեհութիւններ կան: Ա-
ռաջին՝ տուած կ'ըլլամ այն տպաւորու-
թիւնը, թէ կը կասկածիմ Ռ. Դ.ի լայնա-
խոհութենէն: Ձեմ կարծեր, թէ ան չփո-
թէ գրականութիւնը կուսակցութեան
հետ: Մա՛նաւանդ՝ որ նման բան մը կը
հակասէ մեր կուսակցութեան ոգիին և ա-
ւանդութիւններուն: Իսկ երկրորդը՝ դուն
տրդէն որոշ գիրք մը ապահոված ես մեր
դրական անդամատանէն ներս: Ինչ որ մե-
ծագոյն յանձնարարականն է: Եւ թելադ-
րեցի ուղարկել ձեռագիրները: Քանի մը
ամիս ետք, Շուշանեանի մէկ գրութիւնը
լոյս տեսաւ ամսագրին մէջ:

Շաւարշէն ստացուած նամակ մը
սահմոկեցուց զիս: Կը դուժէր Վազգէնի
մահը:

«Իր երբեմնի բարեկամներէն միայն
ես կը հետեւի իր դագաղին...»:

Նոր վշտիս մէջ, Շաւարշին այդ օ-
րինակելի վեհանձնութիւնը ափոփանք մը
եղաւ:

ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Գ.– ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

11

14 Մայիսի. 1920. Ժընեւ

Սիրելի Սիմոն,

Վերջապէս եղաւ այն, ինչ որ սպասում էի եւ վախենում. — Հայկական սովետական կառավարութիւն (1): Խատիսեանը (2) հրաժարւել է եւ դահլիճով միասին, գօրքը նոր կառավարութեան կողմն է: Գոնէ ջարդեր տեղի չունենան, չա՞տ վախենում եմ. հայկական հարցը տակն ու վրայ եղաւ. «անկախ Հայաստան» նորից դարձաւ երազ, եթէ չ'ոչնչանայ էլ... այդ ամէնը շնորհիւ Անտանտի, որ քաշ տւեց, ձգձգեց եւ խլուրդները իրենց ստորերկրեայ գործերը տեսան... Իթթիհատ-բոլշեւիզմ, հին խօսքով, Ռուս եւ Թիւրք, նորից ոտքի վրայ են, ձեռք-ձեռքի տուած Հայութիւնը ջնջելու...

Ցաւում եմ, որ այնտեղ չեմ, եւ ուզում եմ գնալ. դրա համար էլ այս նամակս գրում եմ. այժմ պարզւում է, որ մեր ապագի այս խառնակ վիճակը տարիներ կարող է տեւել. եւ ուրմեն գլխի ճար պիտի տեսնել. Ժընեւում ինձ համար այլեւս անկարելի է ապրել. ո՛չ մի տեղից փող չի գալիս. Ամերիկա գրում եմ-գրում, ո՛չ փող են ղրկում, ո՛չ նիւթերս, ո՛չ էլ պատասխանում են. ընկերներս եկան գնացին, կերան-լափեցին, ազգային գումարներով իրենց ու իրենց կնիկներին վարդաբերեցին, եւ ոչ ոք վրաս չմտածեց, նոյնիսկ մի նէր չտին երեխայիս. վերջապէս այդ մարդկանց ես արհամարհում եմ, հաշւում եմ աւազակներ, խաչագողներ, եւ այլ ածականներով, որոնց արժանի են, չունենալով ո՛չ խելք, ո՛չ վարգացում, ո՛չ հեռատեսութիւն:

Մխիթարականը այն է, որ գոնէ այժմ սրանք պիտի հեռանան նիետ խուդա բեկ դոբրա: Այո՛, ոչնչութիւններ էին իմ աչքում քո այդ Համօներդ, Գարոներդ, Վարանտեան-Ահարոնեան, Սարգիս — [°...եան] — Բաբայեան եւ ամբողջ կլիքը... (4)

digitised by A.R.A.R.@

Ցաւում եմ, որ դու մնացիր, խայտառակեցիր քեզի այդ յիմարների հետ. այժմ եթէ հնարաւոր է, ուղղիր գնալդ, եւ իսկոյն մի կերպ քեզ Կովկաս նետիրիր Նոյնը ես եմ մտածում, վճռել եմ Կովկաս գնալ, այնպէս որ խնդրում եմ՝ ինչ համբու ծախս որ որոշել էք ինձ տալու 3 հոգու համար, առ մօտդ, կամ բանկը դի՛ր, եւ ինձ գրի՛ր, մինչ այդ գուցէ Ամերիկայից մի բան ստանամ. ուզում եմ հիմա գանձես փողը, որ յետոյ չասես թէ չունենք, թէեւ միշտ քեզ նման կըրկնում են այն յանկերգը՝ թէ փող չկայ. բայց իրենց համար փող կայ — այդ սինքն իրենց կանանց տուալետի (5), 12500 ֆր. արժեցող վերարկուի եւ քօայի (6), եւ այլն, եւ այլն...

Փողը իսկոյն գանձի՛ր, որ ապահով լինի իմ համբու ծախսը, այլապէս որ մնամ այստեղ, դատապարտուած եմ սովի: Փողս որ ապահով լինի — մի կերպ ինձ Ռուսիա կը ձգեմ, կամ եթէ ո՛չ մի այլ տեղ՝ ուր հնարաւոր լինի գլուխս պահելը — Ամերիկա, Եգիպտոս, բայց իհարկէ — Ամերիկա ամենից շուտ. եթէ անկարելի եղաւ Ռուսիա գնալ, թէեւ հնարաւոր է. միայն փող է պէտք:

Փողը պէտք է առնես, քանի ձեր նախագահը տակովը չի արել, իր զգոյութիւնը ապահովելու համար. ամէն բան սպասելի է այդ քլիքից. ապացոյցներ շա՞տ կան:

Խնդրում եմ շուտով պատասխանես, եւ գրես Մուրադբեկեան[*] եպիսկոպոսի հասցէն:

ԳՈ ԱՒԵՏԻՔ:

---

(1) *Նամակի գրուած ժամանակ սովետական կառավարութիւն չկար դեռ Հայաստանում.*
(2) *Այ. Խատիսեանն այն ժամանակ Հանրապետութեան վարչապետն էր.*
(3) *Չկայ չարիք առանց բարիք, բնագրում՝ առաքիչն.*
(4) *Խումբը.*
(5) *Արդ ու զարդ.*
(6) *Մուշտակէ վզնոց.*

12

29 Օգոստ. [1920*], Ժընեւ

Սիրելի Սիմօն,

Ետագայ շա՞տ հետաքրքրական նամակդ. սակայն ես ալեւս ո՛չ մի հաւատ չունիմ մեծամասնականների «ապնիւ, բարեկամ խօսքի» վրայ. բոլոր փաստերը գալիս են ապացուցելու՝ որ Ռուսները մեր մեծ, ահաւոր եւ նենգ ու դաւաճան թշնամիներն են. պարզ է, որ դաշնակցած Թիւրք ու Թաթարի հետ ուզում են վիժեցնել Հաստատնի, առհասարակ Հաստատնի՝ յայսկոյս թէ յայնմ կոյս՝ ստեղծելուն (1): Էնվեր-Թալաաթ-Լենին-Չիչերին նոյնացած են, եւ մեր դահիճներն են. միւսը (2) բոլորը ֆիկցիօն (3) է. չպիտի մեզ խաբենք, որ խաբէութիւններից ամենավատն է. ոչինչ չի փոխուած լուսնի տակ. թշնամի է եղել Ռուսը մեզ, թշնամի է այսօր, նոյնը լինելու է եւ վաղը:

Պէտք չէ խաբուել-հրապուրուել սոցիալիստական լոզունգներից (4), բաց աչքերով նայել իրականութեանը, եւ կռուել Ռուսների դէմ, կուել առանց հաշիւ տալու նոյնիսկ. թող գան Երեւանն էլ առնեն, ամողջ Հայաստանն էլ առնեն;

digitised by A.R.A.R.@

թող կոտրեն էլ. մեր արիւնի մէջ կ'խեղդւի ռուսо-հրեայ-թիւրքо-թաթար սրիկայական քլօքը (5):

Զարմանում եմ, որ եւրոպական մամուլի մէջ մեր բարեկամների միջոցով փորձ չէք անում դիմակապերծ անել նրանց եղեռնական դաշնը արիւնարբու Թիւրքերի հետ Հայ ժողովրդի բնաջնջումը գլուխ բերելու համար:

Ողորմելի Ռուսիա, ոչլոտ, քաղցած, ձգտում է աշխարհը փրկել իսլամների միջոցով, ողորմելի բոլշեւիզմ, էութեամբ դահիճ, աւազակ, բռնակալ...

Յաւենայն դէպս Հայը մի օգուտ պիտի ունենայ այս իրադարձութիւնից, որ պիտի բաժանւի Ռուսներից խորին ատելութեամբ եւ զզուանքով, ինչպէս Թիւրքերից բաժանւելուս (6) է զգացած: Համբոյրներով

Քո ԱՒԵՏԻՔ:

---

(1) *Բնագրում՝ այսպէս, փոխ. «սահեղծուելը»:*
(2) *Կարդա՛ կա՛մ «միւսը, բոլորը», կա՛մ, աւելի լաւ, «միւս բոլորը»:*
(3) *Հայերէն՝ «խաբկանք»:*
(4) *Նշանաբաններից:*
(5) *Միաւորում:*
(6) *Կարդա՛ «բաժնուելիս» կամ «բաժանուելուց»:*

13

5 Սեպտեմ. 1920. Ժընեւ.

Սիրելի Սիմօն,

Չեմ ուզում վիճաբանութեան մէջ մտնել, որովհետեւ վերջի վերջոյ ես բուն գործերին, անցուդարձերին իրազեկ չեմ. իմ տեղեկութիւնները լրագրերից են. սակայն ես չեմ կարող աչք գոցել Հակական Պարլամենտի հարցապնդումներին եւ բանախօսութիւններին, ուր Հայ իրականութիւնը ներկայացնող մարդիկ, ինչպիսին են Համօն, Աղբալեանը եւ միւսները բուռն ցասումով հակառակ են խօսում բոլշեւիկներին եւ Պարլամենտը հաւանութիւն է տալիս:

Ես քննադատում եմ եւ քո կարծիքները, գիտնալով, որ դու պոռոտախօս եւ կրքոտ չես, բայց, սիրելիս, ի՞նչով բացատրել փաստերը: Բոլշեւիկների լեզուն այլ է, գործերը — այլ. փաստը այն եղաւ, որ մինչեւ Նախճեւան առանտին Թաթարներին, ուզում են խլել եւ Վայոց Ձոր, Իգդիր, Կարս, Օլթի: Ուզում են իրենց գործերով վերականգնել Բրեստ-Լիտովսկի ողբալի դաշնագիրը:

Ինձ թւում է, որ դու էլ ինձ պէս կաշառւում ես լզունգներով, գեղեցիկ խօսքերով ծրագրերով սոցիալիզմով, երազներով, ինձ պէս իրատես չես, այլ ֆիկցիոնիստ (1): Թօթափի՛ր աչքերից վարագոյրը. — եւ աչքերիդ առջեւ կ'տարածւի դաժան իսկութիւնը — այն ինչ որ մուսաֆատը (2) չկարողացաւ, բոլշեւիզմը արեց: Իթթիհատը բոլշեւիստ է, — սա իրականութիւնն է. անհերքելի փաստ ունիմ, որ Բերլինում, Թալաաթ փաշան գործում է սպարտակիստ բանտորների մէջ. սրան չես հաւատում, սակայն նոյնքան իրական է, որ Քեմալը (Մուսթաֆան) իր մասսաները (3) ոգեւորում է բոլշեւիզմով...

Կրկնում եմ, եւ վերջացնում. Ռուսիան ճիշտ եւ ճիշտ նախկին Գերմանիայի դիրքի մէջն է՝ պայքար մղելով Անգլիայի դէմ, օգտագործում է իսլամ տարրը մեկի կոհելով. մեր փրկութիւնը Ռուսիայի ջախջախման մէջն է. կորչի Ռուսիա-Թիւրքիա, որ ապրի Հայաստանը:

digitised by A.R.A.R.@

Իմ գնալը մի կաշմար (4) դարձաւ ինձ համար. այդ 5000 ֆր. հապիւ հասնեմ կամ նոյնիսկ չհասնեմ, սակայն անկարելի է դելեգասիոնից աւելին խնդրել. դրա համար էլ շա՛տ եւ շատ շնորհակալ եմ բոլորիցդ, եւ խնդրիր Ահարոնեանին, որ այդ 5000 առանց վերածելու գիցերիական ֆրանկի հետը բերէ, տայ Նեվրուպին, որ գնալուս (5) առնեմ: Դրա մասին գրել եմ Միսակին. կարդա նրան գրածս:

Սակայն ինձ ուրիշ փող է պէտք. շա՛տ կարիք ունիմ. անպատճառ վճարելիք մանր պարտքեր, հագուստ եւ այլն:

Ում որ դիմեցի, քար տվին. թոյլ եմ տալիս ինձ թէ Մուրատբէկեանին՝ եպիսկոպոս, թէ Արմէն Գարոյին անւանելու եւակամներ, վատեր, եւ ոխ քշելու նրանց հանդէպ. այդքան վիրաւորական վերաբերմունք ինձ դէմ. ու

Դու ի՞նչ ես անում, աշխատանքդ ի՞նչպէս է առաջ գնում. ի՞նչպէս է առողջութիւնդ:

Ընդունիր մեր բոլորի քարեւները, բարեւներ հայր-սուրբերին:

Քո ԱՌԵՏԻՔ:

A. Issahakian, Fondamentor Cereri.
2448. B, II. Venezia.

---

(1) *Այսուհետեւ բոլոր նամակներն ու բացիկները հասցէագրուած են Վիեննայի Մխիթարեան վանքը, նախ՝ Հ. Բոնաբաս Գիլեղիկեանին, որպէսզի Մ. Ցակոբեանին յանձնի, եւ ապա՝ յանուանէ վերլիներս, որ տյտեղ գրաղւում էր իր հիմնադրած «Արեգ» հանդէսի խմբագրութեամբ եւ հրատարակութեամբ։*

(2) 1921 *թ. Յուլիսի 1ին Յովհ. Թումանեանին դրած նամակում Հայաստանի ամբողջ յոյսը կապում է Ռուսաստանի հետ՝ «մինչ մեւի տակ էլ որ նա ներկայանայ» («Նամակներ», էջ 181)։ Իսկ մեւս կողմից 1921 թ. Օդոստոսի 18ին գաղնակցական Վարդգէս Աճարոնեանին գրում էր. «Պարզ է, որ թշլեւիզմը թշնամի է Հայաստանի մեցցման եւ անկախութեան. նրա սրիկայ ռուս եւ ջհուդ (հրեայ) չէֆերը Հայաստանը զոհեցին Մ. Քեմալի բարեկամութեան համար, թքելով ո՛չ միայն հայերի վրայ, այլեւ իրենց սոցիալիստական ծրագրի վրայ. ուրեմն մեզ մնում է պայքարել, գարկել, ինչքան կարող ենք, դուցէ մինչ այդ լիրբ թշլեւիզմը ընկնի սոցի ճիրանների տակ ատակած, եւ Մ. Քեմալը յոյների ոտքի տակ պարտուած, եւ մենք նորից չունչ քաշենք. գալիք նոր Ռուսիան դուցէ ուրիշ կերպ վերաբերի մեզ։ Այս նամակը «բոլշեւիկ» գրաքննութիւնից չէր անցնում (տե՛ս «Լեւոնի հասեակեանի նամակները··· Վ. Աճարոնեանին», էջ 78-79)։*

15

24 Օգոստ. 1921. Ապոլ.

Սիրելի Սիմօն,

Հայր Յովսէփից կը լսես մանրամասնութիւններ իմ մասին. — հիմա ամառանոց ենք, դնեցանք անտանելի շոգեր. երեխաս ծանր հիւանդացաւ տաքերի պատճառով, հիմա լաւ է:

Ես, ուժով-կօռով աշխատում եմ, գրում եմ, կարդում եմ, բայց մեծ մասով թախծում, տխրում, սարսափելի տխրում. հոգեպէս մէնակ եմ, անընկեր. միակ մօտիկ եւ սիրելի մարդը ինձի համար — Հայր Յովսէփն է. ռուսահայ է, սրանով շա՜տ բան ասած կը լինեմ: Միւսները — եպիտ (1), խորամանկ. Երեմեան Սիմէօնը (2), որ (3) հեռուից բարեկամ էի, գալուս օրուանից վատ դիրք բռնեց իմ դէմ. խուսափեց, խուսափեց, հիմա իրար չենք բարեւում. նա ուզում էր, որ ես իրան հռչակէի մեծ բանաստեղծ, մեծ քննադատ. իսկ ես — մի՞թէ ընդունակ եմ կեղծաւորելու. եւ գաճաճներին գլուխ խոնարհելու:

Մինչեւ խոր աշուն գիտցումս եմ, յետոյ Վենետիկ կը դառնամ, եթէ բնական գտնեմ. եթէ չգտնեմ, չգիտեմ, ի՞նչ պիտի անեմ. երեխաս դպրոցը (4) ցերեկօթիկ է, 4-5 ամիս անցաւ, դեռ հայերէն տառերը չսովորեցրին. ողորմելի դպրոց...

Բայց ի՞նչ անենք, ո՞ւր գնանք. հայրենիք չունինք, միջոց չունինք լաւ տեղեր գնալու. — պիտի տոկանք: Ռուսական ահաւոր սովը շա՜տ է մտապրաղեցնում ինձ. վախենամ Հայաստանի միայն կմախքը մնայ, բառի բուն իմաստով. անհուն ողբալի է հայութեան վիճակը. Զէյթունը ջնջուած, Կիլիկիայի հայութիւնը մօտալուտ վտանգի տակ. Մ. Քեմալի իշխած նահանգներում (Թիւրքիայի) հայութիւնը տարագիր եւ ջարդուած. Կարսի նահանգի հայութիւնը կոտորուած ու կողոպտուած, նոյնպէս Շիրակի, Իգդիրի եւ այլուր... հիմա էլ — սով, խոլերա (5), ժանտախտ!!!

digitised by A.R.A.R.@

Դու ի՞նչ ես անում, գիտեմ, որ լաւ չես կարող լինել. բայց ինձնից լաւ կը լինես, որովհետեւ չոր-գլուխ ես. ի՞նչ կը լինի, կլինի. [այս առթիւ ռուսերէն մի առած, որի մի բառն անընթեռնելի է]:

Շա՞տ ցաւ պատճառեց Հայր Բառնաբասի վաղահաս մահը. ի՞նչ էր պատճառը. առողջ մարդ էր, կենսուրախ. ափսո՞ս, շա՞տ ափսո՞ս, լաւ մարդ էր, բարի, միամիտ, աշխատասէր...,

Է՞հ, դժոխք է աշխարքը (6), պօէպիան (7) էլ անկարող է շպարել, ոսկեպօծել...

Ոչ մի տեղից նորութիւն չունեմ. բաներ գիտես, հաղորդիր. ջերմ բարեւներ կնոջս կողմից, եւ համբոյրներ ինձնից:

ՔՈ ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

A. Issakian. Ginevra. Botter. *Asolo.* (Prov. di Treviso). Italie.

---

(1) Jésuite, *փոխարէրարար՝ էկեղեցուորդ։*

(2) *Գրականագիտական ազգային դէմքերդ առաջատարեակի հեղինակը, հրատարակել է «Պատկերներդ բանաստեղծական ժողովածուն, որի մասին Ա. Իսահակեանը գրական կարծիք է արտայայտել (տե՛ս գնդամակներդ, էջ 146). «Շատ սիրուն էլեր կան այնտեղ, իսկական բանաստեղծութիւններ, քնարական կտորներդ, եւայլն։*

(3) *Կարգա՛ կա՛ծ գորինն, կա՛մ գրաբեկամ էրդ։*

(4) *Վենետիկի «Մուրատ-Ռափայէլեանդ դպրոց։*

(5) *Ժանտախտ։*

(6) *Բնագրում՝ այսպէս։*

(7) *Բանաստեղծութիւնը։*

16

8 Նոյեմ. Վենետիկ, [1]921.

Սիրելի Սիմօն,

Այսօր ստացայ նամակդ. արդէն լսել էի ամսագիր հրատարակելու միտքդ, եւ Յովհաննէս Խանն (1) էլ հաստատեց. շա՞տ ուրախ եմ այդ ձեռնարկիդ համար, որ արդէն պահանջում (2) էր, եւ որ այդ միտքը ես էլ փայփայում էի. կբաղձամ յաջողութիւն եւ տեւողութիւն: Եւ կը բերեմ իմ աջակցութիւնը:

Խանն ասաց, որ քեզ յայտնի է արդէն այն ահաւոր լուրը եղբօրդ մասին, որ ես կարդացել էի եւ չէի պիրտ արել քեզ յայտնել. գուցէ եւ սխալ է... սակայն, հոգիս, բառ չունեմ ասելու՝ մխիթարական. պիտի խոնարհուել եւ հաշտուել...

Խանն ինձ համոզեց, որ Վիէննա տեղափոխեմ, թէ իբրեւ առասպելական էժան երկիր, թէ կուլտուրական միջավայր, գործի՝ ամսագրի տեսակէտից՝ գործելու տեղ. գիրք հրատարակելու, եւ մանաւանդ երեխայիս կրթութեան համար նպաստաւոր: Պիտի ասեմ, որ Ս. Ղազարի մխիթարեանները գլխիս սառը ջուրը ածեցին. ո՛չ մի բարեկամական վերաբերմունք. մի կողմ թողնենք գիրք հրատարակելը, որ ուղղակի անկարելի է, այլ շա՞տ կայրացուցիչ, բարբարոս վարուեցին հետս. երեխայիս երկու անգամ դուրս արեցին դպրոցից, եւ ոչ մի գնով գիշերօթիկ աշակերտ չեն ընդունում, որովհետեւ... կաթոլիկ չեմ: Այժմ միայն ցերեկօթիկ է, եւ մինչեւ օրս նոյնիսկ հայերէն պարզ գրել-կարդալ չսորվեցուցին, այսպէս են վարուում, որ հեռանամ Վենետիկից, եւ չդիտեմ իրենց

digitised by A.R.A.R.@

սրիկայութիւնները, եւ ապգակործան ընթացքը: Գիտես, որ սա մի կորած-լատինացած վանք է դարձել, ինտրիգների (3), կռիւների որջ. եւ Վատիկանի ստրուկ (4): Չարժէ երեխաս այստեղ պահել. թէեւ եթէ ուզենամ, վերջը կը մոռցնեմ գիշերօթիկ, որովհետեւ շան պէս վախենում են ինձնից. չլինի թէ, թերթերում գրեմ...

Հիմա դու ինձ մարդավարի գրի՛ր, թէ արժէ՞ որ Վեննա տեղափոխեմ. ի՞նչքան դրամով կարող եմ լաւ ապրել, անկարիք, — այսինքն ունենալով քաղաքի լաւ մասում (ոչ բուրժուական (5), բայց օդաւէտ) 2 սենեակ, եւ խոհանոց, կահաւորած: Մնունդը կարգին, հագուստը, լուացք եւ այլն: Եւ վերջապէս երեխայիս հարցը. ի՞նչ դպրոց մտցնեմ. կամ այնպիսի մի պանսիոն, ուր ֆրանսերէնը լաւ դրուած լինի, որ տղաս չմոռանայ այդ լեզուն, որ արդէն տիրապետում է, բայց իբրեւ մանուկ շա՜տ շո՜ւտ կը մոռանայ, ափսո՜ս է: Կամ հնարաւոր է գտնել մի լաւ ուսուցիչ ֆրանսերէն լեզի, որ շաբաթը մի-երկու անգամ պարապի հետը:

Այդտեղ մի հայ ընտանիք կայ, Օքսէնտ Ֆերէճաճեան (Feredjadjian), հասցէ Unter Donaustrasse, № 23, II, bis. նրա՛ երկու տղաները այստեղ էին սովորում (Մ. Ռաֆայէլեան դպրոցում). բայց հիմա Վիէննա են, եւ գտնւում են քաղաքից դուրս մի պանսիոնում. կը խնդրէի նրանց հօրը հարցնես. թէ ի՞նչ պայմաններով են ընդունում, ի՞նչ գումար տարեկան, ի՞նչ տիպի (6) դպրոց է. ի՞նչպէս են կերակրում. եւ ինձ գրես: Եւ տեղ կա՞յ մեր երեխային:

Ուրեմն ինձ գրես տւածս հարցերի մասին. եւ արդեօք դիւրին է բնակարան գտնելը, կամ մենք գանք եւ որոնենք. ապրելով այդտեղ մի հոտելում (7) կամ ընտանեկան պանսիոնում, տանելի գումարով: Մենք այստեղ տանը շա՜տ թանգ ենք վճարում. եւ իմ բիւդժէն (8) ամսական միայն 500 ֆրանսական ֆրանկ է: Գրէիր եւ հոտելի (7) կամ պանսիոնի մասին: Այս գումարով մենք այստեղ չենք կարող ապրել, շա՜տ ենք նեղւում. եւ աւելին չեմ կարող ունենալ:

Ուրեմն սպասում եմ քո խորհուրդներին, որ որոշեմ Վիէննա տեղափոխուելս:

Գալով նիւթ ուղարկելուս՝ ձեռքիս տակ պատրաստի բան չունիմ. ունէի բաւական բաներ, ուղարկեցի «Ճակատամարտին» — 5 ոտանաւոր, մի պօէմ, մի արձակ բան. բայց 3 ամիս է ձայն չկայ. ստացել են, թէ ոչ. տպում են, թէ ոչ: Այսօր պիտի գրեմ, որ յետ ուղարկեն: Կամ դրանցից կուղարկեմ, կամ կը գրեմ նորը. սակայն գլուխս շա՜տ խառն է. մանաւանդ, երբ տեղափոխելու հարցն էլ եկաւ:

Ուրիշ շա՜տ բան ունիմ գրելու, բայց մնայ առայժմ. գրածս գործնական բաների մասին է:

Ջերմ բարեւներով իմ եւ կնոջս կողմից, մնամ համբոյրներով

ՔՈ ԱՌԵՏԻՔ:

Գրիր դպրոցի հասցէով:

---

(1) Յովհաննէս խան Մատենեան (1864–1931) *Շէյլոփիրի յայտնի թարգմանիչ, Խոհակեանին օգնել է նիւթապէս եւ բարոյապէս։*

(2) *Երեւի «պահանջում էր»։*

(3) *Բանսարկութիւններ։*

(4) *Կրքոտ եւ իրականութեանը չհամապատասխանող սնփայել խոսքեր։*

(5) *Բուրժուական։*

(6) *Տեսակ։*

(7) *Հիւրանոց, պանդոկ։*

(8) *Տրամադրելի գումար։*

digitised by A.R.A.R.@

17

14 Նոյեմբ. [1921], Վենետիկ.

Սիրելի Սիմոն,

Նամակդ հիմա ստացայ, եւ իսկոյն պատասխանում եմ. գրաբերս Պ. Երեմեան, կը ծանօթանաս եւ ձեռքիցդ եկած լաւութիւնը կանես. լաւ տղայ է եւ ուսումնասէր. նրա հետ ուղարկում եմ նաեւ այս նիւթը թերթիդ համար (1):

Հիմա դառնանք իմ գործին: Իմ բիւդժէով այստեղ չի ապրւում. ինձ մըտածել տուողը Վիգէնի հարցն է. գտնել մի պանսիօն, ուր եւ ֆրանսերէն անցնին. հայերէնը թողնենք ժամանակին, կամ ես կը պարապեմ ամառները. եթէ պանսիօն չեղաւ, ի՞նչ դպրոց մտցնել: Եւ արդեօք Ֆերեճեճեանի որդոց պանսիօնը լաւ սնունդ ունի. գիտե՞ս, սիրելիս, ծնողները իրենց մասին չեն մտածում, այլ որդոց. երեխան պիտի լաւ մնունդ ստանայ:

Կը խնդրէի դպրոցի մասին լաւ հարցնէիր:

Ես էլ գիտեմ, որ բնակարան անկարելի է գտնել, թերեւս ժամանակի ընթացքում. գուցէ պանսիօն ապրելով (2) Վիեննայի արուարձաններում բնակարան գտնենք, օրինակ քաղաքից մի կէս ժամ հեռու: Գրում ես մնունդի մասին թէ բովանդակութիւնից զուրկ է. կուպէի կոնկրետ (3) գրէիր. իւղ չկա՞յ միթէ: Հացը ի՞նչ տեսակ է:

Պանսիօնը, որ առաջարկում ես, հարկաւ սենեակների տաքութիւնը (վառելը) մէջն է:

Յետոյ կինս մի հարց է տալիս, թէ ելէկտրականութեան ոյժը բնակարանների մէջ քանի վօլտ է. (քաղաքի սովորական վօլտը) ուրիշ խօսքով ասած՝ նա ելէքտր. հարթուկ (4) ունի (ուտիւգ (4), որի գործածութեան համար 200 վօլտ է պէտք. եթէ չկայ, կը ծախէ եւ փոքրը կը բերէ:

Ում որ հարցնես, կ'ասեն. ելէք (5). մեքենայի (հաշւաչափի) վրայ գրած է:

Հարցերը պրծայ. երբ երեխայի դպրոցի մասին համոզիչ տեղեկութիւններ ստանամ, սնդուկներս կը կապեմ, եւ կը գամ, նախօրօք քեզ յայտնելով պանսիօնի համար:

Կուպէի մօտդ լինեմ, այստեղ շա՞տ մէնակ եմ.

Համբոյրներով քո ԱՒԵՏԻՔ:

---

(1) *Նիւթը նամակում չէ։*
(2) *Գարդա՝ Գապրիելլի՝։*
(3) *Որոշակիօրէն։*
(4) *Արդուկ։*
(5) *Ելէկտրական։*

18

26 Նոյեմբ. [1921] (1), Վենետիկ.

Սիմոն ջան,

Պ. Ա. Երեմեանի հետ քեզ մի պօէմ ուղարկեցի, սակայն կը խնդրեմ,

digitised by A.R.A.R.@

որ առայժմ չիրատարակես. որովհետեւ դա ուրիշ բաների հետ Պոլիս էի ուղարկել, սակայն չէին տպում, եւ չէին պատասխանում, ապա գրեցի, որ էլ չտպեն, ուրիշի եմ տալ. սակայն երէկ նամակ եմ առնում, գրում են, թէ երկու նիւթ տուել ենք ինչոր «Հայկաշէն» ժողովածուի. (ես ուղարկել էի «Ճակատամարտին»). սակայն չեմ իմանում ի՞նչ նիւթ են առել, վախենամ քեզ դրկածն են առել, որով խայտառակութիւն կը լինի միաժամանակ երկու տեղ տպւի. ուստի խնդրում եմ, որ չտպես, մինչեւ պարզւի: Քեզ շուտով ուրիշ նիւթ կը դրկեմ: Ես էլ առայժմ Վենետիկ հաստատուեցի, դժուար էր երեխայի տեղափոխման հարցը: Մանրամասը կը գրեմ. տրամադրութիւնս շա՛տ վատ է. Հայաստանի վիճակը ինձ շա՛տ է մտահոգում. փրկութիւնը Ռուսներից է(2) նրանք էլ մեզ վաճառում են Թիւրքերին. ամէն պետութիւն մեզ հանդէպ դիպլոմատի(3) է բանեցնում, իսկ մենք արդարութիւն ենք սպասում այս սրիկայ մարդկութիւնից, որին դու հաւատում ես... երպատե՛ս...

Ինչո՞ւ չես գրում:

Համբոյրներով ԳՈ ԱԻԵՏԻՔ:

A. Issakian,
Collegio Armeno.
Carmini

(1) *Տարեգիրք՝ փոսակնքքից: Շատով բացիկ, «Աբեգ»ի խմբագրութիւն, վանքում:*

(2) *Վարդգէս Ահարոնեանին՝ «Մեր ճակատագիրը կախուած է առանձին եւ սերտագործ Ռուսիայից, իսկ ե՞րբ պիտի այդ քաջը պարզւի, խելքս բան չի կարում...»* (14 *Սեպտեմբերի* 1921, *Ազոյ*, «Աւետիք Իսահակեանի նամակները... Վ. Ահարոնեանին», էջ 80):

(3) *Դաղտքականութիւն:*

19

2 դեկտ. [1921], Վենետիկ

Սիրելի Սիմօն,

Ներողութիւն, որ ուշ եմ ուղարկում նիւթերը. այս չորս օր է սաստիկ խարբուխ ունէի, թղթի չէի կարող նայել: Ցետոյ, հապիւ կարողացայ այս 2 կըտորը ուղարկել քեզ. ժամանակս ամբողջովին կլանւած է «Ուստայ Կարօ» վէպի(1) լրացնելով, որ մղձաւանջի պէս նստել է վրաս. շա՛տ նիւթեր ունիմ, բայց ժամանակ չունիմ նրանցով զբաղւելու. ուզում եմ «Ուստայ Կարօն» մի կողմ դնել, որ անցնեմ միւս նիւթերիս, որոնք կարճ են, բայց շա՛տ լաւ, — պոէմներ, պատմւածքներ:

Գրել էի, որ առայժմ չտպես «Բանաստեղծի երազը», մինչեւ պարզւի խնդիրը, որովհետեւ չգիտեմ, թէ Պոլիս որ նիւթն են առել: Ցամենայն դէպս ես արդար եմ վարւել, մեղաւորը նրանք են, որ 4-5 ամիս է ինձ չեն պատասխանում:

Եւ եթէ տպել ես ու հնար չկայ, թող մնայ, կը բացատրենք, եթէ հարկ եղաւ:

Ստացել եմ նամակդ: Վիեննա գալերս այս ձմեռ չեղաւ. վախեցայ, որ երեխան անգործ պարապ անցկացնէ. շնորհակալութիւն քո նեղութիւնների համար:

digitised by A.R.A.R.@

Ցաւում եմ, որ լաւ նիւթեր չկարողացայ տալ քեզ. միւս անգամին. վնաս չունի:

Խնդրեմ գրես Սնարեանի (2) հասցէն, որ չունեմ:

Շուտով ընդարձակ ու հանգամանօրէն նամակ կը գրեմ քեզ: Ի՞նչ կարծիք ունես Յ. Թումանեանի միսիայի մասին (3):

Ես շփոթած եմ, չգիտեմ ի՞նչ ասեմ...

Համբոյրներով եւ բարեւներով

Բարեւներ կնոջիցս քեզի:

Քո ԱՒԵՏԻՔ:

---

(1) Բնագրում՝ այսպէս։

(2) Սնար = Միմէոն Նարինեան, տե՛ս նամակ 35ի ծան. 5, Թերթի խմբագիր։

(3) Յովհ. Թումանեանը, որպէս Հայաստանի Օգնութեան կոմիտէի (ՀՕԿ) նախագահ, 1921 թ. աշնանը ժամանել է Կ. Պոլիս, Նոյեմբերի 4ին, «Երկիր» թերթում (թ. 804) հրապարակել է «Հայաստանի Օգնութեան կոմիտէի յայտարարութիւնը», որ արտատպուած է «Գրական թերթ»ի (Երեւան) 1979 թ. փետր. 16ի համարում։ Յովհ. Թումանեանի դիմաւորած պատուիրակութեան 1921 թ. Նոյեմբերի մի լուսանկարի առթիւ հաւաքելութեանը կամ «միխայինն» անդրադարձել է Թեւիկ Եղիկեանը «Սովետական Հայաստան» հանդէսի 1982 թ. 10րդ համարում, էջ 14 եւ 16:

20

[1922, Վենետիկ] (1)

Սիրելի Սիմօն, հանդէսդ ստացայ. արտաքինը լաւ է. քո գրածներդ կարդացի, ամբողջի մասին յետոյ կը խօսեմ. շա՞տ յաջող է տեխնիկ (2) մասը: Մնում է տարածել. Վենետիկ ո՛չ մի մարդ չկայ, որին տամ: Մի երկու օրինակ կարող ես դրկել Միլան Հայկ Ղազարոսեանին, 26, Foro Bonaparte: Յետոյ Փարիզ, Խանը կարող է հասցէներ տալ. Բերլին, Լօնդոն, Ռումանիա, Բուլղարիա, Պոլիս, Ամերիկա:

Ուղարկում եմ հետեւեալ պոէմս. «Սասմայ Մեր». հիմքը, էութիւնը — ժողովրդական է. բառացի այս է. «Մեր պիտի դուրս գայ, ոամկութիւն բերէ եւ պիտի մարտիրոսի». մնացածը իմ ֆիկցիօնն (3) է, բայց միջավայրը, կոլորիտը (4), պարագաները — accessoire հարապատ է՝ կանական վարիանտներից (5) քաղած:

Խնդրում եմ կարծիքդ գրել, անկեղծօրէն. իմ կարծիքով՝ լաւ բան է, կոտ եւ ուժեղ:

Գրի՛ր, որ Լիպ. Նապարեանն էլ աշխատակցէ. կարող տղայ է, թէեւ ծոյլ:

Մի քանի մանր յանձնարարութիւններ խնդրում եմ՝ ապատ ժամանակդ կատարես.

Լուսահոգի Հայր Բառնաբասի մօտ, 1912 թւից գրքեր էի թողել. հետաքրքրուիր, եւ խնդրէ իմ կողմից, որ պահեն, մինչեւ մի բան կարգադնեմ:

Յետոյ խնդրում եմ. հօնօրարիա (6) հաշւին հետեւեալ գրքերը առնես եւ դրկես. եթէ կարող ես գտնել, Verlag Otto Hende. Halle. — Persischer Divan.

Քո գրածդ գիրքը Eremias — Zweig:

Եւ ռուսերէն (կարծեմ Վիէննա տպած, այդտեղ ռուս գրավաճառ կայ)

digitised by A.R.A.R.@

Կլիչեւսկի, «Ռուսական պատմութեան ձեռնարկ»: Բացի այդ իմացիր տես ի՞նչ կարժենայ նոր տպած Դոստոեւսկու «Կարամազով եղբայրներ» եւ Գոնչարովի «Օբլոմով». — գնները իմանալուց յետոյ, կը գրեմ կառնես. կարծեմ սուղ բաներ են:

Սակայն գրածս առաջին երեք բաները կուպենայի:

Ես շա՜տ կբաղած եմ. շա՜տ բան ունեմ գրելու, անիծեալ «Ուստայ Կարօն» չվերջացրի, որ ուրիշ բաների ձեռք կարկեմ. «Ուստայ Կարօն» անյաղթելի դժուարութիւններ ունի. մեծ է, էպօպէա(7), համայնապարփակ... 700-800 երես... թէեւ աւարտած եմ, բայց անվերջ սրբագրում եմ, գրում, ջնջում, աւելացնում, պակսեցնում... այդպէս է. Տօլստոյը 8 անգամ է գրել «Պատերազմ եւ խաղաղութիւն»... Բայց նա հոգով հանգիստ է եղել եւ ապահով. ապարանքի մէջ նստած, նորապսակ...

Վանքում (Ս. Ղազարի) մի բանաստեղծ. ժողովածու(8) եմ հրատարակում, հին եւ նոր երգերի, մօտ 100 երես, պարտքով: Մոռացար ինձ գրել Նարինեանի հասցէն: Ջերմ բարեւներ Խանին, վարդապետներին, Պ. Երեմեանին: Բարեւներ կնոջիցս, եւ համբոյրներ ինձնից.

ԳՈ ԱՒԵՏԻՔ:

(Շար. 4)

---

(1) *Նամակը, որ անթուական է, Յունուարի սկզբից է, 1922 թ., քանի որ Սիմոն Յակոբեանի խմբագրած «Արեգ» ամսագիրը սկսել է լոյս տեսնել 1922 թուականից:*

(2) *Ձեւաւորում:*

(3) *Պատրանք:*

(4) *Գունաւորում:*

(5) *Տարբերակ:*

(6) *Գրողի վարձատրութիւն:*

(7) *Դիւցազնավէպ:*

(8) «Աշնան ծաղիկներ»:

digitised by A.R.A.R.@

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

ՋԷԿ ԼՈՆԴՈՆ

Ջէկ Լոնդոնը մի երիտասարդ էր, որ դեռ մանկութիւնից ձգտել էր գրող դառնալու, եւ երբ հասել էր իր նպատակին, երբ համաշխարհային ճանաչում էր ձեռք բերել, երբ նրա գրած ոչ մի տողը դեռին չէր մնում, սկսել էր ատել գրելը։

Ջէկ Լոնդոնը ծնուել է 1876 թուին, Սան Ֆրանցիսկոյում։ Նա ուիսմսեայ մի մանկիկ էր, երբ նրա մայրը (Ֆլորա Ուէլմընը) կրկնամուսնացել է Ջան Լոնդոնի հետ։ Վերջինը ուիսմսեայ մանկիկին ընդունել է որպէս իր հարազատ զաւակը, տուել է նրան Ջէկ-Գրիֆիտ անունը եւ իր Լոնդոն ազգանունը։

Ջան Լոնդոնը անանկացած ագարակապան էր։ Նա ընտանիքը պահում էր ձեռքի պատահական աշխատանքով, որ միշտ չէր գտնւում, եւ Լոնդոն ընտանիքը միշտ տեղափոխութեան մէջ էր Կալիֆորնիայի մի քաղաքից միւսը։

Ջէկ Լոնդոնի կեանքը շատ կորտուած է։ Նա մանկութիւն չի ունեցել։ Իր ծնողներին օգնելու համար, նա ութ տարեկան էր, երբ սկսել է աշխատել։ Նա արթնանում էր առաւօտեան ժամը 3·30ին եւ առաւօտեան թերթերն էր ցրւում բաժանորդներին։ Յետոյ գնում էր դպրոց։ Դպրոցից յետոյ ցրւում էր երեկոյեան թերթերը։

Նա 13 տարեկան էր, երբ սկսեց աշխատել պահածոների գործարանում, ժամական ստանալով 10 սենթ, օրական աշխատելով 13 եւ աւելի ժամեր։ Շատ անգամ նա աշխատում էր երկու հերթ անընդհատ։

Տասներկինգ տարեկանին նա գրաւել է խեցգետինների ծովահէն՝ Սան Ֆրանցիսկոյի ծովածոցում։ Նրան տուել էին «Ծովահէնների իշխան» տիտղոսը։ Այս ոչ օրինական գործում նա մի դիշերում վաստակում էր աւելի շատ, քան մի տարում պահածոների գործարանում։ Շուտով նրան սկսել են անուանել «Խեցգետնի ծովահէնների իշխան»։ Սակայն չնայած իր լաւ վաստակին՝ նա իր գործընկերների ապրեցութեան տակ իրեն տուել է դինամոլութեան եւ խմել է այնքան, որ նրա գործընկերները շատ խմելուց փոուել են դինեատան յատակին, իսկ ինքը շարունակել է խմել։ Նրա կենսագիրները պատմում են, որ այդ տասներկինգ տարեկան պատանին այնքան ուժով էր, որ դինետներում, անխուսափելի կռիւների ժամանակ, նա միշտ երկու հոգու գետնով էր տալիս։

Տասնվեց տարեկանին, նա նշանակւում է որպէս հսկիչ Սան Ֆրանցիսկոյի ծովածոցի ձկնորսական գործերի վրայ։ Սակայն նա արդէն սկսել էր ձանձրանալ կեանքից։ Մի դիշեր վճռում է ինքնասպան լինել, եւ կէս դիշերից մինչեւ վաղ առաւօտ սկսում է լող տալ ծովում, մինչեւ որ սպառուեն ուժերը եւ ջրահեղձ լինի, բայց նրան փրկում է յոյն մի ձկնորս։

Տասներեօթ տարեկանին նա դառնում է նաւաստի եւ ստանում է գրական առաջին մրցանակը՝ «Ծովամրրիկը Ճապոնիայի ծովափում» նկարագրական յօդուածի համար։

digitised by A.R.A.R.@

1894 թուին միանում է այսպէս կոչուած «Անօթինների արշաւին Վաշինգտոնի վրայ» ցոյցին։ Նոյն տարում էլ դառնում է թափառական, որի մասին գրել է «Շանապարհին» դիրքը։

Նա քան տարեկան էր, երբ միանում է Ամերիկայի Ընկերվարական կուսակցութեանը (ի՛նքն ասում է, որ երբ 17 տարեկան է եղել, կուսակցութեանը բարոյական օգնութիւնից զատ՝ աւելի քան 100 հազար դոլարի դրամական օգնութիւն է մատուցել)։

Երբ Ջէկը 21 տարեկան էր, բռնուել է ոսկի գտնելու անելով եւ հպարտաւոր այլ ամերիկացիների հետ գնացել է Ալասկա։ Նա մէկ տարի ապրել է Իւկոնում եւ մեծ դժուարութեամբ վերադարձել է Կալիֆորնիա՝ առանց մէկ գրամ ոսկի գտնելու։ Սակայն այդ արկածախնդրութիւնը հարուստ նիւթ է ընծայել նրան՝ նրա հետագայում գրուելիք ստեղծագործութիւնների համար։ Նոյն տարում էլ նա վճռում է գրականութիւնն ընդունել որպէս հիմնական զբաղում։ Սակայն նրա բոլոր գրուածքները եւ են վերադարձուում խմբագրութիւնների կողմից։ Նրա մի պատմուածքը ընդունուում է եւ նրան վճարում են չորս դոլար՝ հինգհազար բառանոց մի պատմուածքի համար։ «Ամէն 1250 բառի համար մէկ դոլար», դառնութեամբ գանգատւում է նա։

Սակայն Ջէկ Լոնդոնը ընկճուողներից չէր։ Նա չարունակում է գրել ու գրել։ Նա վճռել էր գրող դառնալ անպայման։ Նա կարդում էր եւ գրում օրական 18–19 ժամ։ Գրականութիւնը նրա կեանքն էր, ապրելու միակ նպատակը։ Նա ուզում էր անպայման գրող դառնալ։ Ես մի քիչ ծանօթ եմ միջազգային գրականութեանը եւ դեռ չեմ հանդիպել հռչակ եւ անուն ունեցող մի գրողի (թերեւս Մոպասանից բացի), որ այնպէս փարուած լինի գրականութեանը, ինչպէս Ջէկ Լոնդոնը։ Այդպիսիները յաջողում են։ Մենք՝ հայերս, մի իմաստուն առած ունենք, որ ասում է. «Տաչուած քարը գետնին չի մընում», եւ այդպէս էլ եղել է Ջէկ Լոնդոնի հետ։ 1899 թ. ամբողջ Ամերիկայում եւ Եւրոպայում անուն եւ հեղինակութիւն ունեցող գրական մի ամսագիրը հրատարակում է Ջէկի «Հիւսիսի մի ադիւսակիր» խորագրով պատմուածքը եւ հիմք դնում Ջէկ Լոնդոնի գրական անունին։ Ամերիկայի երկնակամարի վրայ գրական մի նոր աստղ է ծնւում։ Սկըսւում են հրատարակուել քրանչանօրէն աշխատող գրողի գործերը, նոյնիսկ ա՛յն գործերը, որոնք ժամանակին վերադարձուել էին առանց ծրարը բանալու։ Ինչ որ Ջէկ Լոնդոնը գրում է, ոչինչ գեռնին չէր մնում։ Նա դարձել էր իր ժամանակի Ամերիկայի ամէնից շատ փնտռուող եւ ամէնից լաւ վճարուող գրողը։ Փառա՜ է, որ նա առաջին գրողն էր ամբողջ աշխարհում, որ կարողացել էր գրական իր վաստակով միլիոնատէր դառնալ։ Սակայն Լոնդոնը միշտ դրամական կարիքի մէջ էր, որովհետեւ նա չէր մերժում ոեւէ մէկին, որ չէր ծուլանում նրանից նիւթական օգնութիւն խնդրելու։ Յետոյ էլ նա ծախսում էր ըստ իր կամայականութիւնների։ Նա իր անձնական բաւականութեան համար կառուցել տուեց մի դրօսանաւ եւ սկսեց նաւարկել հարաւային ծաք ջրերում։ 1913 թուին հիմնայատակ այրուեց առասպելական գումարներով կառուցուած նրա մենատուներ, այն ժամանակ, երբ վերջին չինարար աշխատաւորը նոր էր հեռացել այդ նոր կառուցուած տնից։ Սակայն Ջէկ Լոնդոնը չարունակում էր անօրինակ թափով գրել եւ ծախսել։

Այժմ այնքան էլ պարզ չէ, թէ ինչու Ջէկը, երբ միայն 38 տարեկան էր, սկըսեց իրեն մարմնապէս թէ հոգեպէս ըսպառուած զգալ։ Ի զուր էր բժշկական խնամքը եւ հաստատուած ռնդակարգը։ Նա իրեն յանձնել էր խմելուն։ Նա խմում էր ու խմում։ Նրան մօտիկ գտնուողները նկատում էին, որ նա խմում էր՝ իրեն ինքնամոռացութեան տալու համար։

Սակայն նա չարունակում էր գրել, թէեւ ասում էր, որ նա ատում է գրելը, գրում է միայն դրամի համար։ «Ես պատրաստ եմ գնալ հող փորել եւ այն էլ կրկնակի ժամանակ վատնելով, միայն թէ ժամանակն այնքան դրամ ստանամ, ինչքան ստանում եմ գրելու համար», ասել էր նա։ Մի բան յայտնի է եղել չրջապատի համար, որ նա ատատպել է հոգեկան խոր ապրումներից։ Իր կեանքի վերջին

digitised by A.R.A.R.@

տարում, իր եւ իր կնոջ անունից գրուած մի նամակով՝ նա հրաժարւում է Ամերիկայի Ընկերվարական կուսակցութիւնից։ Այդ մեծ հարուած էր կուսակցութեան համար, քանի որ Զէկ Լոնդոնը այդ կուսակցութեան բարոյական եւ նիւթական սիւներից մէկն է եղել։ Գարդ է, որ ընկերվարական կուսակցութիւնը ուրանալով Զէկի նախկին վաստակը, չդիմացաղերծուած յարձակման է անցնում մեծ գրողի վրայ։ Սակայն հենց այդ կուսակցութիւնը Զէկ Լոնդոնի մահուան երկրորդ օրն իսկ զարմանահրաշ դիմիրամբներ էր գրում հանդուցեալի հասցէին։

Վերջապէս, գալիս է ճակատագրական տխուր օրը։ 1916 թուի Նոյեմբեր 22ի վաղ առաւօտեան մահանում է մեծ գրողը։ Այդ անհաւատալի է թւում, ինչպէս, որ ասելու լինէին, թէ յանկարծակի դադարել է հոսել Նիագարայի ջրվէժը։ Անհաւատալի էր թւում Զէկի մահը։ Նա միայն քառասուն տարեկան էր։ Գեղեցիկ արտաքինով, բարձրահասակ, յաղթանդամ, մարմնական մեծ ուժով։ Նա այնքան հեռու էր մահից, ինչքան առաւօտեան արեւը մայրամուտից։ Նա հիմնադիրն էր կեանքը սիրելու իր վարդապետութեան եւ անոնցիտալի պայքարին՝ ապրելու համար։ Զէկ Լոնդոնի մահը միշտ էլ առեղծուածային է եղել եւ նրա միլիոնաւոր ընթերցողների մօտ հարց է բարձրացուել, թէ ինչո՞ւ նա մեռաւ։

Զէկ Լոնդոնը մահացել է ինքնամոռացութեան մէջ։ Զորս բժիշկների ստորագրութեամբ հրատարակուած զեկուցման մէջ ասուած է, որ նա մահացել է ներքին գործարանների թունաւորումից։ Սակայն, ինչպէս երեւում է, այդ զեկոյցը պատրաստուած է հասարակութեան ուշքին փոշի փչելու համար, ծածկելու համար մահուան բուն պատճառը։

Նախապէս ասացինք, վերջին երկու տարիներում Զէկը շատ էր խմում։ Զէր պահում բժիշկների կողմից հաստատուած ննդակարգը։ Նրան մօտիկ կանգնածները նկատում էին, որ նա ամէն ինչ անում է՝ ինքն իրեն ոչնչացնելու համար։ Ինչպէս երեւում է, նա հոգեկան տանջալից կեանք է ապրել եւ ցանկացել է հեռանալ աշխարհից։ Այժմ ապացուցուած է, որ Զէկ Լոնդոնը ինքնասպանութիւն է գործել։ Իր մահուան գիշերը նա ընդունել է մեծ քանակութեամբ թմրեցուցիչներ եւ վերջ տուել իր ինչքան տառապանքով լեցուն, այնքան հերոսական կեանքին։ Ինչպէս երեւում է, ճիշդ է այն խօսքը, թէ «գրողները չեն մեռնում, եթէ իրենք չեն ցանկանում մեռնել»։

Ռուս կին մի մտաւորական՝ Աննա Ստրունսկի, որ Լոնդոնի հետ բարեկամական յարաբերութեան մէջ էր գտնւում, գրողի մահուան առթիւ ասել է. «Նրա յաջողութիւնը նրա կեանքի ողբերգութիւնն էր»։

ԶԷԿ ԼՈՆԴՈՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Զէկ Լոնդոնը գրականութեամբ է զբաղուել 17 տարի եւ այդ ժամանակամիջոցում ստեղծագործել է 50 հատոր գիրք (պատմուածքների ժողովածուներ եւ վէպեր)։ Միջին հաշուով՝ տարեկան երեք հատոր ստեղծագործութիւն։ Ստեղծագործող մի գրողի համար այդ անհաւատալի է թւում, բայց ոչ՝ Զէկ Լոնդոնի համար, քանի որ նա օրական գրում էր 18 ժամ։ Միջին հաշուով մի գրող օրական կարող է գրել 4 ժամ, որովհետեւ ստեղծագործել՝ նշանակում է մտքով եւ մարմնով սպառուել։ Սակայն եթէ չարքային մի մարդու համար շնչելն անհրաժեշտ է ապրելու համար, ապա՝ Զէկին անհրաժեշտ էր գրելու համար։ Նա շատ էր տառապել գրական ճանաչում ձեռք բերելու համար։

Զէկ Լոնդոնի ստեղծագործութիւններից ոչինչ չի կարելի առանձնացնել, ասելով, որ այդ կամ դրանք երկրորդական են։ Ո՛չ։ Ինչ որ Լոնդոնը գրել է՝ բոլորն էլ լաւ են։ Այդուհանդերձ, այս տողերը գրողի համար նրա վէպերից աքանչելի են՝ «Անտառների կանչը» (1903), «Մովային գայլը» (1904), «Կեանքի սէրը» (1907) եւ «Մարտին Իդենը» (1909)։ Այս վերջին վէպի ազդեցութեան տակ ես գտնւում մեծապէս։

Հասկանալի է, որ ամէն մի մեծ գրող գրական իր փիլիսոփայութիւնն ունի։ Թէ ինչպէս է նա մօտենում մարդուն

digitised by A.R.A.R.@

(ընդհանրապէս), կեանքի ինչպիսի խընդիրներ է արծարծում գեղարուեստական իր գործերում, ինչպէս է նա լուծում այդ խնդիրները։ Գրաքննադատները Զէկ Լոնդոնին վերագրում են քնապաշտական, իրապաշտական եւ վիպապաշտական ուղղութիւններ։ Առաջին երկուսը իրար մօտիկ վարդապետութիւններ են։ Երրորդը՝ միանգամայն հակառակ առաջին երկուսին։ Գրական հասկացողութիւնների այդ զանազանութիւնները առաջացել են գրաքննադատների մօտ, բայց ոչ՝ Զէկ Լոնդոնի։ Ինքը՝ հեղինակը, կեանքը եւ մարդուն իր գործերում նկարագրում էր խիստ իրապաշտական մօտեցումով, այսինքն այնպէս՝ ինչպէս որ մարդը կայ։ Մարդը իր գրական եւ բացատական կողմերով։

Զէկ Լոնդոնն՝ ինքը, անձնապէս աշքի է ընկել իր առնականութեամբ։ Եւ նա էլ իր այսպէս կոչուող Հիւսիսային պատմուածքներում, մարդուն նկարագրում է առնական գծերով։ Դրանք, այդ «ոսկի փնտռողները գեհենական տառապանքներ են կրում, ո՛չ այնքան հարստանալու համար, ինչքան յարատեւելու համար»։

Մինչեւ Զէկ Լոնդոնի հրապարակ գալը, Զէկ-Լոնդոնեան գրականութիւն չկար։ Նա առաջինն էր, որ հիմք դրեց այդ գրականութեանը։ Առաջներում թըւում էր, թէ գրողները նստած են «փըղոկրեայ աշտարակներում» եւ գրում էին ինչպէս իրենք էին ցանկանում ու հեռանում էին իրական կեանքի խնդիրներից։ Զէկ Լոնդոնը գրել է՝ ելնելով իր անձնական կեանքից, իր անձնական կեանքի փորձից։

Զէկ Լոնդոնի գրականութիւնը հեռու է մեղկ ու գաղջ քաղքենիական կեանքից։ Իր ստեղծագործութիւններում նա ներկայացնում էր՝ մարդասիրութիւն, սէրը դէպի կեանքը, պայքարի յամառութիւն եւ անզարտուղութիւն։ Պարտուելու գաղափարը Զէկ Լոնդոնը չէր ընդունում։ Ցուսահատութիւն կեանքից՝ ո՛չ՝ինպէս։ Բայց նրա լաւագոյն վէպի՝ «Մարտին Իդեն»-ի գլխաւոր գործող անձը ինքնասպանութիւն է գործում։ Մարտին Իդենն հենց ինքը՝ Զէկ Լոնդոն էր, որ նոյնպէս ինքնասպանութեամբ վերջ տուեց իր կեանքին, երբ նա իր գրական յաջողութիւնների գագաթնակէտին էր գտնուում։

Ինչո՞ւ։

Դժուար է ասել։ Որովհետեւ մեզ դեռ չի տրուած (եւ երբեք էլ չի տրուելու) մարդկային հոգին սպառիչ կերպով ճանաչելու կարողութիւնը։ Մենք տեսնում ենք միայն հոգիների դրսեւորումները եւ ըստ այնմ դասակարգում հոգիները։ Մենք երբեք չենք կարողանում թափանցել մինչեւ հոգիների յատակը։ Ինքնասպանութիւնը հոգեկան դրսեւորում է, եւ մենք միայն այդքան գիտենք, բայց մենք չգիտենք դրդումն ինքնասպանութեան։ Զէկ Լոնդոնը, այդ թափառաշրջիկ ու նաւաստի տղան, թւում էր, թէ ամբողջ հոգիով փարուել էր գրականութեանը, եւ անհուն զոհողութիւններով ղրոդ էր դարձել։ Նա հայիւ քառասուն տարեկան էր, բայց ասանկօր տարուայ ընթացքում մեզ թողել է յիսուն հատոր գրականութիւն, որը կարող էր հարիւր հատորի հասնել, եթէ չդիմէր ինքնասպանութեան։

Անշուշտ, ինքնասպանութիւնից ուրիշ չատ վնասուողը Զէկ Լոնդոնն է եղել։ Բայց վնասուել ենք նաեւ մենք՝ ընթերցողներս։ Զէկ Լոնդոնի պէս տաղանդ յաճախ չէ, որ ծնուում է։

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՍՄՈՒՆՔԻ ԱՐՈՒԵՍՏԸ

ԵՎ

ՏԻԿԻՆ Թ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Ասմունքը, իբրեւ արտասանական արուեստի լայն դրսեւորում եւ հիմքը դերասանական արուեստի, իր լայն տեղը ունեցած է հին Ցունաստանի մէջ:

Ասմունքները կամ ասացողները դրեթէ գիւղ գիւղ եւ քաղաք քաղաք կը պտըտէին եւ կը հրամցնէին իրենց արտասանական արուեստը՝ պատմելով յոյն դիւցազուններու կեանքէն առնուած առասպելներ, որոնք հետզհետէ դրի առնուելով՝ կը ստեղծէին հին Ցունաստանի թատրոնը:

Պատմութիւնը կը վկայէ, որ ինչպէս յոյները եւ այլ ժողովուրդներ, նաեւ հայերը ունեցած են իրենց ասմունքողներն ու ասացողները, ուրիշ խօսքով՝ բանաւոր արուեստը: Այդ գործօններուն շնորհիւ մեր ժողովուրդը պահած է իր բանահիւսութիւնը, ինչպէս «Սահակի ծնունդը», «Հայկ եւ Բելը», «Տորֆ Անգեղը», «Արա Գեղեցիկը», եւայլն:

Հայաստանի մէջ, այսօր, ասմունքը ունի լայն տեղ: Անիկա բեմական եւ դերասանական արուեստ է, Ասմունքողները կը հետեւին արտասանական արուեստի յատուկ դասընթացքներու եւ ասպարէզ կը բացուի իրենց խիստ բնութիւններէ եւ ուժ: Շնորհիւ անոնց ելոյթներուն՝ մեր բանաստեղծական գոհարները, ինչպէս եւ արձակ գրականութիւնէն յատկանշական նմոյշներ, լայն տարածում գտան ժողովրդական խաւերուն մէջ:

Սփիւռքի մէջ եւս ասմունքի արուեստը անտես չէ առնուած: Գէյրութ թէ այլուր յաճախ կը կազմակերպուին ասմունքի երեկոներ, որոնք բեմական մեր մեծ արուեստներուն չափ հետաքրքիր ուներ:

Այս մարզին մէջ նոր ուժ մըն է Եգիպտահայ Տիկին Շաքէ Յովակիմեան, որ Կիրակի 10 Ապրիլ 1983 կէսօրէ առաջ ժամը 10.30ին, «Համազգայինի Նշան Փալանճեան ձեմարանի Վասպուրական սրահին մէջ, եւ Երեքշաբթի 12 Ապրիլ երեկոյեան ժամը 7.30ին «Յակոբ Տէր Մելքոնեան» հանդիսասրահին մէջ ունեցաւ իր ասմունքի ելոյթները:

Յայտագրին առաջին բաժինին մէջ Տիկին Յովակիմեան յաջորդաբար արտասանեց «Բարեւ» (Պարոյր Սեւակ), «Հաշուեյարդար» (Վահան Թէքէեան), «Հրաշադար Խորիսխ» (Ժաք Ս. Յակոբեան), «Գիւտին փառքը» (Սիամանթօ), «Գլխապտոյտ» (Պարոյր Սեւակ), «Անբռնի զանգատուն» (Պարոյր Սեւակ), «Հայ մամիկին ազօթքը» (Մ. Իլխան), «Առանց ինձ» (Գէորգ Եմին), «Գաղթականէս բաղմամի մը վազանցուկ» (Եդուարդ Պոյաճեան), «Նամակ առ Հայաստան» (Ալիխա Կիրակոսեան), «Խենթը» (Մատթէոս Զարիֆեան), «Հայ դաշտերու պաղատանքը» (Սիամանթօ) եւ «Անոյշ» (Յովհաննէս Թումանեան) բանաստեղծութիւնները:

Լաւ էր ընտրուած Պ. Սեւակի «Բարեւը», որուն մեկնաբանութիւնը այնքան նրբութեամբ էր պատրաստուած, որ Շաքէ Յովակիմեան յաջող-

digitised by A.R.A.R.@

ցաւ զարմացնել՝ պահելով հեղինակին խոստքերուն երբեքանգները եւ մտախոհական ու մարդկային բովանդակութիւնը։ «Բարեւնդին առիթով ցուցաբերած թափը պահուեցաւ Թէքէեանի «Հաշտեհարդար» քերթուածին պարագային եւս։ Ընենք անմիջապէս, որ յիշեալ երկու բանաստեղծութիւնները չատ ներգաշնակ էին Յովսէփեանի արտայայտչական ոճին, բայց նոյնը կարելի չէ ըսել միւս բանաստեղծութիւններուն առիթով։ «Հրաշագործ խարիսխ», «Գիւտին փառքը», «Գելխապտոյտ», «Անուրջի զանգակատուն», «Հայ մամիկին աղօթքը», «Առաց ինձ եւ «Հայ դաշտերու պղտոտանքը» քերթուածներուն առիթով, առաջին երկու քերթուածներուն մէջ ամուսնորէն ցուցաբերած ներգաշնակութեան կապը գրեթէ թուլցաւ։ Արուեստագիտուհին երկին հուաձեց հանդիսականներուն համարումը, երբ արտասանեց «Գագաթնակէտ բաղմամի մը վազանցուկ» եւ «Նամակ առ Հայաստան» քերթուածները։

Ինչ կը վերաբերի Մարթէոս Զարիֆեանի «Խնձոր» բանաստեղծութեան, Տիկին Շաքէ Յովսէփեան եղաւ իրական յայտնութիւն մը։ Ան այնքան ներքեանգներ դրսեւորեց եւ յուզում առաջացուց, որ արհեստավարժ ամուսնորդնե՛ր անգամ դժուար թէ կարենան գերազանցել զինք։ «Խնձոր»ին ընտրութիւնը կը համընկնէր ամուսնորդ Տիկին Շաքէ Յովսէփեանի մեծին եւ ոճին, բեմական կեցուածքին եւ արտասանական չեշտին։ Զարիֆեանի խօսքի սահունութիւնը, ոճին պարզութիւնը, վիճակներուն ներքութիւնը եւ մթնոլորտը լրիւ հաղորդուեցաւ ունկնդիր-հանդիսականին։ Յովսէփեան բեմէն սնանաւ, սնանաւէն բեմ թիթեռնիկ կը փետէր, կը խեղդէր, ապա դ'ազատէր, ծաղիկ կը փետէր, կը ծիծաղէր, կը ժպտէր, եւ կը պատմէր «Հիւանդ տղուն, ամպոյն ազուն» հոգին պատմութիւնը, այսինքն՝ կը խօսէր բանաստեղծութիւնը։

Յայտագրին երկրորդ մասով՝ Տիկին Շաքէ Յովսէփեան մեկնաբանեց «Անոյշը։ Ան Անոյշի տարազով յանդգնաբար խաղաց Անոյշի, Սարոյի, Մուրնի կերպարները եւ դերասանցօրէն մարմնաւորեց Անոյշի մօր դերպարը։ Մասամբ հայ գիւղէն ներս ու պատմեց այն բոլորը, զոր մեր բանաստեղծը գրած էր իր գործին մէջ։

«Անոյշի» կատարողութեան մէջ՝ բեմական յատակ ձայնի կողքին՝ կար նաեւ դերասանական բարձր արուեստ։ Այս երկրորդ բաժնին մէջ միակ խառը համեմատող տարրը «Անոյշ» օպերայէն օգտագործուած երգային եւ երաժշտական երկոք մասերն էին։

Տիկին Շաքէ Յովսէփեան ունի երկար լուռ, ժամանակ ներքեանգներ, բեմական կեցուածք եւ արուեստի հասկացողութիւն։

Իր ոճը կը յարմարի քնարական կտորներուն։

Հեռատրական բնոյթ ունեցող քերթուածները չեն համապատասխաներ իր խառնուածքին։

ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

«ՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՒ ԱՐԴԻ ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ»

(ԶԱՐԵՀ ՄՈՒՔԱՖԵԱՆ)

Վերջերս, «Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարանէն լոյս տեսաւ Ֆրանսահայ յայտնի գեղանկարիչ Զարեհ Մուքաֆեանի մէկ ուշագրաւ աշխատասիրութիւնը՝ «Նկարչութեան դասական դպրոցները եւ արդի նկարչութիւնը» խորագրով։

Գիրքը կը բաղկանայ 304 էջերէ, պատկերազարդ է եւ ունի խնամուած ու բարձրորակ տպագրութիւն։ Անիկա կը բաժնուի 24 գլուխներու, «Մուտքէն մինչեւ «Եզրափակում»։

Մուքաֆեան «Մուտքին» մէջ կը փորձէ բացատրել արուեստի նպատակն ու զարգացումը եւ կ'անդրադառնայ գեղագիտական կարեւոր հարցերու, որոնք հետագային աւելի մասնաւոր կը դարձնեն իր մեկնաբանութիւններն ու վերլուծումները։ Ապա նիւթ կը դարձնէ խալային վերածնունդի շրջանը եւ, նկարչական համաշխարհային միւս նշանաւոր հանգրուաններէն անցնելով՝ կը հասնի գրեթէ մինչեւ մեր օրերը, մինչեւ քառասունական թուականները, դլուխներէն իւրաքանչիւրին մէջ ներկայացնելով արուեստի զարգացման մը կամ հասանքի մը։ Դպրոցներուն եւ հասանքներուն ետեւեն՝ հեղինակը կը ներկայացնէ տուեալ հասանքներուն պատկանող մեծանուն գեղանկարիչներուն կեանքն ու գործը, նոյն տեսնելիները վերլուծելով անոնց կարեւորագոյն կտաւները։

Զարեհ Մուքաֆեանի հատորը կ'ընդգրկէ բացառաբար Եւրոպայի նկարչութեան ասպարէզները։ Պատասխան մէջբերումներէն ի յայտ կու գայ, որ հեղինակը օգտագործած է բաւականին լայն աղբիւրներ, որոնք իր աշխատասիրութեան կու տան լրջութիւն մը։ Ուշագրաւ են յատկապէս Վազարիի, Զարլզ Գլանքի, Ռոմէն Ռոլանի, Փոլ Վալերիի, Տիարոյի, Անարէ Գրիքոնի եւ մի քանի այլ դէմքերուն մասնաւորներէն օգտագործած Մուքաֆեանի բնորոշումները։

Մուքաֆեանի այս գործը իր տեսակին մէջ եզակի հրատարակութիւն մըն է հայ իրականութեան համար։ Արուեստի եւ արուեստագէտներու

digitised by A.R.A.R.@

ԶԱՐԵՀ ՄՈՒՔԱՖԵԱՆ

մասին առանձին հատորներ եւ յօդուածներ չատ հրատարակուած են հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, բայց նկարչութեան վրայ նեւուած նման ընդհանուր ակնարկի մը բացակայութիւնը խիստ զգալի էր։

Շուրջ քսան տարի առաջ, խոնաստեղծ ու նը-կարիչ Եղիա Գասպարեան կատարած էր նման փորձ մը, որ լոյս տեսաւ «Բազին» ամսագրին մէջ։ Եւրոպական նկարչութեան նոյն ժամանակաշրջանը ընդգրկող Գասպարեանի ուսումնասիրութիւնը գժբախտաբար ցարդ հատորի չէ անցած։ Մուքաֆեանի գործին հետ համեմատած՝ Գասպարեանի ուսումնասիրութիւնը յանախ կենսագրական յաւելեալ տեղեկութիւններ կը հաղորդէ ընթերցողին, տակաւին ներկայ աշխատասիրութիւնը, վերլուծման եւ մեկնաբանութեան առումով՝ աւելի շահեկանութիւն կը ներկայացնէ։ Մուքաֆեան կը ձգէ այն տպաւորութիւնը, որ այս գիրքը գրած է նկարչական դպրոցներուն ու մեծ նկարիչներուն որոշ չափով ծանօթ ընթերցողին համար։

Հակառակ անոր, որ աւարկայական ըլլալու զօրաւոր ձգտում մը կայ գործին երկայնքին ու ոճին մէջ, հեղինակը ըլլալով գեղանկարիչ եւ ունենալով իր սեփական ըմբռնումները արուեստի մասին, իր հիացմունքներուն կողքին, երբեմն նուրբ հեգնանքով կը յայտնէ իր բացասական կարծիքը այս կամ այն դպրոցին կամ գեղանկարիչին հանդէպ։ Մերձեցման այս կերպը աւելի հաւասարի ու հաճելի կ'ընծայէ գործը։ Օրինակ, Տատարկէվիչ անդրադառնալով՝ կ'ըսէ.

«Պրքքոն Տատանեանու ազմուկէն ձանձրացած՝ կը հեռանայ։ Վերջ կը գտնէ Պրքքոն-Ցարա սիրաբաձութիւնը, ան՝ Հոգեվարքի մէջ կը մտնէ Նիհիլիզմի ոգին»։

Եւ կամ Տալիի մասին կը գրէ.

«Մեր օրերու Նարկիսը յաւակնոտ է ու յոխորտացող»։ «Բաֆայէլ նախ, յետոյ՝ Տալի»։ «Երկնայինը (divin) Տալի» խօսքերով կը յայտնէ իմիճամեծարանի սէր»։

Մուքաֆեան ինք լաւագոյնս կը բնութագրէ իր գործը՝ սա խօսքերով.

«Արագ պտոյտ մը կատարեցինք ժամանակին ու միջոցին մէջ։ Զանացինք վերլուծել մայր դպրոցներու ցեղային նկարագիրը՝ իրենց ամենայատկանշական արուեստագէտներուն գործերը մեկնաբանելով»։

Իսկապէս, ընթերցողը «արագ պտոյտ մը կը կատարէ» գեղանկարչական անդաստանի մէջ, հաղորդ դառնալով նկարչութեան դասական դպրոցներուն եւ արդի ձգտումներուն։

Մ. Հ.

digitised by A.R.A.R.@

«ԱՍՊԱՐԷԶ»Ի 75ԱՄԵԱԿԸ

Այս տարի, 1983ին, կը լրանայ «Ասպարէզ» օրաթերթի հիմնադրութեան 75ամեակը։

75 տարիներ առաջ, 1908ին, Ֆրէզնոյի մէջ խումբ մը հեռատես ազգայիններ քով քովի գալով՝ որոշեցին իրենց նպատակը բերել հայութեան ազգապահպանման եւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու պաշտպանութեան աշխատանքները։

Առնք Փորձին հայ մամուլի համար։

«Ասպարէզ», որ հիմնուած էր իբրեւ շաբաթաթերթ, ժամանակի ընթացքին դարձաւ եռօրեայ, երկօրեայ եւ այսօր Արեւմտեան Ամերիկայի տարածքին հրատարակուող միակ օրաթերթն է, հայերէն լեզուով, ունենալով նաեւ անգլերէն լեզուով լոյս տեսնող նոյնանուն շաբաթաթերթը։

Գաւառաօրէն եւ համազգութիւնին տարողութեամբ նէլու համար «Ասպարէզ»ի հիմնադրութեան 75ամեակը, խմբագրութիւնը որոշած է կազմակերպել շարք մը հրապարակային ձեռնարկներ եւ հրատարակել «Ասպարէզ»ի բացառիկ թիւ մը։

Ս. ՍԻՄՈՆԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Բազմավաստակ մատուռական Սիմոն Սիմոնեանի գրական, բանասիրական, մանկավարժական, խմբագրական եւ հրատարակչական քառասնամեայ գործունէութեան յոբելեանը տեղի ունեցաւ է Լոս Անճելըսի մէջ, կիրակի, 13 Մարտին, կազմակերպութեամբ Լոս Անճելըսի Գրական խմբակին։

Հանդիսութեան բացումը կատարած է Գէորգ Գուրեղեան։

Երուանդ Գոշունեան ներկայացուցած է Սիմոնեան գրողը, արձակագիրը, իսկ Վահան Թեքեան՝ Սիմոնեան մարդը, նոյն ատեն անգրագէտներով «Սփիւռք» շաբաթաթերթի կատարած գործին։ Տոքթ. Ճ. Սաղբեան ներկայացուցած է Սիմոնեանը իբրեւ խմբագիր-հրատարակիչ, իսկ յոբելեարի Անթիլիասի դպրեվանքի դասընկերներէն Զարեհ Զարգուն վերլուծած է անոր բանասէրի վաստակը։

Հանդիսութեան ուարտին խօսք առած է Սիմոն Սիմոնեան։

Հանդիսութեան ընթացքին, գեղարուեստական յատակագրի կողքին, ընթերցումներ կատարուած են Սիմոնեանի ստեղծագործութենէն, ինչպէս նաեւ գիրք եւ հեռադիրներ կարդացուած են՝ Գարեգին Բ. կաթողիկոսէն, կաթողիկէ հայոց պատրիարք Յովհաննէս ԺԸ. Գասպարեանէն եւ մատուռական ու ազգային դէմքերէ։

ԳՐԻԳՈՐ ՁԷՐՔԷԶԵԱՆԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԸ

30 Մարտէն 9ը Ապրիլի մէջեւ, կալիֆ էֆրով ա'Ալիթոթի մէջ տեղի ունեցաւ Ֆրանսահայ նկարիչ Գրիգոր Ձէրքէզեանի ցուցահանդէսը։

«Հայկական Իմոնիներ» պայմանական խորագիրի մը տակ կը ցուցադրուէին 35 պաստառներ, որոնք կը ներկայացնէին հայկական մանրանկարչութենէն վերցուած այլազան մոթիւներ՝ մեսրոպեան վրայ գծուած։

Առաջեալներ, այրուբենի տախտակներ, ոսկիներ, թռչուններ, ձուկեր, եւայլն, կը փորձէին հայ թէ օտար հանդիսատեսը փոխադրել հայկական մանրանկարչութեան եւ զարդարուեստի ինքնուրոյն աշխարհին մէջ։

Գործ՝ Գ. Ձէրքէզեանի

digitised by A.R.A.R.@



ՊՈՒԵՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Ապրիլ 7ին կատարուեցաւ բացումը Պուենոս Այրէսի Գիրքի Յրդ միջազգային ցուցահանդէսին՝ պետական դէմքերու, նախարարներու եւ հոծ բազմութեան մը ներկայութեան:

Միջազգային սոյն ցուցահանդէսին իր մասնաւոր տեղը գրաւած է թիւ 234 տաղաւարը՝ նիւթակայացուած «Արմենիա» մշակութային գործակցութեան կոչմէ: Այցելուներուն մասնաւոր ուշադրութեան արժանացած է անոր մուտքին՝ ոսկեզօծ տառերով հայկական այբուբենը ներկայացնող պատատ մը եւ պատմական Հայաստանը ներկայացնող քարէս մը:

«Արմենիա» օրաթերթը իր Դը Ապրիլի թիւը (8 էջ, սպանիերէն), ամբողջութեամբ նուիրած է ցուցահանդէսին, ուր տեղ գտած են առանձին յօդուածներ հայ եկեղեցւոյ, հայ լեզուի եւ գրականութեան, պատմութեան, ճարտարապետութեան, օփիւքահայութեան եւ ներկայ Հայաստանի մասին:

Ցուցահանդէսի դասախօսութիւններու սրահին մէջ Ակուռքին Դաւիթեան եւ Ֆելիքս Գուլմէճեան խօսած են հայկական բանաստեղծութեան մասին, իսկ մէկ այլ հանդիսութեան՝ Սարգիս Աւճեան դասախօսած է հայ արուեստի մասին, նոյն ատեն ցուցադրելով լուսանկարային նմոյշներ:

Իսկ Ապրիլ 23ին սպանացի ծանօթ լրագրող Խոսէ Անթոնիո Կուրրիարան ներկայացուցած եւ մեկնաբանած է Հայկական Հարցին նուիրուած իր «Լա Գոմպաս» հատորը:

ԽԱԼԻԼ ՀԱՌԻԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

Ուսուցիչներու օրուան առիթով, Լիբանանեան համալսարանի ուսուցչանոցի չրջանաւարտից միութիւնը ոգեկոչեց յիշատակը բազմամեայ ուսուցիչ, բանաստեղծ եւ մտաւորական Խալիլ Հառիի, որ 1982ին անձնասպան եղաւ իր բնակարանին մէջ՝ իբրեւ բողոք իսրայէլեան ներխուժման նկատմամբ միջազգային մամուլին եւ հանրային կարծիքին ցուցաբերած անտարբերութեան:

Լիբանանեան ժամանակակից բանաստեղծութեան կիզբոնական դէմքերէն մէկը նկատուող այս վաւերական դէմքին դասախօսական եւ գրական վաստակին մեծարման հանդիսութեան բացումը կատարեց էրթիական նախարար Խամ Խուրի, Զորեքշաբթի, 9 Մարտ 1983, կէսօրէ առաջ ժամը 11ին, ուսուցչանոցի առաջին բաժանմունքի ան ամպիոնէն, ուրկէ Հառի դասախօսած էր երկար տարիներ: Նախաբար Խուրիի բացման խօսքէն ետք, բեմ բարձրացաւ տոքթ. Ռատիկ Ֆանուն, որ չրջանաւարտ ուսանողներու միութեան անունով բարձր գնահատեց վաստակը դասախօս, մտաւորական եւ բանաստեղծ Խալիլ Հառիի: Ապա, հանդուցեալ բանաստեղծի ընտանիքին անունով եւլոյթ ունեցաւ իր եղբայրը՝ քանանագտա Էլիա Հառի, որուն յաջորդեց ժորժ Հրաբը եպիսկոպոսի դասախօսութիւնը՝ «Էրիական Ազգաց խորհրդանիշը՝ Խալիլ Հառիի բանաստեղծութեան մէջ» նիւթով:

digitised by A.R.A.R.@

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ

«Սովետական Հայաստան» ամսագիրի այս տարուան երրորդ համարին մէջ, հայրենի բառարանագիր Աշոտ Սուքիասեան ստորագրած է «Հայ բառարանագրութեան նուաճումները» խորագրեալ յօդուած մը։

Անգրաժանելի եւ այն երեւոյթին, որ հայերէն բառարանները նախապէս լոյս կը տեսնէին Հայաստանէն դուրս՝ Վենետիկի, Պոլսոյ, Փարիզի, Գոպիրէնի, Գահիրէի եւ այլ քաղաքներու մէջ, Սուքիասեան կը նշէ, թէ վերջին տասնամեակներուն Հայաստան դարձած է հայ բառարանագրութեան կեդրոնը, ուր կազմուած եւ հրատարակուած են հրապարակի վրայ գտնուող ամէնէն կարեւոր եւ լուսաւոր բառարանները։

1944–45 ժամանակաշրջանին լոյս տեսած Ստեփան Մալխասեանցի քառահատոր «Հայերէն բացատրական բառարան»ը կը պարունակէ հայ լեզուի լոյսը դրսեւորումներուն՝ գրաբարի, միջին հայերէնի, բարբառներու, արեւելահայ եւ արեւմտահայ ասրերակներու մօտ 120 հազար բառ եւ դարձուածքային միաւոր։

Շարունակելով, Սուքիասեան կը նշէ Գիտական Ակադեմիայի Հրաչեայ Աճառեանի անուան հայ լեզուի ինստիտուտի աշխատակիցներու ջանքերով կազմուած «Ժամանակակից հայոց լեզուի բառարան»ը, որուն առաջին հատորը լոյս տեսած է 1969ին, իսկ վերջինը՝ 1980ին։ Այս բառարանը կը պարունակէ արդի հայերէնի աւելի քան 125 հազար բառ եւ դարձուածքային միաւոր։

Ցիշեալ գործը կը ձգտի ընդգրկել հայ գեղարուեստական ու գիտական գրականութեան, պարբերական մամուլի եւ հրապարակագրութեան մէջ լայն տարածում գտած այն բառերը, որոնք տեղ չեն գտած Ստ. Մալխասեանցի վերեւ յիշուած բառարանին մէջ։

Ապա, 1976ին, լոյս կը տեսնէ Դ. Ադայեանի «Արդի հայերէնի բացատրական բառարան»ը, որ կը պարունակէ մօտաւորապէս 136 հազար բառ եւ 10 հազար դարձուածքային միաւոր։ Կ'ընդգրկէ հայ գեղարուեստական, քարգմանական եւ գիտական գրականութեան, հրապարակագրութեան, կարեւոր դասագիրքերու, դրաւոր այլ ազբիւրներու, ինչպէս նաեւ՝ իսօսակցական լեզուի բառային ու դարձուածքային միաւորներ։

Ցիշեալ հրատարակութիւններուն զուգահեռ, վերջին տասնամեակներուն, նաեւ հրապարակ կ'իջնեն մասնագիտական յատուկ բովանդակութիւն ունեցող այլ բառարաններ։ 1942–1962 ժամանակաշրջանին կը հրատարակուի բառարանագրութեան մէջ եզակի նշանակութիւն ունեցող Հ. Աճառեանի 5 հատորնոց «Հայոց անձնանունների բառարան»ը, որ բանաբերական-լեզուաբանական եւ պատմական-հանրագիտական բառարաններու սկզբունքներու ներքաշնակութեամբ սահմանուած բառարանի նոր տեսակ մըն է, ուր կը տրուին հայերէն անձնանուններու թէ՛ լեզուաբանական-տուգաբանական եւ թէ պատմական-մանագիտական, մասնագիտական խիստ կարեւոր եւ մանրամասն տուեալներ ու բնութագրումներ։

Այս ծիրին մէջ, 1975ին լոյս կը տեսնէ Աշոտ Սուքիասեանի եւ Մ. Գալստեանի «Հայոց լեզուի դարձուածքային բառարան»ը, որ կը պարունակէ 20 հազար դարձուածքային միաւոր, ժամանակակից հայերէնի դարձուածքներու գրեթէ ամբողջութիւնը եւ դաւառական-բարբառային դարձուածքային այն միաւորները, որոնք լայն կերպով թափանցած են գեղարուեստական գրականութեան մէջ կամ լայնօրէն կ'օգտագործուին ժողովրդային խօսակցութեան պարագային։

Բառարանագիտական-իմաստաբանական բառարաններու մէջ իր ուրոյն տեղը կը գրաւէ 1967ին լոյս տեսած Ա. Սուքիասեանի «Հայոց լեզուի հոմանիշներու բառարան»ը, որ կը պարունակէ 83 հազար հոմանիշ բառ եւ դարձուածքային միաւոր։ Իր տեսակին մէջ նոյնքան ուշագրաւ հրատարակութիւն մըն է Հ. Բարսեղեանի «Հայերէն ուղղագրական-ուղղախօսական, տերմինաբանական բառարան»ը, ուր լայն կերպով գործածուող բառերու եւ յապաւումներու կողքին, նաեւ կան բարբառային եւ որոշ թիւով հինցած բառեր, մասնագիտական եզրեր՝ իրենց գիտական, ուղղագրական, բերականական եւ իմաստային բնութագրումներով։

Տառամեակներու ընթացքի աշխատանքի արդիւնք հանդիսացող Աճառեանի «Հայերէն արմատական բառարան»ը (Ա. հրատարակութիւն՝ 1926–1938, ութը հատոր, ապակեռիպ, Բ. հրատարակութիւն՝ 1967–1980, շորս հատոր), իր կարգին, կը հանդիսանայ ոչ միայն այս ծեծանուն հարուն աշխատասիրութիւններուն գլուխ-գործոցը, այլեւ՝ հայ բառարանագրութեան պակին ու պարծանքը, ինչպէս գիտէ կոչ տալ Ա. Սուքիասեան։

Բառարանը կ'ընդգրկէ հին մասնագիտութեամբ ուսանողուած 11 հազար բառ։ Ցիշեալ, որոնք կ'ենթարկուին ստուգաբանական, հնչիւնային, իմաստաբանական-բացատրական, բառագործական, բառակազմական եւ բարբառային օրինաչափութեան խոր եւ բազմակողմանի քննութեան։

Նշելէ եւս առաջ՝ հայերէն-հայերէն եւ երկլեզուեան այն բառարանները, որոնք հայերէնը կը կամարկեն եւրոպական եւ արեւելեան շարք մը լեզուներու հետ, իր յօդուածին վերջին բաժնին մէջ Ա. Սուքիասեան կ'եզրակացնէ. «Այսպիսով հայ բառարանագրութիւնը ծառայում է հայ ժողովրդի լեզուական եւ ընդհանրապէս մշակութային պահանջմունքները բաւարարելուն, մեծապէս նպաստում է իւրացնելու մայրենի լեզուի, ինչպէս եւ օտար լեզուների անուպա գանձերը եւ դրանով իսկ մեր ժողովրդին տանել հազարդակից դարձնում համաշխարհային գիտութեան, տեխնիկայի, արուեստի եւ գրականութեան հարստութիւններին, համամարդկային գաղափարներին»։

digitised by A.R.A.R.@

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՆ

Մեր նախորդ թիւին մէջ լոյս տեսած Մովսէս Ս. Հերկելեանի «Եղբայրութիւն մը պատմութիւնէն» անուն յօդուածը կը խօսէր նաեւ Մինաս Աւետիսեանի արուեստանոցը հրոյ ճարակ դարձուցած հրդեհին մասին։ Ողջ հայութիւնը ցնցած այդ աղէտին առիթով մը անդրադարձաւ Ուիլիըմ Սարոյեանը եւս, հազորդելով օտ արտասուչ վիճակութիւնը, որ երեւցաւ «Գրական թերթ»ի 20 Օգոստոս 1980 թուականի համարին մէջ։—

«Այնուհետեւ, անդրադառնալով Մինաս Աւետիսեանի տանդապարծութիւնը եւ բարձր գնահատելով այն, Սարոյեանը Սարեանին եւ Աւետիսեանին համարում է հոգեւոր հայր ու որդի եւ չիշատակում, թէ քարոյական ու մարդկային ինչպիսի՛ նեցուկ է եղել Սարեանը իր կրտսեր արուեստակցի համար։ «Միեմսի··· արուեստանոցում ծագած հրդեհը նրան գրեթէ բոլոր նիւթերի ստեղծած աշխատանքների լուսագոյն մասին», — գրում է նա։ — Երբուներն նէրկեր եւ վրձիններ ուզարկեց նրան ու գրեց։ «Մինաս, ընդունիր սիրով եւ աշխատիր»։ Եթէ Սարոյեան Սարեանը քարհուրդ չտար իր ազգ խօսքով եւ եթէ Մինաս Աւետիսեանը չուներներ իր մէջ այդ դժբախտութիւնից հլը գանելու ժու�ը, անհրաժեշտութիւնը եւ պահանջը, ապա մենք բոլորս չէին ունենայ Մինաս Աւետիսեանի ազանչելի նըկարները, որոնց նշանակութիւնն ու արժէքը կ'աճեն անցնող ժամանակի հետ»։

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

ԲԱՌԸ...

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Հրատարակութիւն՝ Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարանի, Պէյրութ, 1983, 68 էջ, գին՝ 15 լ. ոսկի:

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

ՅԱՅԳԱԹԻԹԵՌ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Հրատարակութիւն՝ Սարգիսեան տպարանի, Պէյրութ, 1983, 82 էջ, գին՝ 25 լ. ոսկի:

digitised by A.R.A.R.@

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՑԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու

ՎԱՀԷ ԲՐՈՒՏԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN

Tel. 296898

digitised by A.R.A.R.@